1. Գտնել եռանկյան սրունքի երկարությունը:

- 1) 9 սմ                      2)  $6\sqrt{3}$  սմ                      3)  $7\sqrt{3}$  սմ                      4) 10 սմ

2. Գտնել եռանկյան հիմքի երկարությունը:

- 1) 16 սմ                      2) 18 սմ                      3) 20 սմ                      4) 15 սմ

3. Գտնել եռանկյան մակերեսը:

- 1)  $30 \text{ սմ}^2$                       2)  $27\sqrt{3} \text{ սմ}^2$                       3)  $30\sqrt{2} \text{ սմ}^2$                       4)  $40 \text{ սմ}^2$

4. Գտնել հիմքին տարված բարձրության երկարությունը:

- 1) 5 սմ                      2) 6 սմ                      3)  $3\sqrt{3}$  սմ                      4)  $4\sqrt{2}$  սմ

7. Հավասարասրուն եռանկյան հիմքին տարված բարձրությունը 5 է, իսկ սրունքը՝ 10:

- Գտնել եռանկյան հիմքին առընթեր անկյան աստիճանային չափը:
  - 1)  $45^0$
  - 2)  $60^0$
  - 3)  $30^0$
  - 4)  $15^0$
- Գտնել եռանկյան մակերեսը:
  - 1) 50
  - 2)  $50\sqrt{3}$
  - 3)  $25\sqrt{3}$
  - 4) 25
- Գտնել եռանկյանն արտագծած շրջանագծի շառավիղը:
  - 1) 8
  - 2) 10
  - 3) 11
  - 4) 12
- Գտնել եռանկյան սրունքին տարված միջնագծի երկարությունը:
  - 1) 16
  - 2) 15,4
  - 3) 15
  - 4)  $5\sqrt{7}$

8.  $ABC$  հավասարասրուն եռանկյան  $B$  գագաթի անկյունը  $120^0$  է, իսկ սրունքի երկարությունը՝  $12\sqrt{3}$ :

- Գտնել եռանկյան հիմքին առընթեր անկյան աստիճանային չափը:
  - 1)  $60^0$
  - 2)  $150^0$
  - 3)  $180^0$
  - 4)  $30^0$
- Գտնել եռանկյան արտաքին անկյունների գումարը (յուրաքանչյուր գագաթում վերցնել մեկական արտաքին անկյուն):
  - 1)  $180^0$
  - 2)  $360^0$
  - 3)  $90^0$
  - 4)  $60^0$
- Գտնել  $B$  գագաթից տարված բարձրության երկարությունը:
  - 1) 18
  - 2)  $12\sqrt{3}$
  - 3)  $6\sqrt{3}$
  - 4) 6
- Գտնել եռանկյան հիմքի երկարությունը:
  - 1)  $18\sqrt{3}$
  - 2) 18
  - 3)  $36\sqrt{3}$
  - 4) 36

**9. Հավասարասրուն եռանկյան անկյուններից մեկը  $120^0$  է, նրան արտագծված շրջանագծի շառավիղը՝ 10:**

1. Գտնել հիմքին առընթեր արտաքին անկյունների կիսորդներով կազմված սուր անկյան աստիճանային չափը:

- 1)  $30^0$                       2)  $75^0$                       3)  $150^0$                       4)  $180^0$

2. Գտնել եռանկյան սրունքի երկարությունը:

- 1)  $10\sqrt{3}$                       2) 20                      3)  $20\sqrt{3}$                       4) 10

3. Գտնել եռանկյան մակերեսը:

- 1) 50                      2) 25                      3)  $50\sqrt{3}$                       4)  $25\sqrt{3}$

4. Հիմքի միջնակետից սրունքին իջեցրած ուղղահայացը ի՞նչ հարաբերությամբ է բաժանում սրունքը՝ հաշված հիմքի գագաթից:

- 1) 3:1                      2) 1:3                      3) 1:4                      4) 2 : 1

**10. Կանոնավոր եռանկյանը ներգծած շրջանագծի շառավիղը 2 սմ է:**

1. Գտնել եռանկյանն արտագծած շրջանագծի շառավղի երկարությունը:

- 1) 2 սմ                      2)  $\sqrt{3}$  սմ                      3) 4 սմ                      4)  $3\sqrt{2}$  սմ

2. Գտնել եռանկյան բարձրության երկարությունը:

- 1) 4 սմ                      2) 6 սմ                      3)  $2 + \sqrt{3}$  սմ                      4)  $2 + 3\sqrt{2}$  սմ

3. Գտնել եռանկյան կողմի երկարությունը:

- 1)  $3\sqrt{6}$  սմ                      2) 3 սմ                      3)  $4\sqrt{3}$  սմ                      4)  $2\sqrt{3}$  սմ

4. Գտնել եռանկյան մակերեսը:

- 1)  $\frac{9\sqrt{3}}{4}$  սմ<sup>2</sup>                      2)  $12\sqrt{3}$  սմ<sup>2</sup>                      3)  $\frac{27\sqrt{3}}{2}$  սմ<sup>2</sup>                      4)  $3\sqrt{3}$  սմ<sup>2</sup>

**11. Ուղղանկյուն եռանկյան էջերի երկարություններն են՝ 6 սմ և 8 սմ:**

1. Գտնել եռանկյանն արտագծած շրջանագծի շառավիղը:

- 1) 2 սմ                      2) 3 սմ                      3) 4 սմ                      4) 5 սմ

2. Գտնել եռանկյանը ներգծած շրջանագծի շառավիղը:

- 1) 2 սմ                      2) 3 սմ                      3) 4 սմ                      4) 5 սմ

3. Գտնել եռանկյանն արտագծած շրջանագծի կենտրոնի հեռավորությունը ուղիղ անկյան գագաթից:

- 1) 2 սմ                      2) 4 սմ                      3) 5 սմ                      4) 1 սմ

4. Գտնել եռանկյանն արտագծած և ներգծած շրջանագծերի կենտրոնների հեռավորությունը:

- 1) 2,5 սմ                      2)  $\sqrt{3}$  սմ                      3)  $\sqrt{8}$  սմ                      4)  $\sqrt{5}$  սմ

**12.  $ABC$  ուղղանկյուն եռանկյան  $C$  ուղիղ անկյան գագաթից տարված են  $CH$  բարձրությունը և  $CE$  կիսադր, ընդ որում՝  $AH = 9$ ,  $BH = 16$ :**

1. Գտնել  $CH$  բարձրության երկարությունը:

- 1) 5                              2) 7                              3) 12                              4) 12,5

2. Գտնել եռանկյան մեծ էջի երկարությունը:

- 1) 15                              2) 20                              3) 25                              4) 18

3. Գտնել  $AE$  հատվածի երկարությունը:

- 1)  $\frac{25}{7}$                               2)  $\frac{75}{7}$                               3)  $\frac{100}{7}$                               4)  $\frac{125}{7}$

4. Գտնել  $CBE$  եռանկյան մակերեսը:

- 1) 150                              2)  $\frac{800}{7}$                               3)  $\frac{600}{7}$                               4) 100

### 13. Ուղղանկյուն եռանկյան էջերն են 6 սմ և 8 սմ:

1. Գտնել եռանկյան պարագիծը:

- 1) 8 սմ                      2) 10 սմ                      3) 24 սմ                      4) 14 սմ

2. Գտնել եռանկյան ներքնաձիգին տարված միջնագծի երկարությունը:

- 1) 10 սմ                      2) 5 սմ                      3) 8 սմ                      4)  $5\sqrt{3}$  սմ

3. Գտնել եռանկյանը ներգծված շրջանագծի շառավիղը:

- 1) 4 սմ                      2)  $2\sqrt{3}$  սմ                      3) 5 սմ                      4) 2 սմ

4. Գտնել եռանկյան փոքր անկյան գագաթի հեռավորությունը եռանկյանը ներգծած շրջանագծի կենտրոնից:

- 1)  $4\sqrt{2}$  սմ                      2)  $2\sqrt{5}$  սմ                      3)  $2\sqrt{10}$  սմ                      4)  $\sqrt{10}$  սմ

### 14. Ուղղանկյուն եռանկյան ներքնաձիգին տարված բարձրությունը ներքնաձիգի վրա էջերի պրոյեկցիաներից մեկից մեծ է 6 սմ-ով, իսկ մյուսից փոքր է 8 սմ-ով:

1. Գտնել եռանկյան ներքնաձիգի երկարությունը:

- 1) 30 սմ                      2) 40 սմ                      3) 25 սմ                      4) 50 սմ

2. Գտնել եռանկյան բարձրությունների երկարությունների գումարը:

- 1) 24 սմ                      2) 94 սմ                      3) 120 սմ                      4) 100 սմ

3. Գտնել եռանկյանը ներգծված շրջանի մակերեսը:

- 1)  $314 \text{ սմ}^2$                       2)  $1 \text{ դմ}^2$                       3)  $\pi \text{ դմ}^2$                       4)  $10\pi \text{ սմ}^2$

4. Գտնել եռանկյան փոքր անկյան կիսորդի երկարությունը:

- 1)  $\frac{50}{3}$  սմ                      2)  $\frac{40}{3}$  սմ                      3)  $15\sqrt{5}$  սմ                      4)  $\frac{40\sqrt{10}}{3}$  սմ

15.  $ABC$  ուղղանկյուն եռանկյան  $C$  ուղիղ անկյան գագաթից տարված  $CH$  բարձրությունը 12 սմ է,  $BC$  էջը՝ 15 սմ:

1. Գտնել  $BH$  -ը:

- 1) 9 սմ                      2) 16 սմ                      3) 4 սմ                      4) 20 սմ

2. Գտնել  $BC : AC$  հարաբերությունը:

- 1) 4 : 3                      2) 3 : 4                      3) 5 : 3                      4) 2 : 3

3. Գտնել  $BCH$  եռանկյանը ներգծած շրջանագծի շառավիղը:

- 1) 3 սմ                      2) 7,5 սմ                      3) 6 սմ                      4) 4,5 սմ

4. Գտնել  $AK : KH$  հարաբերությունը, եթե  $CK$  -ն  $ACH$  եռանկյան  $C$  գագաթից տարված կիսորդն է:

- 1) 5 : 3                      2) 5 : 4                      3) 3 : 5                      4) 4 : 5

16.  $ABC$  եռանկյան  $C$  անկյունը  $40^\circ$ -ով փոքր է  $A$  անկյունից, իսկ  $\angle B = 2\angle C$ :

1. Գտնել եռանկյան ամենամեծ անկյունը:

- 1)  $90^\circ$                       2)  $75^\circ$                       3)  $85^\circ$                       4)  $80^\circ$

2. Գտնել եռանկյան ամենափոքր արտաքին անկյունը:

- 1)  $90^\circ$                       2)  $95^\circ$                       3)  $105^\circ$                       4)  $100^\circ$

3. Գտնել եռանկյան  $A$  և  $B$  անկյունների կիսորդներով կազմված սուր անկյունը:

- 1)  $72^\circ$                       2)  $72^\circ 50'$                       3)  $72^\circ 20'$                       4)  $72^\circ 30'$

4. Գտնել եռանկյան  $A$  և  $B$  արտաքին անկյունների կիսորդներով կազմված սուր անկյունը:

- 1)  $72^\circ$                       2)  $72^\circ 50'$                       3)  $72^\circ 20'$                       4)  $72^\circ 30'$

17. Եռանկյան կողմերի երկարությունները հարաբերում են ինչպես 3:4:5, իսկ պարագիծը 24 սմ է:

1. Գտնել եռանկյան փոքր կողմի երկարությունը:
  - 1) 4 սմ
  - 2) 8 սմ
  - 3) 6 սմ
  - 4) 10 սմ
2. Գտնել եռանկյանը ներգծած շրջանագծի կենտրոնի հեռավորությունը փոքր անկյան գագաթից:
  - 1) 6,32 սմ
  - 2)  $\sqrt{40}$  սմ
  - 3)  $4\sqrt{3}$  սմ
  - 4)  $4\sqrt{2}$  սմ
3. Գտնել եռանկյանն արտագծված շրջանագծի շառավղի երկարությունը:
  - 1) 5 սմ
  - 2) 6 սմ
  - 3) 8 սմ
  - 4) 7 սմ
4. Գտնել եռանկյան փոքր բարձրության երկարությունը:
  - 1) 48 մմ
  - 2) 4 սմ
  - 3) 45 մմ
  - 4) 10 սմ

18.  $ABC$  եռանկյան  $BC$  կողմին՝ նրա  $M$  միջնակետում տարված ուղղահայացը  $AB$  կողմը հատում է  $D$  կետում և այդ կետով  $AB$ -ն տրոհում 3:4 հարաբերությամբ մասերի՝ հաշված  $A$  գագաթից:  $ADC$  եռանկյան պարագիծը 24 սմ է, իսկ  $AC = 10$  սմ:

1. Գտնել  $ABC$  եռանկյան  $AB$  կողմին տարած բարձրության երկարությունը:
  - 1) 6 սմ
  - 2) 8 սմ
  - 3) 10 սմ
  - 4)  $6\sqrt{2}$  սմ
2. Գտնել  $ABC$  եռանկյան մեծ կողմի երկարությունը:
  - 1) 16 սմ
  - 2)  $8\sqrt{2}$  սմ
  - 3) 14 սմ
  - 4) 10 սմ
3. Գտնել  $ABC$  եռանկյան մակերեսը:
  - 1)  $112$  սմ<sup>2</sup>
  - 2)  $32\sqrt{2}$  սմ<sup>2</sup>
  - 3)  $56$  սմ<sup>2</sup>
  - 4)  $14\sqrt{3}$  սմ<sup>2</sup>
4. Գտնել  $ADMC$  քառանկյան մակերեսը:
  - 1)  $32$  սմ<sup>2</sup>
  - 2)  $32\sqrt{2}$  սմ<sup>2</sup>
  - 3)  $56$  սմ<sup>2</sup>
  - 4)  $40$  սմ<sup>2</sup>



19.  $ABC$  եռանկյան  $BD$  միջնագիծը հավասար է  $AC$  կողմի կեսին,  $AC = 10$ , իսկ  $A$  անկյունը  $2$  անգամ մեծ է  $C$  անկյունից:

1. Գտնել  $CAB$  անկյան աստիճանային չափը:

- 1)  $30^0$                       2)  $45^0$                       3)  $60^0$                       4)  $90^0$

2. Գտնել  $ABC$  եռանկյանն արտագծած շրջանագծի շառավղի երկարությունը:

- 1) 5                              2) 2,5                              3) 7                              4) 4

3. Գտնել  $ADB$  եռանկյանը ներգծած շրջանագծի շառավղի երկարությունը:

- 1) 3                              2)  $\frac{5\sqrt{3}}{6}$                               3)  $\frac{\sqrt{3}}{3}$                               4) 2

4. Գտնել  $ABC$  եռանկյան  $B$  գագաթից տարված բարձրության երկարությունը:

- 1) 4                              2)  $\frac{4\sqrt{3}}{3}$                               3)  $\frac{5\sqrt{3}}{2}$                               4) 7

20. Շեղանկյան անկյունագծերի երկարությունները հարաբերում են ինչպես  $3:4$ , իսկ ներգծած շրջանագծի շառավիղը  $6$  սմ է:

1. Գտնել շեղանկյան բարձրության երկարությունը:

- 1) 14 սմ                      2) 10 սմ                      3) 15 սմ                      4) 12 սմ

2. Գտնել շեղանկյան պարագիծը:

- 1) 40 սմ                      2) 50 սմ                      3) 60 սմ                      4) 70 սմ

3. Գտնել այն քառանկյան մակերեսը, որի գագաթները տրված շեղանկյան կողմերի միջնակետերն են:

- 1)  $37,5 \text{ սմ}^2$                       2)  $30 \text{ սմ}^2$                       3)  $75 \text{ սմ}^2$                       4)  $150 \text{ սմ}^2$

4. Գտնել շեղանկյան մակերեսը:

- 1)  $75 \text{ սմ}^2$                       2)  $150 \text{ սմ}^2$                       3)  $37,5 \text{ սմ}^2$                       4)  $100 \text{ սմ}^2$

**21. Հավասարասրուն սեղանի հիմքերի երկարություններն են 8 սմ և 5 սմ, իսկ սրունքի երկարությունը՝ 3 սմ:**

1. Գտնել սեղանի փոքր անկյունը:

- 1)  $30^0$                       2)  $45^0$                       3)  $60^0$                       4)  $75^0$

2. Գտնել սեղանի բարձրության երկարությունը:

- 1)  $3\sqrt{3}$  սմ                      2) 2,59 սմ                      3)  $\frac{3\sqrt{3}}{2}$  սմ                      4) 6 սմ

3. Գտնել սեղանի մակերեսը:

- 1)  $9 \text{ սմ}^2$                       2)  $10 \text{ սմ}^2$                       3)  $16 \text{ սմ}^2$                       4)  $\frac{39\sqrt{3}}{4} \text{ սմ}^2$

4. Գտնել սեղանի անկյունագծի երկարությունը:

- 1) 7 սմ                      2) 5 սմ                      3) 6 սմ                      4) 5,5 սմ

**22. Շրջանագծին արտագծված հավասարասրուն սեղանի սրունքը 10սմ է, իսկ հիմքերը հարաբերում են ինչպես 1:3:**

1. Գտնել սեղանի պարագիծը:

- 1) 40 սմ                      2) 30 սմ                      3) 50 սմ                      4) 35 սմ

2. Գտնել սեղանի մեծ անկյան աստիճանային չափը:

- 1)  $130^0$                       2)  $145^0$                       3)  $120^0$                       4)  $90^0$

3. Գտնել սեղանին ներգծած շրջանագծի շառավղի երկարությունը:

- 1) 4,33 սմ                      2)  $\frac{5\sqrt{3}}{2}$  սմ                      3) 6 սմ                      4) 5,5 սմ

4. Գտնել սեղանին արտագծած շրջանագծի շառավղի երկարությունը:

- 1) 7,63 սմ                      2)  $\frac{5\sqrt{21}}{3}$  սմ                      3) 6 սմ                      4) 8 սմ

**23. Ուղղանկյուն սեղանի հիմքերի երկարություններն են 3 սմ և 5 սմ, իսկ փոքր սրունքի երկարությունը՝ 4 սմ:**

1. Գտնել սեղանի միջին գծի երկարությունը:

- 1) 4 սմ                      2) 3 սմ                      3) 5 սմ                      4) 3,5 սմ

2. Գտնել սեղանին հավասարամեծ քառակուսու կողմի երկարությունը:

- 1) 5 սմ                      2) 3 սմ                      3) 4 սմ                      4) 6 սմ

3. Գտնել սեղանի փոքր անկյունագծի երկարությունը:

- 1) 7 սմ                      2) 5 սմ                      3) 6 սմ                      4) 5,5 սմ

4. Գտնել սեղանի սուր անկյան տանգենսը:

- 1) 3                              2) 4                              3) 1                              4) 2

**24. Չուզահեռագծի անկյունագիծը հավասար է նրա կողմերից մեկին, մեծ կողմը 8 է, անկյուններից մեկը՝  $45^\circ$ :**

1. Գտնել չուզահեռագծի փոքր կողմի երկարությունը:

- 1) 4                              2)  $4\sqrt{2}$                       3) 6                              4) 8

2. Գտնել չուզահեռագծի մակերեսը:

- 1) 20                              2) 32                              3)  $32\sqrt{2}$                       4) 40

3. Գտնել չուզահեռագծի մեծ անկյունագծի երկարությունը:

- 1)  $4\sqrt{2}$                       2) 4                              3)  $4\sqrt{10}$                       4)  $4\sqrt{5}$

4. Գտնել չուզահեռագծի փոքր կողմին տարված բարձրության երկարությունը:

- 1) 4                              2)  $4\sqrt{2}$                       3) 6                              4) 8

**25. Կանոնավոր վեցանկյան պարագիծը 48 սմ է:**

1. Գտնել վեցանկյան կողմի երկարությունը:

- 1)  $6\sqrt{2}$  սմ      2) 6 սմ      3) 8 սմ      4) 12 սմ

2. Գտնել վեցանկյան փոքր անկյունագծի երկարությունը:

- 1)  $8\sqrt{3}$  սմ      2)  $6\sqrt{3}$  սմ      3)  $12\sqrt{3}$  սմ      4)  $12\sqrt{2}$  սմ

3. Գտնել վեցանկյանը ներգծած շրջանագծի շառավղի երկարությունը:

- 1)  $3\sqrt{6}$  սմ      2)  $4\sqrt{3}$  սմ      3)  $3\sqrt{3}$  սմ      4)  $6\sqrt{3}$  սմ

4. Գտնել վեցանկյան մակերեսը:

- 1)  $72\sqrt{3}$  սմ<sup>2</sup>      2)  $96\sqrt{3}$  սմ<sup>2</sup>      3)  $54\sqrt{3}$  սմ<sup>2</sup>      4)  $108\sqrt{3}$  սմ<sup>2</sup>

**26. Կանոնավոր բազմանկյան անկյունների գումարը  $720^\circ$  է, իսկ կողմի երկարությունը՝ 6 սմ:**

1. Գտնել բազմանկյան գագաթների քանակը:

- 1) 4      2) 6      3) 8      4) 10

2. Գտնել բազմանկյանն արտագծած շրջանագծի շառավղի երկարությունը:

- 1) 4սմ      2) 8 սմ      3) 6 սմ      4) 10 սմ

3. Գտնել բազմանկյանը ներգծած շրջանագծի շառավղի երկարությունը:

- 1) 3 սմ      2)  $\frac{3}{\sqrt{3}}$  սմ      3) 6 սմ      4)  $3\sqrt{3}$  սմ

4. Գտնել բազմանկյան մակերեսը:

- 1)  $9\sqrt{3}$  սմ<sup>2</sup>      2)  $36\sqrt{3}$  սմ<sup>2</sup>      3)  $54\sqrt{3}$  սմ<sup>2</sup>      4)  $18\sqrt{3}$  սմ<sup>2</sup>

27.  $O$  կենտրոնով և  $AB = 10$  սմ տրամագծով շրջանագծի վրա նշված է  $C$  կետն այնպես, որ  $AC = 5$  սմ:

1. Գտնել  $ACB$  անկյունը:

- 1)  $30^0$                       2)  $45^0$                       3)  $60^0$                       4)  $90^0$

2. Գտնել  $BOC$  անկյունը:

- 1)  $60^0$                       2)  $90^0$                       3)  $120^0$                       4)  $150^0$

3. Գտնել շրջանագծի երկարությունը:

- 1)  $5\pi$  սմ                      2)  $10\pi$  սմ                      3)  $25\pi$  սմ                      4)  $20\pi$  սմ

4. Գտնել  $C$  կետի հեռավորությունը  $AB$  տրամագծից:

- 1) 5 սմ                      2)  $5\sqrt{2}$  սմ                      3)  $5\sqrt{3}$  սմ                      4)  $2,5\sqrt{3}$  սմ

28. Շրջանագիծն անցնում է  $ABC$  եռանկյան  $A$  և  $C$  գագաթներով, հատում է  $AB$  կողմը  $E$ , իսկ  $BC$  կողմը՝  $K$  կետում: Հայտնի է, որ  $AC = 12$ ,  $\angle ABC = 72^\circ$ ,  $\angle AEC = 5 \cdot \angle BAK$ :

1. Զանի<sup>o</sup> անգամ է  $AKC$  անկյունը մեծ  $ECK$  անկյունից:

- 1) 4                      2) 2                      3) 5                      4) 10

2. Գտնել  $EAK$  անկյունը:

- 1)  $30^0$                       2)  $18^0$                       3)  $36^0$                       4)  $90^0$

3. Գտնել  $AEC$  անկյունը:

- 1)  $30^0$                       2)  $45^0$                       3)  $60^0$                       4)  $90^0$

4. Գտնել շրջանագծի շառավղի երկարությունը:

- 1) 2 սմ                      2) 4 սմ                      3) 6 սմ                      4) 8 սմ

29.  $ABC$  եռանկյունը ներգծված է  $DC$  տրամագծով շրջանագծին:  $AB$  լարը զուգահեռ է  $CD$ -ին,  $AC = 4$ ,  $CB = 3$ :

1. Գտնել  $CD$  տրամագծի երկարությունը:

- 1) 3                      2) 4                      3) 5                      4) 6

2. Գտնել  $AB$  և  $CD$  լարերի հեռավորությունը:

- 1) 2,5                      2) 2,4                      3) 3,5                      4) 3,4

3. Գտնել  $AB$  լարի երկարությունը:

- 1) 2,2                      2) 3                      3) 1,8                      4) 1,4

4. Գտնել  $ACD$  եռանկյանը ներգծած շրջանագծի շառավղի երկարությունը:

- 1) 1                      2) 2,5                      3) 2                      4)  $\frac{6}{5}$

30. Շրջանագծին արտագծած  $ABCD$  քառանկյան  $A$  անկյունը  $90^\circ$  է,  $C$  անկյունը՝  $60^\circ$ ,  $BC = 8$ ,  $CD = 15$ :

1. Գտնել քառանկյան անհայտ կողմերից մեծի և փոքրի տարբերությունը:

- 1) 7                      2) 12                      3) 10                      4) 16

2. Գտնել քառանկյան  $BD$  անկյունագծի երկարությունը:

- 1) 17                      2) 8                      3) 12                      4) 13

3. Գտնել քառանկյան անհայտ կողմերից մեծի երկարությունը:

- 1) 7                      2) 12                      3) 8                      4) 15

4. Գտնել շրջանագծի շառավղի երկարությունը:

- 1)  $1 + \sqrt{3}$                       2)  $2(1 + \sqrt{3})$                       3)  $\sqrt{3}$                       4)  $\frac{3(1 + \sqrt{3})}{2}$

31.  $ABCD$  զուգահեռագծի մեջ  $AB = 5$  և  $BC = 10$ : Չուգահեռագծի  $A$  սուր անկյան կիսորդը  $BC$  կողմը հատում է  $M$  կետում:  $O$ -ն  $AMD$  եռանկյանն արտագծած շրջանագծի կենտրոնն է:

1. Գտնել  $BM$  հատվածի երկարությունը:

- 1) 5                      2) 4                      3) 6                      4) 3

2. Գտնել  $\angle AMD$ -ն:

- 1)  $120^0$                       2)  $45^0$                       3)  $60^0$                       4)  $90^0$

3. Գտնել  $\angle BOC$ -ն:

- 1)  $120^0$                       2)  $45^0$                       3)  $60^0$                       4)  $90^0$

4. Գտնել  $AMD$  եռանկյանն արտագծած շրջանագծի շառավիղը:

- 1) 9                      2) 5                      3) 3                      4) 1

32. Հավասարասրուն ուղղանկյուն եռանկյան ներքնաձիգին տարված միջնագիծը 6 է:

1. Գտնել եռանկյան ներքնաձիգը:

- 1) 6                      2) 36                      3) 12                      4) 3

2. Գտնել եռանկյան էջը:

- 1) 6                      2)  $12\sqrt{2}$                       3) 12                      4)  $6\sqrt{2}$

3. Գտնել եռանկյանը ներգծած շրջանագծի շառավիղը:

- 1) 3                      2)  $6\sqrt{2} - 1$                       3)  $3\sqrt{2}$                       4)  $6\sqrt{2} - 6$

4. Գտնել եռանկյան մակերեսը:

- 1) 12                      2) 36                      3) 24                      4) 48

33.  $O$  կենտրոնով և 12 շառավղով շրջանագծի վրա տրված են  $A, B, C$  կետերն այնպես, որ  $AB$  աղեղը  $120^\circ$  է, իսկ  $AC$  աղեղը՝  $60^\circ$ , ընդ որում  $C$  կետը գտնվում  $AB$  փոքր աղեղի վրա:

1. Գտնել  $ABC$  անկյունը:

- 1)  $30^\circ$                       2)  $60^\circ$                       3)  $120^\circ$                       4)  $90^\circ$

2. Գտնել  $AC$  հատվածի երկարությունը:

- 1) 12                              2) 6                              3) 24                              4) 3

3. Գտնել  $ACB$  անկյունը:

- 1)  $60^\circ$                               2)  $30^\circ$                               3)  $90^\circ$                               4)  $120^\circ$

4. Գտնել  $BC$  հատվածի երկարությունը:

- 1)  $6\sqrt{6}$                               2) 6                              3) 12                              4) 24

34.  $ABC$  եռանկյան  $A$  անկյունը  $60^\circ$  է,  $AB=5$ ,  $AC=8$ :

1. Գտնել եռանկյան մակերեսը:

- 1) 20                              2)  $10\sqrt{3}$                               3) 10                              4)  $20\sqrt{3}$

2. Գտնել եռանկյան  $BC$  կողմի երկարությունը:

- 1) 7                              2)  $4\sqrt{3}$                               3)  $\sqrt{89-40\sqrt{3}}$                               4)  $\sqrt{89+40\sqrt{3}}$

3. Գտնել եռանկյան մեծ բարձրությունը:

- 1)  $\frac{5\sqrt{3}}{2}$                               2)  $\frac{7\sqrt{3}}{2}$                               3)  $3\sqrt{3}$                               4)  $4\sqrt{3}$

4. Գտնել եռանկյանը ներգծած շրջանագծի շառավիղը:

- 1)  $\sqrt{3}$                               2) 2                              3)  $2\sqrt{3}$                               4) 1



## ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ

Ա/Հ	Ենթաառաջադրանքի համարը			
	1	2	3	4
1	2	2	3	1
2	1	1	4	2
3	4	1	1	3
4	1	3	2	1
5	4	1	4	4
6	2	2	2	3
7	3	3	2	4
8	4	2	3	4
9	1	4	4	1
10	3	2	3	2
11	4	1	3	4
12	3	2	2	3
13	3	2	4	3
14	4	2	3	4
15	1	2	1	1
16	2	3	4	4
17	3	2	1	1
18	2	3	3	4
19	3	1	2	3
20	4	2	3	2
21	3	3	4	1
22	1	3	2	2
23	1	3	2	4
24	2	2	3	2
25	3	1	2	2
26	2	3	4	3
27	4	3	2	4
28	3	2	4	3
29	3	2	4	1
30	1	4	2	4
31	1	4	4	2
32	3	4	4	2
33	1	1	4	3
34	2	1	4	1

**ԲԱԺԻՆ 9. ՏԱՐԱԾԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ**

**1.  $ABCA_1B_1C_1$  կանոնավոր եռանկյուն պրիզմայի հիմքի կողմը 8 է, իսկ կողմնային կողը՝ 6:**

1. Գտնել պրիզմայի կողմնային մակերևույթի մակերեսը:

- 1)  $96\sqrt{3}$                       2)  $48\sqrt{3}$                       3) 48                      4) 144

2. Գտնել  $A_1BC$  հատույթի՝  $A_1$  գագաթից տարված բարձրության երկարությունը:

- 1) 10                      2) 11                      3)  $8\sqrt{2}$                       4)  $2\sqrt{21}$

3. Գտնել  $A_1BC$  հատույթի մակերեսը:

- 1) 30                      2) 32                      3)  $10\sqrt{2}$                       4)  $8\sqrt{21}$

4. Գտնել  $A_1BC$  հարթության և պրիզմայի հիմքի հարթության կազմած անկյան տանգենսը:

- 1) 2                      2)  $\frac{\sqrt{3}}{2}$                       3)  $\sqrt{2}$                       4) 1,5

**2.  $ABCA_1B_1C_1$  կանոնավոր եռանկյուն պրիզմայի հիմքի կողմը 6 է, իսկ կողմնային կողը՝  $3\sqrt{3}$ :**

1. Գտնել  $BB_1$  և  $AC$  ուղիղների կազմած անկյան աստիճանային չափը:

- 1) 0                      2) 90                      3) 75                      4) 60

2. Գտնել պրիզմայի ծավալը:

- 1) 27                      2)  $108\sqrt{3}$                       3)  $36\sqrt{3}$                       4) 81

3. Գտնել  $AB_1C$  հարթության և պրիզմայի հիմքի հարթության կազմած անկյունը:


- 1)  $30^0$                       2)  $\arcsin \frac{\sqrt{3}}{18}$                       3)  $45^0$                       4)  $60^0$

4. Գտնել  $B$  կետի հեռավորությունը  $AB_1C$  հարթությունից:

- 1)  $\frac{3}{2}\sqrt{6}$                       2)  $\frac{3\sqrt{3}}{2}$                       3)  $3\sqrt{3}$                       4) 6

**3. Կանոնավոր եռանկյուն պրիզմայի բարձրությունը 3 սմ է, հիմքի կողմը՝ 4սմ:**

1. Հետևյալ պատկերներից ո՞րն է համապատասխանում խնդրում նշնած պայմանին.



2. Գտնել պրիզմայի կողմնային մակերևույթի մակերեսը:

- 1)  $12 \text{ սմ}^2$       2)  $24 \text{ սմ}^2$       3)  $48 \text{ սմ}^2$       4)  $36 \text{ սմ}^2$

3. Գտնել պրիզմայի ծավալը:

- 1)  $20,78 \text{ սմ}^3$       2)  $4\sqrt{3} \text{ սմ}^3$       3)  $12\sqrt{3} \text{ սմ}^3$       4)  $8\sqrt{3} \text{ սմ}^3$

4. Գտնել պրիզմայի կողմնային նիստի անկյունագծի երկարությունը:

- 1) 5 սմ      2) 5,5 սմ      3)  $5\sqrt{3}$  սմ      4) 4 սմ

4.  $ABCA_1B_1C_1$  ուղիղ պրիզմայի հիմքը  $AC = 6 \text{ սմ}$ ,  $BC = 8 \text{ սմ}$ ,  $AB = 10 \text{ սմ}$  կողմերով եռանկյուն է, իսկ պրիզմայի բարձրությունը 7սմ է:

1. Գտնել պրիզմայի հիմքի փոքր բարձրության երկարությունը:

- 1) 6 սմ      2) 8 սմ      3) 4,8 սմ      4) 5 սմ

2. Գտնել պրիզմայի կողմնային մակերևույթի մակերեսը:

- 1)  $216 \text{ սմ}^2$       2)  $168 \text{ սմ}^2$       3)  $70 \text{ սմ}^2$       4)  $108 \text{ սմ}^2$

3. Գտնել պրիզմայի ծավալը:

- 1)  $168 \text{ սմ}^3$       2)  $336 \text{ սմ}^3$       3)  $160 \text{ սմ}^3$       4)  $340 \text{ սմ}^3$

4. Գտնել  $AA_1$  կողին առընթեր երկնիստ անկյան սինուսը:

- 1)  $\frac{3}{5}$       2)  $\frac{4}{5}$       3) 1      4)  $\frac{7}{10}$

**5.  $ABCD A_1 B_1 C_1 D_1$  խորանարդի կողը 4 է:**

1. Գտնել  $B_1 A C$  անկյունը:

- 1)  $90^0$                       2)  $45^0$                       3)  $60^0$                       4)  $30^0$

2. Գտնել  $C_1, B, D$  կետերով անցնող հատույթի մակերեսը:

- 1) 16                      2)  $6\sqrt{3}$                       3) 8                      4)  $8\sqrt{3}$

3. Գտնել խորանարդին արտագծած գնդային մակերևույթի շառավղի երկարությունը:

- 1) 2                      2)  $2\sqrt{3}$                       3) 4                      4)  $4\sqrt{3}$

4. Գտնել  $B_1 A C B$  բուրգի ծավալը:

- 1)  $\frac{64}{3}$                       2) 32                      3)  $32\sqrt{2}$                       4)  $\frac{32}{3}$

**6. Ուղղանկյունանիստի անկյունագիծը 13 է, իսկ հիմքի կողմերը 3 և 4:**

1. Գտնել ուղղանկյունանիստի բարձրության երկարությունը:

- 1) 8                      2) 12                      3) 10                      4) 11

2. Գտնել ուղղանկյունանիստի անկյունագծի և հիմքի հարթության կազմած անկյան տանգենսը:

- 1) 1,6                      2) 2,4                      3) 2,1                      4) 2,2

3. Գտնել ուղղանկյունանիստի անկյունագծային հատույթի մակերեսը:

- 1) 40                      2) 50                      3) 60                      4) 55

4. Գտնել ուղղանկյունանիստի լրիվ մակերևույթի մակերեսը:

- 1) 168                      2) 96                      3) 180                      4) 192

**7. Ուղղանկյունանիստի հիմքի կողմերը 3սմ և 4սմ են, իսկ կողմնային կողը՝ 5սմ:**

1. Գտնել ուղղանկյունանիստի լրիվ մակերևույթի մակերեսը:

- 1)  $70 \text{ սմ}^2$                       2)  $94 \text{ սմ}^2$                       3)  $60 \text{ սմ}^2$                       4)  $12 \text{ սմ}^2$

2. Գտնել ուղղանկյունանիստի ծավալը:

- 1)  $94 \text{ սմ}^3$                       2)  $70 \text{ սմ}^3$                       3)  $48 \text{ սմ}^3$                       4)  $60 \text{ սմ}^3$

3. Գտնել ուղղանկյունանիստի անկյունագծային հատույթի մակերեսը:

- 1)  $25 \text{ սմ}^2$                       2)  $4\sqrt{34} \text{ սմ}^2$                       3)  $3\sqrt{41} \text{ սմ}^2$                       4)  $60 \text{ սմ}^2$

4. Գտնել ուղղանկյունանիստի անկյունագծի և հիմքի հարթության կազմած անկյունը:

- 1)  $90^0$                       2)  $45^0$                       3)  $30^0$                       4)  $60^0$

**8. Ուղղանկյունանիստի հիմքի կողմերն են 9 սմ և 12 սմ, իսկ անկյունագիծը 17 սմ է:**

1. Գտնել ուղղանկյունանիստի կողմնային կողի երկարությունը:

- 1) 6 սմ                      2) 10 սմ                      3) 14 սմ                      4) 8 սմ

2. Գտնել ուղղանկյունանիստի ամենամեծ մակերես ունեցող նիստի անկյունագծի երկարությունը:

- 1) 16 սմ                      2) 10 սմ                      3) 15 սմ                      4) 18 սմ

3. Գտնել ուղղանկյունանիստի կողմնային մակերևույթի մակերեսը:

- 1)  $336 \text{ սմ}^2$                       2)  $326 \text{ սմ}^2$                       3)  $346 \text{ սմ}^2$                       4)  $168 \text{ սմ}^2$

4. Գտնել ուղղանկյունանիստի ծավալը:

- 1)  $846 \text{ սմ}^3$                       2)  $862 \text{ սմ}^3$                       3)  $864 \text{ սմ}^3$                       4)  $868 \text{ սմ}^3$

**9. Կանոնավոր քառանկյուն պրիզմայի հիմքի կողմը 6սմ է, իսկ կողմնային կողը՝ 8սմ:**

1. Գտնել պրիզմայի կողմնային մակերևույթի մակերեսը:

- 1)  $264 \text{ սմ}^2$                       2)  $36 \text{ սմ}^2$                       3)  $48 \text{ սմ}^2$                       4)  $192 \text{ սմ}^2$

2. Գտնել պրիզմայի ծավալը:

- 1)  $288 \text{ սմ}^3$                       2)  $96 \text{ սմ}^3$                       3)  $192 \text{ սմ}^3$                       4)  $264 \text{ սմ}^3$

3. Գտնել պրիզմայի անկյունագծային հատույթի մակերեսը:

- 1)  $48 \text{ սմ}^2$                       2)  $60 \text{ սմ}^2$                       3)  $48\sqrt{2} \text{ սմ}^2$                       4)  $24\sqrt{2} \text{ սմ}^2$

4. Գտնել պրիզմայի հիմքի անկյունագծի և այդ անկյունագիծը չհաստող՝ պրիզմայի անկյունագծի կազմած անկյունը:

- 1)  $45^0$                       2)  $90^0$                       3)  $30^0$                       4)  $60^0$

10.  $ABCD A_1 B_1 C_1 D_1$  ուղիղ պրիզմայի հիմքը  $ABCD$  զուգահեռագիծն է, որի կողմերն են  $AB = 5$  սմ,  $BC = 6$  սմ, իսկ սուր անկյունը՝  $\angle A = 60^\circ$ : Պրիզմայի բարձրությունը 7 սմ է:

1. Գտնել պրիզմայի հիմքի մակերեսը:

- 1)  $7,5$  սմ<sup>2</sup>                      2)  $15$  սմ<sup>2</sup>                      3)  $30$  սմ<sup>2</sup>                      4)  $15\sqrt{3}$  սմ<sup>2</sup>

2. Գտնել պրիզմայի լրիվ մակերևույթի մակերեսը:

- 1)  $(77 + 15\sqrt{3})$  սմ<sup>2</sup>    2)  $77$  սմ<sup>2</sup>                      3)  $107$  սմ<sup>2</sup>                      4)  $(154 + 30\sqrt{3})$  սմ<sup>2</sup>

3. Գտնել պրիզմայի ծավալը:

- 1)  $210\sqrt{3}$  սմ<sup>3</sup>                      2)  $210$  սմ<sup>3</sup>                      3)  $105$  սմ<sup>3</sup>                      4)  $105\sqrt{3}$  սմ<sup>3</sup>

4. Գտնել  $BB_1$  կողմնային կողին առընթեր երկնիստ անկյունը:

- 1)  $60^\circ$                                   2)  $120^\circ$                               3)  $90^\circ$                               4)  $45^\circ$

11. Պրիզմայի հիմքը եռանկյուն է, որի երկու կողմերն են 3 և 4, իսկ դրանց կազմած անկյունը՝  $120^\circ$ : Պրիզմայի կողմնային կողը 6 է և հիմքի հարթության հետ կազմում է  $60^\circ$  անկյուն:

1. Գտնել պրիզմայի հիմքի մակերեսը:

- 1) 6                                      2)  $6\sqrt{3}$                                   3) 3                                      4)  $3\sqrt{3}$

2. Գտնել պրիզմայի բարձրության երկարությունը:

- 1) 6                                      2)  $6\sqrt{3}$                                   3) 3                                      4)  $3\sqrt{3}$

3. Գտնել պրիզմայի ծավալը:

- 1) 8                                      2) 64                                      3) 27                                      4) 72

4. Գտնել պրիզմային հավասարամեծ խորանարդի կողի երկարությունը:

- 1) 2                                      2) 4                                      3) 3                                      4)  $2\sqrt{3}$

**12. Կանոնավոր եռանկյուն բուրգի հիմքի կողմը 18 սմ է, իսկ հարթագիծը՝ 6 սմ:**

1. Գտնել բուրգի կողմնային մակերևույթի մակերեսը:

- 1)  $162 \text{ սմ}^2$       2)  $324 \text{ սմ}^2$       3)  $160 \text{ սմ}^2$       4)  $54\sqrt{3} \text{ սմ}^2$

2. Գտնել բուրգի հիմքին ներգծած շրջանագծի շառավղի երկարությունը:

- 1) 5,19 սմ      2) 5 սմ      3)  $3\sqrt{2}$  սմ      4)  $3\sqrt{3}$  սմ

3. Գտնել բուրգի հիմքի կողմին առընթեր երկնիստ անկյունը:

- 1)  $45^0$       2)  $30^0$       3)  $60^0$       4)  $75^0$

4. Գտնել բուրգի ծավալը:

- 1)  $140,29 \text{ սմ}^3$       2)  $81\sqrt{3} \text{ սմ}^3$       3)  $160 \text{ սմ}^3$       4)  $54\sqrt{3} \text{ սմ}^3$

**13. Կանոնավոր եռանկյուն բուրգի բարձրությունը 12 սմ է և հավասար է հիմքի կողմին:**

1. Գտնել բուրգի հիմքի բարձրության երկարությունը:

- 1) 10,39 սմ      2) 10 սմ      3)  $6\sqrt{2}$  սմ      4)  $6\sqrt{3}$  սմ

2. Գտնել բուրգի հարթագծի երկարությունը:

- 1) 12,48 սմ      2) 12 սմ      3)  $2\sqrt{39}$  սմ      4)  $\sqrt{158}$  սմ

3. Գտնել բուրգի կողմնային կողի երկարությունը:

- 1) 13,85 սմ      2) 14 սմ      3)  $8\sqrt{3}$  սմ      4)  $6\sqrt{3}$  սմ

4. Գտնել բուրգի կողմնային կողի և հիմքի հարթության կազմած անկյունը:

- 1)  $45^0$       2)  $30^0$       3)  $60^0$       4)  $75^0$

14. Կանոնավոր քառանկյուն բուրգի կողմնային կողի երկարությունը 8 է, իսկ գագաթի հարթ անկյունը՝  $60^\circ$ :

1. Գտնել հիմքի կողմի երկարությունը:

- 1) 6                      2) 7                      3) 7,5                      4) 8

2. Գտնել բուրգի հիմքի մակերեսը:

- 1) 50                      2) 56                      3) 64                      4) 9

3. Գտնել բուրգի բարձրության երկարությունը:

- 1)  $4\sqrt{2}$                       2) 6                      3) 7                      4) 9

4. Գտնել բուրգի ծավալը:

- 1) 150                      2)  $\frac{200\sqrt{2}}{3}$                       3) 192                      4)  $\frac{256\sqrt{2}}{3}$

15.  $A$  կետի հեռավորությունները  $\alpha$  հարթության  $B$  և  $C$  կետերից համապատասխանաբար հավասար են 2-ի և  $\sqrt{5}$ -ի, իսկ  $\alpha$  հարթությանը տարված  $AO$  ուղղահայացի երկարությունը 1 է:  $AB$  և  $AC$  հատվածների պրոյեկցիաները  $\alpha$  հարթության վրա փոխուղղահայաց են:

1. Գտնել  $\alpha$  հարթության վրա  $AC$  հատվածի պրոյեկցիայի երկարությունը:

- 1) 4                      2) 2                      3)  $\sqrt{6}$                       4) 1

2. Գտնել  $ACO$  եռանկյան մակերեսը:

- 1) 1                      2)  $\frac{\sqrt{6}}{2}$                       3) 2                      4) 0,5

3. Գտնել  $AB$ -ի և  $\alpha$  հարթության կազմած անկյունը:

- 1)  $90^\circ$                       2)  $45^\circ$                       3)  $30^\circ$                       4)  $60^\circ$

4. Գտնել  $(ABC)$  և  $\alpha$  հարթությունների կազմած անկյան տանգենսը:

- 1)  $\frac{1}{2}\sqrt{\frac{7}{3}}$                       2)  $2\sqrt{\frac{3}{7}}$                       3)  $\frac{\sqrt{3}}{3}$                       4)  $\sqrt{3}$



16. Գլանի առանցքային հատույթը  $10\sqrt{2}$  անկյունագծով քառակուսի է:

1. Գտնել գլանի առանցքային հատույթի անկյունագծի և հիմքի հարթության կազմած անկյունը:

- 1)  $30^0$                       2)  $45^0$                       3)  $60^0$                       4)  $90^0$

2. Գտնել գլանի հիմքի շառավղի երկարությունը:

- 1) 10                      2)  $10\sqrt{2}$                       3)  $5\sqrt{2}$                       4) 5

3. Գտնել գլանի կողմնային մակերևույթի մակերեսը:

- 1)  $50\pi$                       2)  $100\pi$                       3) 25                      4)  $10\pi$

4. Գտնել գլանի ծավալը:

- 1)  $250\pi$                       2)  $100\pi$                       3) 100                      4)  $50\pi^2$

17. Գլանի բարձրությունը 8 դմ է, շառավիղը՝ 5 դմ:

1. Գտնել գլանի առանցքային հատույթի մակերեսը:

- 1)  $40\text{դմ}^2$                       2)  $60\text{դմ}^2$                       3)  $36\text{դմ}^2$                       4)  $80\text{դմ}^2$

2. Գտնել գլանի ծավալը:

- 1)  $40\pi\text{դմ}^3$                       2)  $320\pi\text{դմ}^3$                       3)  $200\pi\text{դմ}^3$                       4)  $\frac{200\pi}{3}\text{դմ}^3$

3. Գտնել գլանի կողմնային մակերևույթին հավասարամեծ քառակուսու կողմի երկարությունը:

- 1)  $4\pi\sqrt{5}\text{դմ}$                       2)  $4\sqrt{5\pi}\text{դմ}$                       3)  $80\pi\text{դմ}$                       4)  $20\pi\text{դմ}$

4. Գտնել գլանի առանցքին զուգահեռ և նրանից 3 դմ հեռավորության վրա գտնվող հատույթի պարագիծը:

- 1) 64 դմ                      2) 24 դմ                      3) 32 դմ                      4) 16 դմ

**18. Գլանի հիմքի շառավիղը 5 է, իսկ կողմնային մակերևույթի մակերեսը 4 անգամ մեծ է հիմքի մակերեսից:**

1. Գտնել գլանի բարձրության երկարությունը:

- 1) 2,5                      2) 5                              3) 10                              4) 20

2. Գտնել գլանի լրիվ մակերևույթի մակերեսը:

- 1)  $250\pi$                       2)  $150\pi$                               3)  $100\pi$                               4)  $75\pi$

3. Գտնել գլանի ծավալը:

- 1)  $125\pi$                       2)  $250\pi$                               3)  $67,5\pi$                               4)  $500\pi$

4. Գտնել գլանի առանցքային հատույթի անկյունագծի և հիմքի հարթության կազմած անկյունը:

- 1)  $30^0$                       2)  $45^0$                               3)  $60^0$                               4)  $90^0$

**19. Գլանի առանցքին զուգահեռ հատույթը հիմքի շրջանագիծը բաժանում է երկու աղեղների, որոնց երկարությունների հարաբերությունը 5 է: Գլանի լրիվ մակերևույթի մակերեսը  $168\pi$  սմ<sup>2</sup> է, իսկ հատույթի պարագիծը՝ 28 սմ:**

1. Գտնել գլանի հիմքի շառավիղի երկարությունը:

- 1) 10սմ                      2)  $3\sqrt{2}$  սմ                              3) 6սմ                              4) 8սմ

2. Գտնել գլանի ծնորդի երկարությունը:

- 1) 8սմ                      2) 6սմ                              3) 14սմ                              4) 28սմ

3. Գտնել գլանի ծավալը:

- 1)  $280\pi$  սմ<sup>3</sup>                      2)  $288\pi$  սմ<sup>3</sup>                              3)  $48\pi$  սմ<sup>3</sup>                              4)  $480\pi$  սմ<sup>3</sup>

4. Գտնել գլանի առանցքի հեռավորությունը տրված հատույթից:

- 1)  $1,5\sqrt{3}$  սմ                      2)  $\sqrt{3}$  սմ                              3)  $3\sqrt{3}$  սմ                              4) 3 սմ

20. Կոնի ծնորդը 10 սմ է և առանցքի հետ կազմում է  $30^\circ$  անկյուն:

1. Գտնել կոնի հիմքի շառավղի երկարությունը:

- 1) 4 սմ                      2) 5 սմ                      3) 6 սմ                      4) 6,5 սմ

2. Գտնել կոնի բարձրության երկարությունը:

- 1)  $6\sqrt{2}$  սմ                      2)  $5\sqrt{3}$  սմ                      3) 7 սմ                      4) 7,5 սմ

3. Գտնել կոնի կողմնային մակերևույթի մակերեսը:

- 1)  $40\pi$  սմ<sup>2</sup>                      2)  $50\pi$  սմ<sup>2</sup>                      3)  $55\pi$  սմ<sup>2</sup>                      4)  $60\pi$  սմ<sup>2</sup>

4. Գտնել կոնի ծավալը:

- 1)  $100\pi$  սմ<sup>3</sup>                      2)  $\frac{125\sqrt{3}\pi}{3}$  սմ<sup>3</sup>                      3)  $120\sqrt{3}\pi$  սմ<sup>3</sup>                      4)  $150\pi$  սմ<sup>3</sup>

21. Կոնի բարձրությունը 1,2 մ է, իսկ առանցքային հատույթի մակերեսը՝  $0,6$  մ<sup>2</sup>:

1. Գտնել կոնի հիմքի շառավղի երկարությունը:

- 1) 0,4 մ                      2) 0,5 մ                      3) 0,6 մ                      4) 1 մ

2. Գտնել կոնի ծնորդի երկարությունը:

- 1) 1,3 մ                      2) 1,4 մ                      3) 1,5 մ                      4) 2 մ

3. Գտնել կոնի կողմնային մակերևույթի մակերեսը:

- 1)  $2$  մ<sup>2</sup>                      2)  $1,5\pi$  մ<sup>2</sup>                      3)  $3$  մ<sup>2</sup>                      4)  $\frac{13}{20}\pi$  մ<sup>2</sup>

4. Գտնել կոնի ծավալը:

- 1)  $\frac{\pi}{10}$  մ<sup>3</sup>                      2)  $\frac{\pi}{9}$  մ<sup>3</sup>                      3)  $\frac{2\pi}{17}$  մ<sup>3</sup>                      4)  $\frac{1}{3}$  մ<sup>3</sup>

**22. Կոնի կողմնային մակերևույթի փռվածքը 24 սմ տրամագծով կիսաշրջան է:**

1. Գտնել կոնի ծնորդի երկարությունը:

- 1) 8 սմ                      2) 12 սմ                      3) 18 սմ                      4) 24 սմ

2. Գտնել կոնի հիմքի շառավղի երկարությունը:

- 1) 9 սմ                      2) 4 սմ                      3) 6 սմ                      4) 12 սմ

3. Գտնել կոնի լրիվ մակերևույթի մակերեսը:

- 1)  $108\pi$  սմ<sup>2</sup>                      2)  $48\pi$  սմ<sup>2</sup>                      3)  $243\pi$  սմ<sup>2</sup>                      4)  $432\pi$  սմ<sup>2</sup>

4. Գտնել կոնի ծնորդի և բարձրության կազմած անկյունը:

- 1)  $30^\circ$                       2)  $60^\circ$                       3)  $45^\circ$                       4)  $90^\circ$

**23. Գնդի մակերևույթի մակերեսը  $900\pi$  է:**

1. Գտնել գնդի շառավղի երկարությունը:

- 1)  $15\sqrt{2}$                       2) 30                      3) 15                      4)  $3\sqrt[3]{25}$

2. Գտնել գնդային մակերևույթի մեծ շրջանագծի երկարությունը:

- 1)  $30\pi$                       2)  $30\sqrt{2}\pi$                       3)  $60\pi$                       4)  $50\pi$

3. Գտնել գնդի ծավալը:

- 1)  $4500\pi$                       2)  $9000\sqrt{2}\pi$                       3)  $36000\pi$                       4)  $900\pi$

4. Գտնել գնդի այն հատույթի մակերեսը, որի հեռավորությունը գնդի կենտրոնից 12 է:

- 1)  $72\pi$                       2)  $81\pi$                       3)  $144\pi$                       4)  $162\pi$

## ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ա/Հ	Ենթատաղադրանքի համարը			
	1	2	3	4
1	4	4	4	2
2	2	4	3	1
3	1	4	3	1
4	3	2	1	2
5	3	4	2	4
6	2	2	3	4
7	2	4	1	2
8	4	3	1	3
9	4	1	3	2
10	4	4	4	2
11	4	4	3	3
12	1	4	2	2
13	4	3	3	3
14	4	3	1	4
15	2	1	3	1
16	2	4	2	1
17	4	3	2	3
18	3	2	2	2
19	3	1	2	3
20	2	2	2	2
21	2	1	4	1
22	2	3	1	1
23	3	1	1	2

**ԲԱԺԻՆ 10. ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐԻ ՄԵԹՈԴ, ՎԵԿՏՈՐՆԵՐ**

**1. Տրված են  $A(-1;3)$ ,  $B(3;1)$  և  $O(0; 0)$  կետերը:**

1. Գտնել  $\overline{BA}$  վեկտորի կոորդինատները:

- 1)  $\{-4; 2\}$                       2)  $\{4; -2\}$                       3)  $\{-2; 2\}$                       4)  $\{2; 2\}$

2. Գտնել  $AB$  հատվածի միջնակետի կոորդինատները:

- 1)  $(1; 2)$                       2)  $(2; 2)$                       3)  $(1; 1)$                       4)  $(1; 4)$

3. Գտնել  $\overline{AB}$  վեկտորի երկարությունը:

- 1) 5                                  2)  $2\sqrt{3}$                                   3)  $2\sqrt{5}$                                   4) 2

4. Գտնել  $\overline{AO}$  և  $\overline{OB}$  վեկտորների կազմած անկյան աստիճանային չափը:

- 1)  $30^0$                                   2)  $90^0$                                   3)  $45^0$                                   4)  $60^0$

**2. Տրված են եռանկյան գագաթների կոորդինատները.**

$A(2;4)$ ,  $B(7;-5)$  և  $C(3;-3)$ :

1. Գտնել  $BC$  հատվածի միջնակետի կոորդինատները:

- 1)  $(2;-1)$                       2)  $(5;-4)$                       3)  $(5;-1)$                       4)  $(10;-8)$

2. Գտնել  $\overline{AB}$  և  $\overline{BC}$  վեկտորների սկալյար արտադրյալը:

- 1)  $-38$                                   2)  $-2$                                   3) 2                                  4) 38

3. Ինչպիսի՞ անկյուն են կազմում  $\overline{AB}$  և  $\overline{BC}$  վեկտորները:

- 1) սուր                                  2) բութ                                  3) ուղիղ                                  4) փռված

4. Գտնել  $A$  գագաթից տարված միջնագծի երկարությունը:

- 1) 7    2)  $\sqrt{73}$     3)  $\sqrt{21}$     4) 5

**3. Տրված են  $A(-1; 1)$ ,  $B(1; 2)$  և  $C(-3; 5)$  կետերը:**

1. Գտնել  $BC$  հատվածի միջնակետի կոորդինատները:  
 1)  $(-2; 7)$       2)  $(-1; 3,5)$       3)  $(2; -1,5)$       4)  $(4; -3)$
2. Գտնել  $BC$  տրամագծով շրջանագծի շառավղի երկարությունը:  
 1) 2,5      2) 5      3) 12,5      4) 10
3. Գտնել  $\overline{AB}$  և  $\overline{AC}$  վեկտորների սկալյար արտադրյալը:  
 1)  $-6$       2) 5      3) 0      4) 6
4. Ինչպիսի՞ անկյուն են կազմում  $\overline{AB}$  և  $\overline{AC}$  վեկտորները:  
 1) սուր      2) ուղիղ      3) բութ      4) փռված

**4. Տրված են  $ABCD$  զուգահեռագծի երեք գագաթները՝  $A(1;0)$ ,  $B(2;3)$ ,  $C(3;2)$ :**

1. Գտնել այդ զուգահեռագծի անկյունագծերի հատման կետի կոորդինատները:  
 1)  $(2; 1)$     2)  $(1; 2)$       3)  $(3; 1)$       4)  $(2; 2)$
2. Գտնել  $D$  գագաթի կոորդինատները:  
 1)  $(2; 0)$     2)  $(1; -1)$       3)  $(2; -1)$       4)  $(2; -2)$
3. Գտնել  $\overline{AC}$  վեկտորի երկարությունը:  
 1)  $2\sqrt{5}$     2)  $2\sqrt{2}$       3) 8      4) 20
4. Գտնել  $2 \cdot \overline{AB} - \overline{AC}$  վեկտորի կոորդինատները:  
 1)  $\{-3; 1\}$     2)  $\{2; 6\}$       3)  $\{0; -4\}$       4)  $\{0; 4\}$

**5. Տրված են  $A(3; -4)$ ,  $B(7; 6)$ ,  $C(12; 4)$  կետերը:**

1. Գտնել  $AB$  հատվածի միջնակետի կոորդինատները:

- 1)  $(5; -2)$                       2)  $(5; 1)$                       3)  $(4; -2)$                       4)  $(4; -1)$

2. Գտնել  $\overline{AB}$  վեկտորի երկարությունը:

- 1) 10,77                      2) 5                      3)  $2\sqrt{29}$                       4)  $3\sqrt{5}$

3. Գտնել  $\overline{AB}$  և  $\overline{BC}$  վեկտորների կազմած անկյան աստիճանային չափը:

- 1)  $30^0$                       2)  $90^0$                       3)  $60^0$                       4)  $45^0$

4. Գտնել  $y = x$  ուղղի նկատմամբ  $B$  կետի համաչափ կետի կոորդինատները:

- 1)  $(-7; -6)$                       2)  $(7; -6)$                       3)  $(-6; 7)$                       4)  $(6; 7)$

**6. Տրված են  $A(2; 0)$ ,  $B(-2; 6)$ ,  $C(0; -2)$  կետերը:**

1. Գտնել  $AB$  հատվածի երկարությունը:

- 1)  $\sqrt{52}$                       2)  $\sqrt{10}$                       3) 6                      4) 10

2. Գտնել  $D$  կետի կոորդինատները, եթե  $\overline{AB}$  և  $\overline{CD}$  վեկտորները հակադիր են:

- 1)  $(2; 4)$                       2)  $(-4; 2)$                       3)  $(4; -8)$                       4)  $(-4; 4)$

3. Նշված վեկտորներից  $n^{\circ}$ րն է հավասար  $\overline{AB} - \overline{CB}$  վեկտորին:

- 1)  $\overline{AC}$                       2)  $\overline{CA}$                       3)  $\overline{BA}$                       4)  $\overline{BC}$

4. Գտնել այն շրջանագծի հավասարումը, որի տրամագիծն է  $AB$  հատվածը:

- 1)  $x^2 + y^2 = 10$                       2)  $x^2 + (y - 3)^2 = 13$   
 3)  $x^2 + (y - 3)^2 = 5$                       4)  $x^2 + y^2 = 2,5$



**7. Տրված են  $A(1; 2)$ ,  $B(-4; 3)$ ,  $C(-2; 13)$  կետերը:**1. Գտնել  $\overline{AB}$  վեկտորի կոորդինատները:

- 1)
- $\{-3; 1\}$
- 2)
- $\{-5; 1\}$
- 3)
- $\{5; -1\}$
- 4)
- $\{-3; 5\}$

2. Գտնել  $AC$  հատվածի երկարությունը:

- 1)
- $\sqrt{130}$
- 2)
- $\sqrt{122}$
- 3)
- $\sqrt{126}$
- 4)
- $\sqrt{112}$

3. Գտնել  $\overline{AB}$  և  $\overline{BC}$  վեկտորների կազմած անկյան աստիճանային չափը:

- 1)
- $30^0$
- 2)
- $45^0$
- 3)
- $60^0$
- 4)
- $90^0$

4. Տրված կետերից որո՞նք են գտնվում  $x^2 + y^2 = 25$  շրջանագծի վրա:

- 1)
- $A$
- ն      2)
- $A$
- ն և
- $B$
- ն      3)
- $B$
- ն      4)
- $C$
- ն

**8. Տրված են  $A(2; -1)$ ,  $B(2; 4)$  և  $O(0; 0)$  կետերը:**1. Գտնել  $Oy$  առանցքի նկատմամբ  $A$  կետի համաչափ կետի կոորդինատները:

- 1)
- $(2; 1)$
- 2)
- $(-2; 1)$
- 3)
- $(-2; -1)$
- 4)
- $(1; -2)$

2. Գտնել  $\overline{AB}$  վեկտորի կոորդինատները:

- 1)
- $\{0; -5\}$
- 2)
- $\{4; -4\}$
- 3)
- $\{0; 5\}$
- 4)
- $\{4; -3\}$

3. Գտնել  $\overline{OA}$  և  $\overline{OB}$  վեկտորների կազմած անկյունը:

- 1)
- $30^0$
- 2)
- $180^0$
- 3)
- $60^0$
- 4)
- $90^0$

4. Գտնել  $O$  կենտրոնով և  $OA$  շառավղով շրջանագծի հավասարումը:

- 1)
- $y^2 - x^2 = 5$
- 2)
- $x^2 - y^2 = 5$
- 3)
- $y^2 + x^2 = \sqrt{5}$
- 4)
- $y^2 + x^2 = 5$

**9. Տրված են  $A(-1; 1)$ ,  $B(2; -3)$ ,  $C(5; 3)$  կետերը:**

1. Գտնել  $A$  և  $C$  կետերի հեռավորությունը:

- 1) 40                      2)  $2\sqrt{10}$                       3) 8                      4)  $4\sqrt{2}$

2. Գտնել  $AC$  հատվածի միջնակետի կոորդինատները:

- 1)  $(-6; 2)$                       2)  $(4; 4)$                       3)  $(2; 2)$                       4)  $(3; 1)$

3. Նշվածներից ո՞րն է  $AC$  տրամագծով շրջանագծի հավասարումը:

- 1)  $(x-2)^2 + (y-2)^2 = 10$                       2)  $(x+1)^2 + (y-1)^2 = 40$   
 3)  $(x-4)^2 + (y-4)^2 = 64$                       4)  $(x-3)^2 + (y-1)^2 = 16$

4. Ինչպիսի՞ անկյուն են կազմում  $\overline{AB}$  և  $\overline{AC}$  վեկտորները:

- 1) սուր                      2) ուղիղ                      3) բութ                      4) փռված

**10. Տրված են  $A(3;0)$ ,  $B(0;4)$  և  $C(-3;8)$  կետերը:**

1. Գտնել  $\overline{AB}$  վեկտորի հակադիր վեկտորի կոորդինատները:

- 1)  $\{-3; 4\}$                       2)  $\left\{-\frac{1}{3}; \frac{1}{4}\right\}$                       3)  $\{3; -4\}$                       4)  $\left\{\frac{1}{3}; -\frac{1}{4}\right\}$

2. Գտնել  $\overline{AB}$  և  $\overline{AC}$  վեկտորների սկալյար արտադրյալը:

- 1) 50                      2) 14                      3)  $\{-9; 12\}$                       4) 23

3. Գտնել  $\overline{CA}$  և  $\overline{CB}$  վեկտորների կազմած անկյան կոսինուսը:

- 1) 0                      2) 1                      3)  $\frac{1}{50}$                       4) -1

4. Կազմել  $B$  կենտրոնով այն շրջանագծի հավասարումը, որն անցնում է  $C$  կետով:

- 1)  $x^2 + (y-4)^2 = 25$                       2)  $(x-4)^2 + y^2 = 25$   
 3)  $(x-4)^2 + y^2 = 5$                       4)  $(x-4)^2 + y^2 = 7$

**11. Տրված են  $A(2,0)$ ,  $B(-2,6)$ ,  $C(0,-2)$  կետերը:**

1. Գտնել  $AB$  հատվածի երկարությունը:

- 1)  $\sqrt{52}$                       2)  $\sqrt{10}$                       3) 6                      4) 10

2. Գտնել  $D$  կետի կոորդինատները, եթե  $\overline{AB}$  և  $\overline{CD}$  վեկտորները հավասար են:

- 1) (2; 4)                      2) (-4; 2)                      3) (-4; 4)                      4) (2; 8)

3.  $\lambda$ -ի  $n^{\circ}$ ր արժեքի դեպքում  $\overline{AB}$  և  $\overline{AB} + \lambda\overline{AC}$  վեկտորները կլինեն ուղղահայաց:

- 1) 13                      2) -8                      3) 10                      4) 0

4. Գտնել այն շրջանագծի հավասարումը, որի տրամագիծն է  $AB$  հատվածը:

- 1)  $x^2 + y^2 = 10$                       2)  $x^2 + (y-3)^2 = 13$   
 3)  $x^2 + (y-3)^2 = 5$                       4)  $x^2 + y^2 = 2,5$

**12. Տրված են  $A(3; 3)$ ,  $B(-3; 3)$  և  $O(0; 0)$  կետերը:**

1. Գտնել  $\overline{AB}$  վեկտորի կոորդինատները:

- 1)  $\{-6; 0\}$                       2)  $\{6; 0\}$                       3)  $\{0; 6\}$                       4)  $\{0; -6\}$

2. Գտնել  $2 \cdot \overline{OA} + \overline{AB}$  վեկտորի երկարությունը:

- 1)  $\sqrt{72}$                       2) 36                      3) 12                      4) 6

3. Գտնել  $AOB$  անկյան աստիճանային չափը:

- 1)  $10^0$                       2)  $45^0$                       3)  $90^0$                       4)  $180^0$

4. Գտնել  $A$  և  $B$  կետերով անցնող ուղղի հավասարումը:

- 1)  $x = 3$                       2)  $y = 3$                       3)  $y = x + 3$                       4)  $y = -x + 3$

**13. Տրված են  $O(0;0)$ ,  $A(2;1)$  և  $B(-1;2)$  կետերը:**

1. Գտնել  $OA$  հատվածի երկարությունը:

- 1) 3                      2)  $\sqrt{3}$                       3) 5                      4)  $\sqrt{5}$

2. Գտնել  $AB$  հատվածի միջնակետի կոորդինատները:

- 1)  $\left(\frac{1}{2}; \frac{3}{2}\right)$                       2)  $\left(\frac{3}{2}; -\frac{1}{2}\right)$                       3)  $\left(-\frac{3}{2}; \frac{1}{2}\right)$                       4)  $\left(-\frac{1}{2}; -\frac{3}{2}\right)$

3. Գտնել  $\overline{OA} \cdot (\overline{OA} + \overline{OB})$  սկալյար արտադրյալը:

- 1) 0                      2) -5                      3) 5                      4)  $\sqrt{5}$

4. Գտնել  $Ox$  առանցքի վրա այն կետի կոորդինատները, որը հավասարաեռ է  $A$  և  $B$  կետերից:

- 1) (0; 0)                      2) (1; 0)                      3) (0,5; 0)                      4) (-0,5; 0)

**14.  $ABC$  եռանկյան գագաթներն են՝  $A(0; 1)$ ,  $B(1; -4)$  և  $C(5; 2)$ :**

1. Ո՞ր քառորդին է պատկանում  $B$  կետը:

- 1) I                      2) II                      3) III                      4) IV

2. Գտնել  $A$  գագաթից տարված  $AM$  միջնագծի երկարությունը:

- 1) 3                      2)  $\sqrt{13}$                       3)  $2\sqrt{2}$                       4)  $3\sqrt{5}$

3. Գտնել  $\overline{AC}$  և  $\overline{AB}$  վեկտորների սկալյար արտադրյալը:

- 1) 0                      2) 10                      3) -24                      4) -4

4. Ո՞րն է  $B$  և  $C$  կետերով անցնող ուղղի հավասարումը:

- 1)  $2x - 3y + 11 = 0$                       2)  $3x - 2y - 11 = 0$   
 3)  $3x - 2y + 11 = 0$                       4)  $2x + 3y - 11 = 0$

**15. Տրված են  $A(0; 1)$ ,  $B(1; 0)$  և  $C(-2; -2)$  կետերը:**

1. Գտնել  $AOB$  եռանկյան մակերեսը, որտեղ  $O$ -ն կոորդինատների սկզբնակետն է:

1)  $\frac{1}{2}$

2) 1

3)  $\sqrt{2}$

4)  $\frac{\sqrt{2}}{2}$

2. Գտնել  $ABC$  եռանկյան  $CD$  միջնագծի երկարությունը:

1) 8,5

2) 3

3)  $\frac{5\sqrt{2}}{2}$

4)  $\sqrt{2}$

3. Գտնել  $\overline{AC}$  վեկտորի կոորդինատները:

1)  $\{2; 3\}$

2)  $\{2; -3\}$

3)  $\{-2; -3\}$

4)  $\left\{-1; -\frac{1}{2}\right\}$

4. Գտնել  $A$  և  $B$  կետերով անցնող ուղղի հավասարումը:

1)  $x + y = 0$

2)  $x + y = 1$

3)  $x - y = 1$

4)  $x - y = 0$

**16. Տրված են  $A(3; 0)$ ,  $B(0; 4)$ ,  $C(-2; 1)$  և  $D(1; -2)$  կետերը:**

1. Տրված կետերից ո՞րն է գտնվում  $Oy$  առանցքի վրա:

1)  $A$

2)  $B$

3)  $C$

4)  $D$

2. Ստորև նշված վեկտորներից ո՞րն է համագիծ  $\overline{AB}$  վեկտորին.

1)  $\vec{a}\{3; 4\}$

2)  $\vec{b}\{-3; -4\}$

3)  $\vec{c}\{9; -8\}$

4)  $\vec{d}\{-6; 8\}$

3. Գտնել  $\overline{AB}$  և  $\overline{BC}$  վեկտորների սկալյար արտադրյալը:

1)  $-6$

2) 6

3)  $-4$

4) 4

4. Ստորև նշված ուղիղներից ո՞րն է անցնում  $A$  և  $B$  կետերով.

1)  $4x + 3y + 12 = 0$

2)  $y = \frac{4}{3}x + 4$

3)  $y = -\frac{4}{3}x + 4$

4)  $4x - 3y - 12 = 0$

17. Տրված են  $ABCD$  ուղղանկյան երեք գագաթները՝  
 $A(-4;-2)$ ,  $B(-4;3)$ ,  $C(5;3)$ :

1. Գտնել  $D$  գագաթի կոորդինատները:

- 1)  $(5;-3)$                       2)  $(4;-2)$                       3)  $(4;-3)$                       4)  $(5;-2)$

2. Գտնել  $\overline{AB}$  և  $\overline{BD}$  վեկտորների սկալյար արտադրյալը:

- 1) 25                                  2) -25                                  3) 47                                  4) -47

3. Գտնել  $ABCD$  ուղղանկյան մակերեսը:

- 1) 45                                  2) 35                                  3) 40                                  4) 20

4. Գտնել  $\overline{AB} - \frac{1}{2}\overline{AC}$  վեկտորի կոորդինատները:

- 1)  $\left\{-\frac{3}{2}; \frac{1}{2}\right\}$                       2)  $\left\{-\frac{9}{2}; \frac{5}{2}\right\}$                       3)  $\left\{\frac{1}{2}; -\frac{9}{2}\right\}$                       4)  $\{-9; 1\}$

18. Տրված են  $OAB$  եռանկյան գագաթների կոորդինատները՝  
 $O(0;0)$ ,  $A(2;2)$ ,  $B(4;0)$ :

1. Գտնել  $O$  կետի նկատմամբ  $B$  կետի համաչափ կետի կոորդինատները:

- 1)  $(0; 4)$                                   2)  $(-4; 0)$                                   3)  $(4; 0)$                                   4)  $(0; -4)$

2. Գտնել  $OAB$  եռանկյան  $AM$  միջնագծի երկարությունը:

- 1) 2    2)  $\sqrt{2}$     3) 4    4)  $2\sqrt{2}$

3. Գտնել  $\overline{OA}$  և  $\overline{BO}$  վեկտորների կազմած անկյան աստիճանային չափը:

- 1)  $135^0$                                   2)  $45^0$                                   3)  $90^0$                                   4)  $120^0$

4. Գտնել  $OAB$  եռանկյանն արտագծած շրջանագծի հավասարումը:

- 1)  $(x-2)^2 + (y-2)^2 = 4$                       2)  $x^2 + (y-2)^2 = 4$   
 3)  $(x-2)^2 + y^2 = 4$                                   4)  $(x-2)^2 + y^2 = 16$

**19. Տրված են  $\vec{a}\{1; -2\}$  և  $\vec{b}\{2; 1\}$  վեկտորները:**

1. Գտնել  $\vec{a}$  և  $\vec{b}$  վեկտորների կազմած անկյան աստիճանային չափը:

- 1)  $30^0$                       2)  $45^0$                       3)  $60^0$                       4)  $90^0$

2. Գտնել  $\vec{a}$  վեկտորին հակուղղված և նրա երկարությունից 5 անգամ մեծ երկարությամբ վեկտորի կոորդինատները:

- 1)  $\{5; -10\}$                       2)  $\{-5; 10\}$                       3)  $\{-1; 2\}$                       4)  $\{1; -2\}$

3. Գտնել  $\vec{p} = -5\vec{a} + 2\vec{b}$  վեկտորի կոորդինատները:

- 1)  $\{-9; 12\}$                       2)  $\{-1; 12\}$                       3)  $\{-5; 2\}$                       4)  $\{2; -5\}$

4. Գտնել  $\vec{p} = -5\vec{a} + 2\vec{b}$  վեկտորի երկարությունը:

- 1) 15                              2) 5                              3)  $\sqrt{29}$                               4)  $\sqrt{145}$

**20. Տրված են  $\vec{a}\{2; -4\}$ ,  $\vec{b}\{1, 2\}$ ,  $\vec{c}\{1; -2\}$ ,  $\vec{d}\{-2; -4\}$  վեկտորները:**

1. Նշվածներից ո՞րն է համուղղված վեկտորների զույգ.

- 1)  $\vec{a}, \vec{c}$                               2)  $\vec{b}, \vec{d}$                               3)  $\vec{a}, \vec{b}$                               4)  $\vec{a}, \vec{d}$

2. Նշվածներից ո՞րն է հակուղղված վեկտորների զույգ.

- 1)  $\vec{b}, \vec{d}$                               2)  $\vec{a}, \vec{b}$                               3)  $\vec{b}, \vec{c}$                               4)  $\vec{c}, \vec{d}$

3. Գտնել  $\vec{b}$  և  $\vec{d}$  վեկտորների կազմած անկյան աստիճանային չափը:

- 1)  $60^0$                               2)  $90^0$                               3)  $180^0$                               4)  $0^0$

4. Գտնել  $\vec{a} + 2\vec{b}$  վեկտորի երկարությունը:

- 1) 4                                      2)  $2\sqrt{20}$                               3)  $\sqrt{20} + \sqrt{5}$                               4) 2

21. Տրված են  $\vec{a} \{5; 4\}$ ,  $\vec{b} \{2; -3\}$  և  $\vec{c} \{-4; 5\}$  վեկտորները:

1. Գտնել  $3\vec{a} - 4\vec{b}$  վեկտորի կոորդինատները:

- 1)  $\{7; -24\}$       2)  $\{7; 0\}$       3)  $\{7; 24\}$       4)  $\{-7; -24\}$

2. Գտնել  $\vec{a}$  և  $\vec{c}$  վեկտորների կազմած անկյան աստիճանային չափը:

- 1)  $30^0$       2)  $60^0$       3)  $90^0$       4)  $120^0$

3. Գտնել  $\vec{a} + \vec{c}$  վեկտորի երկարությունը:

- 1)  $2\sqrt{41}$       2)  $\sqrt{82}$       3)  $4\sqrt{41}$       4) 10

4. Գտնել  $\vec{a} \cdot \vec{b} + |\vec{c}|^2$  արտահայտության արժեքը:

- 1) 41      2) 40      3) 39      4)  $\sqrt{41} - 2$

22. Տրված են  $\overline{AC} \{-5; 3\}$  և  $\overline{BC} \{4; -2\}$  վեկտորները:

1. Գտնել  $2\overline{AC} + 3\overline{BC}$  վեկտորի կոորդինատները:

- 1)  $\{2; 3\}$       2)  $\{2, 0\}$       3)  $\{4; 6\}$       4)  $\{-2; 5\}$

2. Նշվածներից  $n^{\circ}$ ր վեկտորն է հակուղված  $\overline{AC}$  վեկտորին.

- 1)  $\{3; -5\}$       2)  $\{-10; 6\}$       3)  $\left\{-\frac{1}{5}; \frac{1}{3}\right\}$       4)  $\{10; -6\}$

3. Գտնել  $\overline{AC}$  և  $\overline{BC}$  վեկտորների սկալյար արտադրյալը:

- 1) -14      2) 26      3) -26      4) 0

4. Գտնել  $\overline{AC} - \overline{CB}$  վեկտորի երկարությունը:

- 1)  $\sqrt{106}$       2) 106      3) 2      4)  $\sqrt{2}$



**23. Տրված են  $A(2; -3)$  և  $B(1; -2)$  կետերը:**

1. Գտնել  $AB$  հատվածի երկարությունը:

- 1) 2                      2)  $\sqrt{2}$                       3)  $\sqrt{26}$                       4)  $\sqrt{3}$

2.  $\overline{AB}$  վեկտորը վերլուծել ըստ  $\vec{i}$  և  $\vec{j}$  կոորդինատային վեկտորների:

- 1)  $-\vec{i} + \vec{j}$                       2)  $-\vec{i} - \vec{j}$                       3)  $\vec{i} - \vec{j}$                       4)  $\vec{i} + \vec{j}$

3. Գտնել  $\overline{AB}$  և  $\vec{i}$  վեկտորների կազմած անկյան աստիճանային չափը:

- 1)  $0^0$                       2)  $90^0$                       3)  $45^0$                       4)  $135^0$

4. Գտնել  $A$  կենտրոնով և  $AB$  շառավղով շրջանագծի հավասարումը:

- 1)  $(x-2)^2 + (y+3)^2 = \sqrt{2}$                       2)  $(x-2)^2 + (y-3)^2 = \sqrt{2}$   
 3)  $(x-2)^2 + (y+3)^2 = 2$                       4)  $(x-2)^2 + (y-3)^2 = 2$

**24. Տրված են  $\overline{AC}\{0;9\}$  և  $\overline{CB}\{8;-15\}$  վեկտորները:**

1. Գտնել  $\overline{AC} + 2\vec{i}$  վեկտորի կոորդինատները:

- 1)  $\{0;11\}$                       2)  $\{0;18\}$                       3)  $\{2;9\}$                       4)  $\{0;7\}$

2. Գտնել  $\overline{AC} + \overline{CB}$  վեկտորի երկարությունը:

- 1) 2                      2) 10                      3) 26                      4) 14

3.  $x$ -ի ի՞նչ արժեքի դեպքում  $\vec{a} \{3;x\}$  վեկտորն ուղղահայաց կլինի  $\overline{CB}$  վեկտորին:

- 1)  $-20$                       2) 1,6                      3) 4                      4) 2

4. Նշված վեկտորներից  $n^{\circ}$ ը հավասար չէ  $\overline{AC}$  վեկտորին.

- 1)  $\overline{AB} + \overline{BC}$                       2)  $\overline{BC} - \overline{BA}$                       3)  $\overline{BA} + \overline{CB} - 2\overline{CA}$                       4)  $\overline{BC} - \overline{AC}$

**25. Տրված են  $A(2; -3)$  և  $B(5; -7)$  կետերը:**

1. Գտնել կոորդինատների սկզբնակետի նկատմամբ  $B$  կետի համաչափ կետի կոորդինատները:

- 1)  $(1; -6)$                       2)  $(5; 7)$                       3)  $(-5; -7)$                       4)  $(-5; 7)$

2. Գտնել  $\overline{AB}$  վեկտորի երկարությունը:

- 1)  $-1$                                   2)  $7$                                   3)  $5$                                   4)  $10$

3. Գտնել  $\overline{AB}$  և  $\vec{i}$  կոորդինատային վեկտորի սկայյար արտադրյալը:

- 1)  $3$                                       2)  $-4$                                       3)  $-1$                                       4)  $1$

4.  $m$ -ի  $n^\circ$  արժեքի դեպքում  $\overline{AB}$  և  $\vec{a}\{m; -8\}$  վեկտորները կլինեն համագիծ:

- 1)  $6$                                       2)  $-8$                                       3)  $3$                                       4)  $-6$

**26. Տրված են  $B(2; 5)$  կետը և  $\vec{b}\{-3; 1\}$  վեկտորը:**

1. Գտնել  $Oy$  առանցքի նկատմամբ  $B$  կետի համաչափ կետի կոորդինատները:

- 1)  $(2; -5)$                       2)  $(-2; 5)$                       3)  $(-5; -2)$                       4)  $(-2; -5)$

2. Նշվածներից  $n^\circ$ րն է  $B$  կետով անցնող և օրդինատների առանցքին զուգահեռ ուղղի հավասարումը.

- 1)  $y-5=0$                       2)  $y+5=0$                       3)  $x-2=0$                       4)  $x+2=0$

3. Գտնել  $\vec{b}$ -ին հակուղղված այն վեկտորի կոորդինատները, որի երկարությունը 2 անգամ մեծ է  $\vec{b}$ -ի երկարությունից:

- 1)  $\{-1; 3\}$                       2)  $\{-5; -1\}$                       3)  $\{6; -2\}$                       4)  $\{-6; 2\}$

4. Գտնել  $A$  կետի կոորդինատները, եթե  $\overline{AB} = 2\vec{b}$ :

- 1)  $(-8; -3)$                       2)  $(8; 3)$                                   3)  $(-4; 7)$                       4)  $(4; -7)$

## ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ա/Հ	Ենթատառադրանքի համարը			
	1	2	3	4
1	1	1	3	2
2	2	1	2	2
3	2	1	3	2
4	1	3	2	4
5	2	3	2	4
6	1	3	1	2
7	2	1	4	3
8	3	3	4	4
9	2	3	1	1
10	3	1	2	1
11	1	3	1	2
12	1	4	3	2
13	4	1	3	1
14	4	2	1	2
15	1	3	3	2
16	2	4	1	3
17	4	2	1	2
18	2	1	1	3
19	4	2	2	4
20	1	1	3	1
21	3	3	2	3
22	2	4	3	4
23	2	1	4	3
24	3	2	2	4
25	4	3	1	1
26	2	3	3	2

## ԳԼՈՒԽ 2

### ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԿԱՐՃ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐՈՎ

Երկրորդ գլխի առաջադրանքների պատասխանները ոչ բացասական ամբողջ թվեր են: Պատասխանները պետք է լրացնել պատասխանների ձևաթղթում այդ նպատակի համար հատկացված տեղում: Պատասխանում պետք չէ նշել չափման միավորը:

Այս առաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է գրել կարճ պատասխանը՝ նախատեսված հորիզոնական երեք վանդակներից յուրաքանչյուրում գրելով մեկ թվանշան: Առաջադրանքի պատասխան կարող է լինել 0-ից 999-ը ամբողջ թվերից որևէ մեկը (չափման միավորը չի նշվում): Եթե պատասխանը միանիշ թիվ է, ապա այն պետք է լրացնել նշված երեք վանդակներից վերջինում՝ բաց թողնելով առաջին և երկրորդ վանդակները, երկնիշ պատասխանը պետք է լրացնել երկրորդ և երրորդ վանդակներում՝ բաց թողնելով առաջին վանդակը: Օրինակ՝ եթե 42-րդ առաջադրանքի պատասխանը 55 երկնիշ թիվն է, ապա այն պետք է լրացնել հետևյալ ձևով՝

42   55

**ԲԱԺԻՆ 1. ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՇՎՈՒՄ**

**1. Գտնել արտահայտության արժեքը.**

1.  $a^4 + \frac{1}{a^4}$ , եթե  $a + \frac{1}{a} = -2$  :

2.  $\frac{1}{\sqrt{2}+1} + \frac{1}{\sqrt{3}+\sqrt{2}} + \frac{1}{\sqrt{4}+\sqrt{3}}$  :

3.  $8 \cos\left(2 \arcsin \frac{1}{4}\right)$  :

4.  $\sqrt{4 \lg 2 + \lg^2 5} + \sqrt{4 \lg 5 + \lg^2 2}$  :

**2. Գտնել արտահայտության արժեքը.**

1.  $x_1^2 + x_2^2$ , եթե  $x_1$ -ը և  $x_2$ -ը  $x^2 + 5x - 1 = 0$  հավասարման արմատներն են:

2.  $(\sqrt{3}-1)\sqrt{4+2\sqrt{3}}$  :

3.  $\frac{4\sqrt{3} \cdot \operatorname{tg} 15^\circ}{1 - \operatorname{tg}^2 15^\circ}$  :

4.  $\frac{f(9)}{f(-9)}$ , եթե  $f$ -ը  $(-\infty; +\infty)$ -ում որոշված, 4 հիմնական պարբերու-

թյանը ֆունկցիա է, ընդ որում  $f(1) = 6, f(3) = 3$  :

**3. Գտնել արտահայտության արժեքը.**

1.  $(3 - \sqrt{5}) \cdot \sqrt{14 + 6\sqrt{5}}$  :

2.  $tg 75^\circ + ctg 75^\circ$  :

3.  $4 \cdot 3^{\log_5 2} - 2^{2 + \log_5 3}$  :

4.  $\frac{f(21)}{f(-13)}$ , եթե  $f$  -ը  $(-\infty; +\infty)$ -ում որոշված, 4 հիմնական պարբերությամբ ֆունկցիա է, ընդ որում  $f(1) = 6, f(3) = 3$  :

**4. Գտնել արտահայտության արժեքը.**

1.  $|2\sqrt{2} - 3| + \sqrt{(1 - 2\sqrt{2})^2}$  :

2.  $16(\sin 170^\circ \cos 20^\circ - \sin 20^\circ \cos 170^\circ)$  :

3.  $7^x + 7^{-x}$ , եթե  $\sqrt{7^x} - \sqrt{7^{-x}} = 7$  :

4.  $\log_2 5 \cdot \log_5 6 \cdot \log_6 8$  :

**5. Գտնել արտահայտության արժեքը.**

1.  $-8(\cos 140^\circ \cos 20^\circ + \sin 140^\circ \sin 20^\circ)$  :

2.  $3^x + 3^{-x}$ , եթե  $3^{\frac{x}{2}} + 3^{-\frac{x}{2}} = 6$  :

3.  $|2\sqrt{3} - 4| + \sqrt{(3 - 2\sqrt{3})^2}$  :

4.  $\log_3 5 \cdot \log_5 7 \cdot \log_7 9$  :

**6. Գտնել արտահայտության արժեքը.**

1.  $\frac{x^{\frac{7}{12}} + 0,8 \cdot x^{\frac{1}{4}}}{x^{\frac{7}{12}} - 0,1 \cdot x^{\frac{1}{4}}}$ , եթե  $x = 0,008$ :

2.  $\sqrt{(0,7 - \sqrt{0,5})^2} + \sqrt[3]{(\sqrt{0,5} - 0,8)^3} + \sqrt[4]{(\sqrt{2} - 1,5)^4}$ :

3.  $40 \sin^2 \frac{\pi}{8} \cos^2 \frac{\pi}{8}$ :

4.  $\log_x^2 y + \log_y^2 x$ , եթե  $\log_x y - \log_y x = 7$ :

**7. Գտնել արտահայտության արժեքը.**

1.  $\frac{1}{x_1} + \frac{1}{x_2}$ , եթե  $x_1$ -ը և  $x_2$ -ը  $x^2 + 24x - 2 = 0$  հավասարման արմատներն են:

2.  $\sqrt{6 + 2\sqrt{5}} (\sqrt{5} - 1)$ :

3.  $4 \cos 75^\circ \cos 15^\circ + 4 \sin 75^\circ \sin 15^\circ$ :

4.  $2^{\log_4(\log_2 6)} - \sqrt{\log_2 6}$ :

**8. Գտնել արտահայտության արժեքը.**

1.  $\left(a^5 + \frac{1}{a^5}\right)$ -ը, եթե  $a + \frac{1}{a} = 2$ :

2.  $\sqrt[12]{5} \cdot \sqrt[4]{5} : \sqrt[3]{5}$ :

3.  $\sin 20^\circ + 2 \sin^2 35^\circ$ :

4.  $10^{\lg^2 5} \cdot 5^{\lg 2}$ :

**9. Գտնել արտահայտության արժեքը.**

1.  $|a+b|$  -ն, եթե  $a^2 + b^2 = 31$  և  $ab = 9$  :

2.  $\frac{5}{1+\sqrt{6}} + \frac{5}{\sqrt{6}+\sqrt{11}} + \frac{5}{\sqrt{11}+4}$  :

3.  $\operatorname{tg} 20^\circ \cos 50^\circ + \cos 40^\circ$  :

4.  $\log_6^2 3 + (\log_6 3 + 2) \log_6 12$  :

**10. Գտնել արտահայտության արժեքը.**

1.  $|a-b|$  -ն, եթե  $a^2 + b^2 = 33$  և  $ab = 4$  :

2.  $2x_1x_2^2 + 2x_1^2x_2 - x_1x_2$ , որտեղ  $x_1$ -ը և  $x_2$ -ը  $x^2 - 8x + 6 = 0$  հավասարման արմատներն են:

3.  $\left(\frac{1}{4}\right)^{\log_{0,5} 3 - 2}$  :

4.  $\operatorname{ctg} \frac{\pi}{8} - \operatorname{tg} \frac{\pi}{8}$  :

**11. Գտնել արտահայտության արժեքը.**

1.  $\sqrt{x+2\sqrt{x-1}} + \sqrt{x-2\sqrt{x-1}}$ , եթե  $x \in [1, 2]$  :

2.  $(a+b)(b+c)(a+c) + abc$ , եթե  $a+b+c = 0$  :

3.  $\frac{\sqrt{6}}{\sin 15^\circ + \cos 15^\circ}$  :

4.  $\log_{1,5}(3+\sqrt{6})^6 - \log_{1,5}(2+\sqrt{6})^6$  :



**12. Գտնել արտահայտության արժեքը.**

1.  $x_1^2 x_2 + x_2^2 x_1$ , եթե  $x_1$ -ն և  $x_2$ -ը  $x^2 - 4x + 2 = 0$  հավասարման արմատներն են:
2.  $\sqrt{14 - 6\sqrt{5}} + 3 + \sqrt{5}$ :
3.  $25 \sin\left(2 \arcsin \frac{4}{5}\right)$ :
4.  $\log_{\sqrt{3}} 7 \cdot \log_{\sqrt{7}} 8 \cdot \log_8 3$ :

**13. Գտնել արտահայտության արժեքը.**

1.  $x^2 + y^2$ , եթե  $x + y = \sqrt{18}$  և  $x - y = \sqrt{14}$ :
2.  $(x_1 + x_2)$ -ը, եթե  $x_1, x_2$  թվերը  $4^x - 15 \cdot 2^x + 16 = 0$  հավասարման արմատներն են:
3.  $16 \cos \frac{\pi}{5} \cos \frac{2\pi}{5}$ :
4.  $8 \log_{ab} b^2$ , եթե  $\log_b a = 7$ :

**14. Գտնել արտահայտության արժեքը.**

1.  $x - |3x - 5| + |4x - 9|$ , եթե  $x \leq \frac{5}{3}$ :
2.  $\sqrt{x_1^2 + x_2^2 + x_3^2}$ , որտեղ  $x_1, x_2, x_3$ -ը  $x^3 - 7x^2 + 12x = 0$  հավասարման արմատներն են:
3.  $\operatorname{tg} 44^\circ \cdot \operatorname{tg} 45^\circ \cdot \operatorname{tg} 46^\circ$ :
4.  $8 \log_{ab} b$ , եթե  $\log_a b = 3$ :

**15. Գտնել արտահայտության արժեքը.**

1.  $\sqrt{9-4\sqrt{5}}+8-\sqrt{5}$  :

2.  $28\sin\frac{5\pi}{12}\cdot\cos\frac{5\pi}{12}$  :

3.  $2^x+2^{-x}$ , եթե  $4^x+4^{-x}=47$  :

4.  $2^{\sqrt{\log_2 3}}-3^{\sqrt{\log_3 2}}$  :

**16. Գտնել արտահայտության արժեքը.**

1.  $a^3-a^{-3}$ , եթե  $a-a^{-1}=2$  :

2.  $\frac{x^2\sqrt{(x+4)^2-16x}}{4-x}$ , եթե  $x=\sqrt{7}$  :

3.  $\arctg(\operatorname{tg}6)+2\pi$  :

4.  $\frac{4}{\log_2 100}+\log_{\sqrt{10}} 5$  :

**17. Գտնել արտահայտության արժեքը.**

1.  $a^2+b^2+c^2$ , եթե  $a+b+c=12$ ,  $ab+bc+ca=47$  :

2.  $|x-7|-|x+5|$ , եթե  $x\in(-\infty; -5)$  :

3.  $\frac{16}{\pi}\cdot\arctg\left(\operatorname{tg}\frac{9\pi}{8}\right)$  :

4.  $20^{3\log_5 2}\cdot(0,25)^{\log_5 8}$  :

**18. Գտնել արտահայտության արժեքը.**

- $ab + bc + ca$ , եթե  $a + b + c = 12$ ,  $a^2 + b^2 + c^2 = 64$  :
- $20 \cdot \sin 2\alpha$ , եթե  $\sin \alpha + \cos \alpha = \frac{\sqrt{5}}{2}$  :
- $2\pi - \arccos(\cos 5)$  :
- $(2 - \log_{\sqrt{2}} 10)(2 - \log_{\sqrt{5}} 10)$  :

**19. Գտնել արտահայտության արժեքը.**

- $\frac{a+1}{a-1} - \frac{b+1}{b-1}$ , եթե  $2b - ab = 1$  ( $a \neq 1$ ,  $b \neq 1$ ) :
- $\sqrt{28 + 10\sqrt{3}} + \sqrt{7 - 4\sqrt{3}}$  :
- $10 \cdot \sin 2\alpha$ , եթե  $\sin \alpha - \cos \alpha = \sqrt{0,2}$  :
- $\log_{2\sqrt{2}}(5 + \sqrt{17}) + \log_{2\sqrt{2}}(5 - \sqrt{17})$  :

**20. Գտնել արտահայտության արժեքը.**

- $\frac{x+y+z}{a+b+c}$ , եթե  $\frac{x}{a} = \frac{y}{b} = \frac{z}{c} = 12$  :
- $\sqrt[3]{2\sqrt{2}} - \sqrt{|2\sqrt{2} - 3|}$  :
- $\arcsin(1 - \sqrt{2}) + \arcsin\left(\frac{1}{\sqrt{2} + 1}\right)$  :
- $25^x + 25^{-x}$ , եթե  $5^x + 5^{-x} = 4$  :

**21. Գտնել արտահայտության արժեքը.**

1.  $x_1^2 x_2 + x_1 x_2^2$ -ն, եթե  $x_1$ -ը և  $x_2$ -ը  $x^2 - 4x + 1 = 0$  հավասարման արմատներն են:

2.  $\sqrt{40+x} \cdot \sqrt{30-x}$ , եթե  $\sqrt{40+x} + \sqrt{30-x} = 10$ :

3.  $\frac{4}{\sqrt{15}} \sin\left(\arccos \frac{1}{4}\right)$ :

4.  $\lg 500 \cdot \lg 200 - \lg 5 \cdot \lg 2$ :

www.atc.am

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Հ/Հ	1	2	3	4
1	2	1	7	3
2	27	2	2	2
3	4	4	0	2
4	2	8	51	3
5	4	34	1	2
6	10	0	5	51
7	12	4	2	0
8	2	1	1	5
9	7	3	1	4
10	5	90	144	2
11	2	0	2	3
12	8	6	24	4
13	16	4	4	2
14	4	5	1	6
15	6	7	7	0
16	14	7	6	2
17	50	12	2	8
18	40	5	5	4
19	2	7	8	2
20	12	1	0	14
21	4	15	1	6

## ԲԱԺԻՆ 2. ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ

1. Տրված է  $|x^2 + 2x| = a - 2$  հավասարումը, որտեղ  $a$ -ն պարամետր է:

1. Գտնել  $a$ -ի ամենափոքր արժեքը, որի դեպքում հավասարումն ունի արմատ:
2. Գտնել  $a$ -ի այն արժեքը, որի դեպքում հավասարումն ունի երեք արմատ:
3. Գտնել 10-ը չգերազանցող բոլոր այն բնական  $a$ -երի քանակը, որոնց դեպքում հավասարումն ունի ճիշտ երկու արմատ:
4. Զանգի<sup>օ</sup> արմատ ունի հավասարումը  $a = \sqrt{19} - \sqrt{5}$  արժեքի դեպքում:

2. Տրված է  $(a^2 - 2a)x^2 + 2ax - 1 = 0$  հավասարումը, որտեղ  $a$ -ն պարամետր է:

1. Գտնել  $a$ -ի այն դրական արժեքը, որի դեպքում 1-ը հավասարման արմատ է:
2. Գտնել  $a$ -ի այն ամբողջ արժեքը, որի դեպքում հավասարումն արմատ չունի:
3. Գտնել  $a$ -ի ամենամեծ արժեքը, որի դեպքում հավասարումն ունի միակ արմատ:
4. Գտնել  $a$ -ի ամենափոքր դրական ամբողջ արժեքը, որի դեպքում հավասարումն ունի տարբեր նշանի երկու արմատ:

3. Տրված է  $x^4 - 10x^2 + a = 0$  հավասարումը, որտեղ  $a$ -ն պարամետր է:

1.  $a$ -ի ի՞նչ արժեքի դեպքում է  $\sqrt{5}$  թիվը տրված հավասարման արմատ:
2. Գտնել հավասարման արմատների գումարը, եթե  $a = \sqrt{7}$ :
3.  $a$ -ի ի՞նչ արժեքի դեպքում տրված հավասարումն ունի ճիշտ երեք արմատ:
4. Գտնել  $a$ -ի ամենամեծ բնական արժեքը, որի դեպքում հավասարումն ունի ճիշտ չորս արմատ:

4. Տրված է  $(a-2)x^2 - 2(a+3)x + 4a = 0$  հավասարումը, որտեղ  $a$ -ն պարամետր է:

1.  $a$ -ի  $n^{\circ}$  արժեքի դեպքում 2-ը կլինի հավասարման արմատ:
2.  $a$ -ի  $n^{\circ}$  ամբողջ արժեքի դեպքում հավասարումը կունենա ճիշտ մեկ արմատ:
3.  $a$ -ի  $h^{\circ}$  արժեքի դեպքում հավասարման արմատների գումարը կլինի 7:
4.  $a$ -ի  $h^{\circ}$  արժեքի դեպքում հավասարման արմատների արտադրյալը կլինի 12:

5. Տրված է  $\log_2(x^2 - 10x + 89) = b$  հավասարումը, որտեղ  $b$ -ն պարամետր է:

1.  $b$ -ի  $n^{\circ}$  արժեքի դեպքում հավասարումն ունի միակ արմատ:
2. Գտնել  $b$ -ի այն ամենափոքր ամբողջ արժեքը, որի դեպքում հավասարումն ունի մեկից ավելի արմատ:
3. Գտնել հավասարման արմատների գումարը  $b = 7,5$  արժեքի դեպքում:
4. Գտնել  $b$ -ի այն արժեքը, որի դեպքում  $-3$ -ը հավասարման արմատ է:

6. Տրված է  $\sqrt{\frac{x}{2\pi-x}} \cdot \left( \sin \pi x + \operatorname{tg} \frac{\pi x}{2} \right) = 0$  հավասարումը:

1. Քանի՞ ամբողջ թիվ է պարունակում հավասարման ձախ մասի արտահայտության առաջին արտադրիչի ԹԱԲ-ը:
2. Քանի՞ ամբողջ թիվ է պարունակում հավասարման ԹԱԲ-ը:
3. Ո՞րն է հավասարման ամենափոքր ամբողջ արմատը:
4. Քանի՞ ամբողջ արմատ ունի հավասարումը:

7. Տրված է  $\begin{cases} ax + y = a^2 \\ x + ay = 1 \end{cases}$  համակարգը, որտեղ  $a$ -ն պարամետր է:

1.  $a$ -ի քանի՞ արժեքի դեպքում համակարգը լուծում չունի:
2. Գտնել  $a$ -ի այն ամենափոքր բնական արժեքը, որի դեպքում համակարգն ունի միակ լուծում:
3.  $a$ -ի ի՞նչ արժեքի դեպքում համակարգն ունի անվերջ բազմությամբ լուծումներ:
4. Գտնել  $a$ -ի այն ամենափոքր բնական արժեքը, որի դեպքում համակարգն ունի լուծում:

8. Տրված է  $|3x - a| < a - 7$  անհավասարումը, որտեղ  $a$ -ն պարամետր է:

1. Գտնել  $a$ -ի ամենափոքր ամբողջ արժեքը, որի դեպքում անհավասարումը լուծում ունի:
2. Գտնել  $a$ -ի այն բնական արժեքը, որի դեպքում անհավասարման լուծումների բազմությունը 4 երկարությամբ միջակայք է:
3. Գտնել  $a$ -ի ամենափոքր բնական արժեքը, որի դեպքում 9-ը բավարարում է տրված անհավասարմանը:
4.  $a$ -ի ի՞նչ բնական արժեքի դեպքում անհավասարման լուծումների բազմությունը պարունակում է ճիշտ 5 ամբողջ թիվ:

9. Տրված է  $\sqrt{4x - x^2} - 3 < (x - 2)^2 + 1$  անհավասարումը:

1. Գտնել անհավասարման ԹԱԸ-ին պատկանող ամբողջ թվերի քանակը:
2. Գտնել անհավասարման աջ մասի փոքրագույն արժեքը:
3. Գտնել անհավասարման ձախ մասի մեծագույն արժեքը:
4. Գտնել անհավասարմանը բավարարող ամբողջ թվերի գումարը:



10. Տրված է  $\sqrt{4-2x-x^2} \geq |2x-1|$  անհավասարումը:

1. Գտնել անհավասարման ԹԱԲ-ին պատկանող ամբողջ թվերի քանակը:
2.  $x$ -ի  $h^\circ$ նչ ամբողջ արժեքի դեպքում տրված անհավասարման մեջ տեղի կունենա հավասարության դեպք:
3. Քանի՞ ամբողջ թիվ է պարունակում անհավասարման լուծումների բազմությունը:
4. Գտնել անհավասարմանը չբավարարող ամենափոքր բնական թիվը:

11. Տրված է  $\sqrt{2x-5} + \sqrt{25-3x} > x$  անհավասարումը:

1. Գտնել անհավասարման ԹԱԲ-ին պատկանող ամբողջ թվերի քանակը:
2. Գտնել անհավասարման լուծումների բազմությանը պատկանող ամենափոքր ամբողջ թիվը:
3. Գտնել անհավասարման լուծումների բազմությանը պատկանող ամենամեծ ամբողջ թիվը:
4. Քանի՞ ամբողջ թիվ է պարունակում անհավասարման լուծումների բազմությունը:

12. Տրված է  $\sqrt{\left(\frac{1}{2}\right)^{3-x} - \frac{1}{4}} < \frac{\sqrt{7}}{2}$  անհավասարումը:

1. Գտնել անհավասարման ԹԱԲ-ին պատկանող ամենափոքր բնական թիվը:
2. Գտնել անհավասարման լուծումների բազմությանը պատկանող ամենամեծ ամբողջ թիվը:
3. Գտնել անհավասարման լուծումների բազմությանը պատկանող ամբողջ լուծումների քանակը:
4. Գտնել անհավասարմանը չբավարարող միանիշ պարզ թվերի գումարը:

13. Տրված է  $\log_5 \frac{4x-21}{3} > 1$  անհավասարումը:

1. Գտնել անհավասարման ԹԱԲ-ին պատկանող ամենափոքր ամբողջ թիվը:
2. Գտնել անհավասարման ԹԱԲ-ին չպատկանող բնական թվերի քանակը:
3. Գտնել անհավասարման լուծումների բազմությանը պատկանող ամենափոքր ամբողջ թիվը:
4. Գտնել անհավասարման լուծումների բազմությանը չպատկանող բնական թվերի քանակը:

14. Տրված է  $\log_2 x^2 \leq 16$  անհավասարումը:

1. Գտնել անհավասարման ԹԱԲ-ին չպատկանող թվերի քանակը:
2. Գտնել անհավասարմանը բավարարող բոլոր ամբողջ թվերի գումարը:
3. Գտնել անհավասարմանը բավարարող ամենամեծ ամբողջ թիվը:
4. Գտնել անհավասարման լուծումների բազմությանը պատկանող բոլոր ամբողջ թվերի քանակը:

15. Հայտնի է, որ 2-ը բավարարում է

$$\log_{a-\frac{1}{2}}(x^2 - 2x + 1) \geq \log_{a-\frac{1}{2}}(4x - 4) \text{ անհավասարմանը } (a\text{-ն}$$

պարամետր է):

1. Գտնել  $a$ -ն, եթե այն ամբողջ թիվ է:
2. Գտնել անհավասարման ԹԱԲ-ին պատկանող ամենափոքր ամբողջ թիվը:
3. Գտնել անհավասարմանը բավարարող ամենամեծ ամբողջ թիվը:
4. Գտնել անհավասարման լուծումների բազմությանը պատկանող բոլոր ամբողջ թվերի գումարը:

16. Տրված է  $\sqrt{16-x^2} \lg(3x+7) > 0$  անհավասարումը:

1. Գտնել տրված անհավասարման ԹԱԲ-ին պատկանող բոլոր ամբողջ թվերի քանակը:
2. Գտնել անհավասարման լուծումների բազմությանը պատկանող ամենափոքր ամբողջ թվի մոդուլը:
3. Գտնել անհավասարման լուծումների բազմությանը պատկանող ամենամեծ ամբողջ թիվը:
4. Գտնել անհավասարման լուծումների բազմությանը պատկանող բոլոր ամբողջ թվերի քանակը:

17. Տրված է  $\begin{cases} x^2 - 5xy + 4y^2 \leq 0 \\ x + y = 10 \end{cases}$  համակարգը:

1.  $a$ -ի ի՞նչ արժեքի դեպքում է  $(a; a)$  թվագույյգը բավարարում համակարգին:
2. Գտնել  $\frac{x}{y}$  հարաբերության հնարավոր ամենամեծ արժեքը, եթե  $(x; y)$  թվագույյգը բավարարում է համակարգի անհավասարմանը:
3. Գտնել համակարգի հավասարմանը բավարարող բոլոր  $(x; y)$  թվագույյգերի քանակը, եթե  $x$ -ը և  $y$ -ը բնական թվեր են:
4. Գտնել համակարգին բավարարող բոլոր  $(x; y)$  թվագույյգերի քանակը, եթե  $x$ -ը և  $y$ -ը բնական թվեր են:

18. Տրված է  $\begin{cases} x^2 + 3x + 2 = 0 \\ 2x + 1 \geq a \end{cases}$  համակարգը, որտեղ  $a$ -ն պարամետր է:

1. Գտնել ամենափոքր  $a$  ամբողջ թիվը, որի դեպքում համակարգը լուծում չունի:
2. Գտնել բոլոր  $a$  ամբողջ թվերի քանակը, որոնց դեպքում համակարգը կունենա միակ լուծում:
3. Գտնել ամենամեծ  $a$  ամբողջ թվի մոդուլը, որի դեպքում համակարգն ունի ճիշտ երկու լուծում:
4. Գտնել ամենամեծ  $a$  ամբողջ թվի մոդուլը, որի դեպքում համակարգն ունի լուծում:

19. Տրված է  $\begin{cases} \sqrt{\pi-x} < \sqrt{5\pi} \\ \cos^2 x - \sin^2 x = 1 \end{cases}$  համակարգը:

1. Գտնել համակարգի անհավասարման ամբողջ լուծումների քանակը:
2. Գտնել համակարգի հավասարման ամենափոքր դրական և ամենամեծ բացասական արմատների գումարը:
3. Գտնել համակարգի լուծումների քանակը:
4. Գտնել համակարգի այն լուծումների քանակը, որոնք բավարարում են  $\cos x \leq 0$  պայմանին:

www.atc.am

## ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Հ/Հ	1	2	3	4
1	2	3	8	4
2	1	0	2	3
3	25	0	0	24
4	5	2	4	3
5	6	7	10	7
6	7	4	0	4
7	1	2	1	1
8	8	13	18	15
9	3	1	1	4
10	5	1	2	2
11	6	3	5	3
12	1	3	3	12
13	6	5	10	9
14	1	0	4	8
15	1	2	5	14
16	7	1	3	5
17	5	4	9	4
18	0	2	3	1
19	16	0	5	3

**ԲԱԺԻՆ 3. ՏԵԲՍԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ**

1. Խանութն առաջին օրը վաճառեց ստացած խնձորի քանակի  $\frac{1}{2}$  մասից 18 կգ ավելի: Երկրորդ օրը խանութը վաճառեց առաջին օրվա վաճառքից հետո մնացած խնձորի քանակի  $\frac{5}{6}$  մասը, որից հետո խանութում մնաց 15 կգ խնձոր:

1. Առաջին օրում վաճառված խնձորի քանակը քանի՞ կիլոգրամով է ավելի այդ օրվա վաճառքից հետո խանութում մնացած խնձորի քանակից:
2. Քանի՞ կիլոգրամ խնձոր վաճառեց խանութը երկրորդ օրը:
3. Քանի՞ կիլոգրամ խնձոր էր ստացել խանութը:
4. Առաջին օրում վաճառված խնձորի քանակը երկրորդ օրում վաճառված խնձորի քանակից քանի՞ տոկոսով է ավելի:

2. Հողագործն առաջին ամսում ավազանի ջրի կեսն օգտագործեց այգին ռոռգելու և ևս  $15\text{մ}^3$  ջուր պարտեզը ջրելու համար: Երկրորդ ամսին նա այգին ռոռգելու համար ծախսեց ավազանում մնացած ջրի  $\frac{2}{3}$  մասը, իսկ պարտեզի համար՝ վերջին  $15\text{մ}^3$  ջուրը:

1. Քանի՞  $\text{մ}^3$  ջուր օգտագործեց հողագործը երկրորդ ամսին:
2. Սկզբում քանի՞  $\text{մ}^3$  ջուր կար ավազանում:
3. Ավազանում եղած ամբողջ ջրի քանակը քանի՞ անգամ է շատ պարտեզի համար երկու ամիսներին օգտագործված ջրի քանակից:
4. Այգու ռոռգման համար առաջին ամսում օգտագործված ջրի քանակը քանի՞ տոկոսով է ավելի պարտեզի համար երկու ամիսներին օգտագործված ջրի քանակից:

**3. Գիրքը բաղկացած է երկու բաժնից, ընդ որում, առաջին բաժինը 30 էջով ավելի է գրքի կեսից և 25 % ավելի էջ ունի, քան երկրորդ բաժինը:**

1. Քանի՞ էջով է գրքի առաջին բաժինը ավելի գրքի երկրորդ բաժնից:
2. Օրական հավասար էջեր կարդալով՝ աշակերտը քանի՞ օրում կկարդա ամբողջ գիրքը, եթե առաջին բաժինը կարդում է 20 օրում:
3. Քանի՞ էջ ունի գիրքը:
4. Քանի՞ թվանշան է գրվել գրքի առաջին բաժնի էջերը համարակալելիս:

**4. Տրակտորը մեկ օրում կարող է վարել 12 հա, կամ ցանել 18 հա:**

1. Տրակտորի ցանելու արտադրողականությունը քանի՞ տոկոսով է ավելի վարելու արտադրողականությունից:
2. Երեք օրում իր վարածը տրակտորը քանի՞ օրում կարող է ցանել:
3. Տասը օրում տրակտորը քանի՞ հեկտար կարող է վարել և վարածը ցանել:
4. Այդպիսի 5 տրակտոր միասին մեկ օրում քանի՞ հեկտար կարող են վարել և վարածը ցանել:

**5. Վանա լճի ջուրը պարունակում է 6 % աղ:**

1. Քանի՞ կգ աղ կա Վանա լճի ջրի 50 կգ-ի մեջ:
2. Քանի՞ կգ մաքուր ջուր պետք է ավելացնել Վանա լճի ջրի 100 կգ-ին, որպեսզի ստացվի 2 % -անոց աղի լուծույթ:
3. Քանի՞ կգ ջուր պետք է գոլորշիանա Վանա լճի ջրի 200 կգ-ից, որպեսզի ստացվի 12 % -անոց լուծույթ:
4. Վանա լճի 50 կգ ջրին քանի՞ կգ 2 %-անոց աղաջուր պետք է խառնել, որպեսզի ստացվի 4 %-անոց լուծույթ:

**6. Առաջին գրքի էջերի քանակի  $\frac{1}{4}$  մասը 20-ով պակաս է երկրորդ գրքի**

**էջերի քանակի 75 %-ից: Առաջին գրքի էջերը համարակալելու համար անհրաժեշտ է 1164 թվանշան (համարակալումը սկսվում է 1 թվանշանից):**

1. Քանի՞ էջով պետք է ավելացվի առաջին գիրքը, որպեսզի նրա էջերի քանակը 3 անգամ շատ լինի երկրորդ գրքի էջերի քանակից:
2. Գտնել առաջին գրքի էջերի քանակը:
3. Գտնել երկրորդ գրքի էջերի քանակը:
4. Քանի՞ թվանշան անհրաժեշտ կլինի երկրորդ գրքի էջերը համարակալելու համար:

**7. Գրքի էջերի քանակն արտահայտվում է եռանիշ թվով և հավասար է էջերը համարակալելու համար օգտագործված թվանշանների քանակի 36 %-ին (համարակալումը սկսվում է 1 թվանշանից):**

1. Քանի՞ թվանշան է օգտագործվել գրքի առաջին 80 էջը համարակալելու համար:
2. Քանի՞ էջ է համարակալվել, եթե արդեն օգտագործվել է 300 նիշ:
3. Քանի՞ էջ ունի այդ գիրքը:
4. Քանի՞ անգամ է 4 թվանշան գրվել այդ գրքի էջերը համարակալելիս:

**8. Առաջին տեսակի ապրանքն արժե 50 դրամ, իսկ երկրորդ տեսակը՝ 70 դրամ:**

1. Քանի՞ տոկոսով է երկրորդ ապրանքը թանկ առաջինից:
2. Քանի՞ դրամ կդառնա առաջին ապրանքի գինը, եթե երկու անգամ հաջորդաբար այն թանկացնեն 20 %-ով:
3. Ամենաքիչը քանի՞ դրամ է անհրաժեշտ և՛ առաջին, և՛ երկրորդ տեսակի ապրանք գնելու համար:
4. Ամենաշատը քանի՞ հատ ապրանք կարելի է գնել և՛ առաջին, և՛ երկրորդ տեսակի՝ վճարելով 8800 դրամ:



**9. Բանանը 10 % -ով թանկ է, քան նարինջը, իսկ խնձորը 20 % -ով էժան է, քան բանանը:**

1. Բանանը քանի՞ տոկոսով է խնձորից թանկ:
2. Քանի՞ տոկոսով է 3 կգ բանանի դիմաց վճարած գումարը ավելի 2 կգ նարնջի դիմաց վճարած գումարից:
3. Քանի՞ կիլոգրամ բանան կարելի է գնել 20 կգ խնձորի և 22 կգ նարնջի դիմաց վճարած գումարով:
4. Խնձորը քանի՞ տոկոսով է նարնջից էժան:

**10. Խանութը ապրանքը ձեռք էր բերել 500 դրամով: Ապրանքը վաճառեցին նախատեսված գնից 10%-ով ցածր գնով և ստացան 8% շահույթ:**

1. Քանի՞ դրամով էր նախատեսված վաճառել ապրանքը:
2. Սկզբում քանի՞ տոկոս շահույթ էր նախատեսվում ստանալ:
3. Քանի՞ դրամով վաճառվեց ապրանքը:
4. Քանի՞ տոկոս շահույթ կստանա խանութը, եթե վաճառի այդպիսի 10 ապրանք:

**11. Պղնձի և ցինկի համաձուլվածքը պարունակում է 35 % պղինձ:**

1. Քանի՞ կգ պղինձ է պարունակում այդ համաձուլվածքի 40 կգ-ը:
2. Քանի՞ կգ ցինկ է պարունակում այդ համաձուլվածքի 60 կգ-ը:
3. Համաձուլվածքի 40 կգ-ը խառնեցին 10 կգ 60 % պղինձ պարունակող պղինձի և ցինկի նոր համաձուլվածքի հետ: Ստացված համաձուլվածքի  $n^{\circ}$  տոկոսն է պղինձը:
4. Համաձուլվածքի 60 կգ-ը խառնեցին 90 կգ մաքուր ցինկի հետ: Ստացված համաձուլվածքի  $n^{\circ}$  տոկոսն է ցինկը:

**12. 300 գ աղի լուծույթում աղի և ջրի զանգվածները հարաբերում են ինչպես 1:4:**

1. Քանի՞ գրամ աղ է պարունակում այդ լուծույթը:
2. Քանի՞ տոկոս աղ է պարունակում այդ լուծույթի  $\frac{1}{6}$ -ը:
3. Քանի՞ գրամ մաքուր աղ պետք է խառնել այդ լուծույթին, որպեսզի աղի պարունակությունը դառնա 50 %:
4. Քանի՞ գրամ ջուր պետք է գոլորշիացնել այդ լուծույթից, որպեսզի աղի պարունակությունը դառնա 80 %:

**13. Աղի երկու լուծույթներից առաջինը 15%-անոց է, երկրորդը՝ 20%-անոց:**

1. Քանի՞ կգ թորած ջուր պետք է ավելացնել առաջին լուծույթի 30 կգ-ին, որպեսզի աղի պարունակությունը դառնա 1,5 %:
2. Քանի՞ կգ ջուր պետք է գոլորշիացնել երկրորդ լուծույթի 50 կգ-ից, որպեսզի ստացվի 25 %-անոց լուծույթ:
3. Առաջին լուծույթի քանի՞ կգ-ը պետք է խառնել երկրորդ լուծույթի 12 կգ-ին, որպեսզի ստացվի 18 %-անոց լուծույթ:
4. Քանի՞ գրամ լուծույթ պետք է վերցնել առաջին լուծույթի 60 գ-ից և փոխարենը ավելացնել նույն քանակությամբ երկրորդ լուծույթից, որպեսզի ստացվի 16 %-անոց լուծույթ:

**14. Աղի երեք լուծույթներից առաջինը 15 %-անոց է, երկրորդը՝ 20 %-անոց, երրորդը՝ 30 %-անոց:**

1. Քանի՞ տոկոսանոց լուծույթ կստացվի, եթե առաջին և երկրորդ լուծույթները խառնեն 2:3 հարաբերությամբ:
2. Քանի՞ տոկոսանոց լուծույթ կստացվի, եթե այդ լուծույթները խառնեն 2:3:1 հարաբերությամբ:
3. Քանի՞ կգ աղ կլինի երեք լուծույթների 50կգ խառնուրդում, որտեղ այդ լուծույթները պարունակվում են համապատասխանաբար 2:2:1 հարաբերությամբ:
4. Քանի՞ կգ մաքուր աղ պետք է ավելացնել երկրորդ լուծույթի 15 կգ-ին, որպեսզի ստացվի 25 %-անոց լուծույթ:

**15. Թարմ սունկը չորացնելիս կորցնում է իր կշռի  $\frac{4}{5}$  մասը:**

1. Այդ ընթացքում քանի՞ անգամ է փոքրանում թարմ սնկի կշիռը:
2. Չորացնելիս քանի՞ տոկոսով է փոքրանում թարմ սնկի կշիռը:
3. Քանի՞ կգ չորացած սունկ կստացվի 20 կգ թարմ սնկից:
4. Չորացած սնկի n՞ր տոկոսն է ջուրը, եթե թարմ սնկի 95 տոկոսն է ջուրը:

**16. Պղնձի և ցինկի երկու համաձուլվածքներից առաջինի զանգվածը 50 կգ է, իսկ երկրորդինը՝ 100 կգ: Առաջինում պղնձը և ցինկը պարունակվում են 2: 3, իսկ երկրորդում՝ 1:9 կշռային հարաբերությամբ: Իրար խառնելով առաջին, երկրորդ համաձուլվածքները և 10 կգ մաքուր պղինձ, ստացան նոր համաձուլվածք:**

1. Քանի՞ կգ մաքուր պղինձ էր պարունակում առաջին համաձուլվածքը:
2. Քանի՞ տոկոս պղինձ էր պարունակում երկրորդ համաձուլվածքը:
3. Քանի՞ կգ պղինձ կա նոր համաձուլվածքում:
4. Քանի՞ տոկոս ցինկ է պարունակում նոր համաձուլվածքը:

**17. Պղնձից, ցինկից և նիկելից կազմված համաձուլվածքում այդ մետաղների զանգվածները հարաբերում են ինչպես 10:3:5:**

1. Քանի՞ գրամ պղինձ է պարունակում այդ համաձուլվածքի 45 գրամը:
2. Քանի՞ գրամ է այդ համաձուլվածքի այն կտորը, որը պարունակում է 7 գ ցինկ:
3. Քանի՞ գրամ նիկել է պարունակում, այդ համաձուլվածքի այն կտորը, որում պղինձը 35 գ ավելի է, քան ցինկը:
4. Յուրաքանչյուր մետաղից ունենալով 60 գրամ, ամենաշատը քանի՞ գրամ այդպիսի համաձուլվածք կարելի է պատրաստել:

**18. Դասարանում աշակերտների 40 % -ը գերազանցիկ են, ընդ որում տղաների 25 %-ն են գերազանցիկ, իսկ աղջիկների՝ 50 %-ը:**

1. Դասարանի աշակերտների ո՞ր տոկոսն են կազմում տղաները:
2. Աղջիկների քանակը տղաների քանակից քանի՞ տոկոսով է ավելի:
3. Գերազանցիկ աղջիկների քանակը քանի՞ անգամ է շատ գերազանցիկ տղաների քանակից:
4. Ամենաքիչը քանի՞ աշակերտ կարող է ունենալ այդպիսի դասարանը:

19. Մեքենաների թողարկման պատվերը գործարանը պետք է կատարեր 16 օրում: Օրական պլանը կատարելով 130 %-ով՝ գործարանը ժամկետից 3 օր շուտ ոչ միայն կատարեց պատվերը, այլև 9 մեքենա ավելի թողարկեց:

1. Օրական քանի՞ մեքենա պետք է թողարկեր գործարանն ըստ պլանի:
2. Քանի՞ օրում գործարանը կարող է թողարկել 310 մեքենա, եթե աշխատի ըստ պլանի:
3. Օրական քանի՞ մեքենա թողարկեց գործարանը:
4. Քանի՞ մեքենա թողարկեց գործարանը:

www.atc.am

## ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Հ/Հ	1	2	3	4
1	36	75	216	68
2	45	120	4	100
3	60	36	540	792
4	50	2	72	36
5	3	200	100	50
6	80	424	168	396
7	151	136	486	186
8	40	72	120	174
9	25	65	36	12
10	600	20	540	8
11	14	39	40	86
12	60	20	180	225
13	270	10	8	12
14	18	20	10	1
15	5	80	4	75
16	20	10	40	75
17	25	42	25	108
18	40	50	3	10
19	10	31	13	169

## ԲԱԺԻՆ 4. ՊՐՈԳՐԵՍԻԱՆՆԵՐ

### 1. Կատարել առաջադրանքը.

1. Գտնել  $(a_n)$  թվաբանական պրոգրեսիայի հինգերորդ անդամը, եթե  $a_3 = 5, a_7 = 13$ :
2. Գտնել  $(a_n)$  թվաբանական պրոգրեսիայի առաջին 10 անդամների գումարը, եթե  $a_3 = 5, a_7 = 13$ :
3. Գտնել  $(b_n)$  դրական անդամներով երկրաչափական պրոգրեսիայի հայտարարը, եթե  $b_1 + b_2 = 3, b_3 + b_4 = 12$ :
4. Գտնել  $(b_n)$  դրական անդամներով երկրաչափական պրոգրեսիայի առաջին յոթ անդամների գումարը, եթե  $b_1 + b_2 = 3, b_3 + b_4 = 12$ :

### 2. Կատարել առաջադրանքները.

1. Գտնել 7; 19; 31; ... թվաբանական պրոգրեսիայի եռանիշ անդամների քանակը:
2. Գտնել 7; 19; 31; ... թվաբանական պրոգրեսիայի առաջին 10 անդամների գումարը:
3. Գտնել դրական անդամներով  $(b_n)$  երկրաչափական պրոգրեսիայի 4-րդ անդամը, եթե  $b_2 = \frac{9}{4}, b_6 = \frac{64}{9}$ :
4. Գտնել դրական անդամներով  $(b_n)$  երկրաչափական պրոգրեսիայի 10-ից փոքր անդամների քանակը, եթե  $b_2 = \frac{9}{4}, b_6 = \frac{64}{9}$ :

### 3. Կատարել առաջադրանքը.

1. Գտնել  $(a_n)$  թվաբանական պրոգրեսիայի առաջին անդամը, եթե  $3a_5 - a_{13} = 10$ :
2.  $(a_n)$  թվաբանական պրոգրեսիայում՝  $S_7 = 70$ : Գտնել  $a_4$ -ը:
3. Գտնել  $(b_n)$  երկրաչափական պրոգրեսիայի այն անդամի համարը, որը հավասար է 48-ի, եթե  $b_1 = 3$ ,  $q = 2$ :
4. Գտնել  $x$ -ը, եթե  $\frac{x}{2} + 1$ ;  $2x - 1$ ;  $6x - 8$  թվերը կազմում են երկրաչափական պրոգրեսիա:

### 4. Կատարել առաջադրանքը.

1. Գտնել թվաբանական պրոգրեսիայի տարբերությունը, եթե  $3a_1 - 7a_2 + 4a_3 = 4$ :
2. Գտնել 200-ից փոքր այն բնական թվերի քանակը, որոնք 3-ի բաժանելիս ստացվում է 1 մնացորդ:
3.  $(b_n)$  անվերջ նվազող երկրաչափական պրոգրեսիայում  $q = \frac{2}{3}$ ,  $S = 9$ : Գտնել  $b_1$ -ը:
4. Գտնել  $(b_n)$  երկրաչափական պրոգրեսիայի հայտարարը, եթե  $b_1 = 2$ ;  $b_n = 486$ ;  $S_n = 728$ :

### 5. Կատարել առաջադրանքը.

1. Գտնել  $(a_n)$  թվաբանական պրոգրեսիայի առաջին անդամը, եթե  $8a_6 - 5a_9 = 12$ :
2.  $(a_n)$  թվաբանական պրոգրեսիայում  $8a_6 - 5a_9 = 12$ : Գտնել  $3a_1 - 2a_2 + a_3$  արտահայտության արժեքը:
3. Գտնել  $(x_n)$  երկրաչափական պրոգրեսիայի այն անդամի համարը, որը հավասար է 108-ի, եթե  $x_1 = 4$ ,  $q = 3$ :
4. Գտնել երկրաչափական պրոգրեսիայի առաջին անդամը, եթե  $q = \frac{2}{3}$ ,  $S_4 = 130$ :

**6. Կատարել առաջադրանքը.**

1. Գտնել 3; 10; 17; ... թվաբանական պրոգրեսիայի 61-րդ անդամը:
2. Գտնել 3; 10; 17; ... թվաբանական պրոգրեսիայի ամենամեծ երկնիշ անդամը:
3. Գտնել  $b_1; b_2; b_3; \dots$  երկրաչափական պրոգրեսիայի 9-րդ անդամը, եթե  $q = 2, b_2 = \frac{1}{32}$ :
4. Գտնել  $b_1; b_2; b_3; \dots$  երկրաչափական պրոգրեսիայի առաջին անդամը, եթե  $b_4 = -3^{11}, b_7 = 3^{20}$ :

**7. Կատարել առաջադրանքը.**

1. Գտնել 4; 5,5; ... թվաբանական պրոգրեսիայի 5-րդ անդամը:
2. Գտնել 4; 5,5; ... թվաբանական պրոգրեսիայի բոլոր այն անդամների քանակը, որոնք պատկանում են  $[7; 11]$  միջակայքին:
3. Գտնել 2; 1; ... երկրաչափական պրոգրեսիայի բոլոր այն անդամների քանակը, որոնք մեծ են  $10^{-2}$ -ից:
4. Գտնել 2; 1; ... անվերջ նվազող երկրաչափական պրոգրեսիայի գումարը:

**8. Կատարել առաջադրանքը.**

1. Գտնել  $(a_n)$  թվաբանական պրոգրեսիայի 5-րդ անդամը, եթե  $a_1 = 21, d = -0,5$ :
2. Գտնել  $(a_n)$  թվաբանական պրոգրեսիայի այն անդամի համարը, որի արժեքն է  $-15,5$ , եթե  $a_1 = 21, d = -0,5$ :
3. Գտնել  $(a_n)$  թվաբանական պրոգրեսիայի դրական անդամների քանակը, եթե  $a_1 = 21, d = -0,5$ :
4. Երկրաչափական պրոգրեսիայի զույգ համարներով առաջին տասն անդամների գումարը 3 անգամ մեծ է կենտ համարներով առաջին տասն անդամների գումարից: Գտնել պրոգրեսիայի հայտարարը:



9. Տրված է  $\sqrt{3}; x; 3\sqrt{3}; \dots$  դրական անդամներով երկրաչափական պրոգրեսիան:

1. Գտնել  $x$ -ը:
2. Գտնել պրոգրեսիայի 6-րդ անդամը:
3. Գտնել այն անդամի համարը, որի արժեքն է  $81\sqrt{3}$ :
4. Գտնել պրոգրեսիայի այն անդամների քանակը, որոնք ամբողջ թվեր են և չեն գերազանցում  $243\sqrt{2}$ -ը:

10.  $3, a, b$  թվերը աճող թվաբանական պրոգրեսիայի հաջորդական անդամներ են: Եթե այդ հաջորդականության միջին անդամը փոքրացվի 6-ով, ապա կստացվի երկրաչափական պրոգրեսիա:

1. Գտնել թվաբանական պրոգրեսիայի տարբերությունը:
2. Գտնել թվաբանական պրոգրեսիայի երրորդ անդամը:
3. Գտնել երկրաչափական պրոգրեսիայի հայտարարը:
4. Գտնել  $\frac{5}{2}; \frac{a+2}{2}; \frac{b+2}{2}$  թվաբանական պրոգրեսիայի տարբերությունը:

11. Տրված է  $(c_n)$  հաջորդականությունը, որտեղ  $c_1 = 6$  և  $c_3 = 24$ :

1. Գտնել  $c_2$ -ը, եթե  $(c_n)$  հաջորդականությունը թվաբանական պրոգրեսիա է:
2. Գտնել  $c_{17} - c_5$  տարբերությունը, եթե  $(c_n)$ -ը թվաբանական պրոգրեսիա է:
3. Գտնել  $c_2$ -ը, եթե  $(c_n)$ -ը դրական անդամներով երկրաչափական պրոգրեսիա է:
4. Քանի՞<sup>o</sup> անգամ է  $c_{n+7}$ -ը մեծ  $c_n$ -ից, եթե  $(c_n)$  հաջորդականությունը դրական անդամներով երկրաչափական պրոգրեսիա է:

12. Տրված են բոլոր այն երկնիշ թվերը, որոնք 4-ի բաժանելիս ստացվում է 3 մնացորդ:

1. Գտնել այդ թվերից ամենափոքրը:
2. Գտնել այդ թվերի քանակը:
3. Գտնել այդ թվերի միջին թվաբանականը:
4. Այդ թվերից ամենափոքրի և ամենամեծի միջև ի՞նչ թիվ պետք է տեղադրել, որպեսզի ստացված երեք թվերից կազմված հաջորդականությունը լինի թվաբանական պրոգրեսիա:

13.  $(a_n)$  թվաբանական պրոգրեսիան տրված է  $a_n = 5n + 2$  բանաձևով:

1. Գտնել պրոգրեսիայի  $n$ -րդ անդամը 5-ի բաժանելիս ստացվող մնացորդը:
2. Գտնել պրոգրեսիայի բոլոր այն անդամների քանակը, որոնք պատկանում են  $[10; 40]$  միջակայքին:
3. Գտնել պրոգրեսիայի բոլոր այն անդամների գումարը, որոնք պատկանում են  $[10; 40]$  միջակայքին:
4. Գտնել պրոգրեսիայի բոլոր այն անդամների քանակը, որոնք չեն գերազանցում 100-ը, և որոնցից յուրաքանչյուրը 4-ի բաժանելիս ստացվում է 3 մնացորդ:

14. Թվաբանական պրոգրեսիայի առաջին  $n$  անդամների գումարն արտահայտվում է  $S_n = 4n^2 - 3n$  բանաձևով:

1. Գտնել  $S_5$ -ը:
2. Գտնել այդ պրոգրեսիայի առաջին անդամը:
3. Գտնել այդ պրոգրեսիայի տարբերությունը:
4. Զանի՞ երկնիշ թիվ կա տրված պրոգրեսիայում:

15.  $(a_n)$  թվաբանական պրոգրեսիայի առաջին  $n$  անդամների գումարն արտահայտվում է  $S_n = 3n^2 + n$  բանաձևով:

1. Գտնել պրոգրեսիայի առաջին 15 անդամների միջին թվաբանականը:
2. Գտնել պրոգրեսիայի 6-րդից մինչև 10-րդ անդամների գումարը:
3. Գտնել պրոգրեսիայի այն անդամի համարը, որը հավասար է 100-ի:
4. Պրոգրեսիայի առաջին անդամից սկսած ամենաքիչը քանի՞ հաջորդական անդամների գումարը մեծ կլինի 200-ից:

16. Կատարել առաջադրանքները.

1.  $(a_n)$  թվաբանական պրոգրեսիայում  $a_1 = 10$ ,  $a_n = 40$ ,  $S_n = 275$ :  
Գտնել  $n$ -ը:
2. Գտնել  $a_n = 8n - n^2 - 7$  ընդհանուր անդամն ունեցող հաջորդականության մեծագույն անդամը:
3. Գտնել 7-ի բազմապատիկ բոլոր երկնիշ թվերի քանակը:
4. Գտնել այն բնական թիվը, որը հավասար է իրեն նախորդող բոլոր բնական թվերի գումարի  $\frac{1}{6}$ -ին:

17.  $(a_n)$  թվաբանական պրոգրեսիայի առաջին  $n$  անդամների գումարն արտահայտվում է  $S_n = 3n^2$  բանաձևով:

1. Գտնել  $(a_n)$ -ի առաջին չորս անդամների գումարը:
2. Գտնել  $(a_n)$ -ի առաջին անդամը:
3. Գտնել տրված պրոգրեսիայի տարբերությունը:
4. Գտնել  $(a_n)$ -ի բոլոր այն երկնիշ անդամների քանակը, որոնք 5-ի բազմապատիկ են:

18.  $a, b, c$  հաջորդականությունը 5 հայտարարով երկրաչափական պրոգրեսիա է, ընդ որում  $a + b + c = 93$ :

1. Քանի՞ անգամ է  $b$ -ն մեծ  $a$ -ից:
2. Գտնել  $a$ -ն:
3.  $x$ -ի ի՞նչ արժեքի դեպքում  $a, b + x, c$  հաջորդականությունը կլինի թվաբանական պրոգրեսիա:
4.  $b$  և  $c$  թվերի միջև քանի՞ թիվ պետք է գրել, որպեսզի  $a, b, \dots, c$  հաջորդականությունը լինի թվաբանական պրոգրեսիա:

19.  $(a_n)$  թվաբանական պրոգրեսիայի երկրորդ անդամը 12 է, իսկ վեցերորդ անդամը՝  $-8$ :

1. Գտնել այդ պրոգրեսիայի չորրորդ անդամը:
2. Գտնել այդ պրոգրեսիայի այն անդամի համարը, որի արժեքը  $-18$  է:
3. Գտնել  $2^{-a_1}, 2^{-a_2}, \dots, 2^{-a_n}, \dots$  երկրաչափական պրոգրեսիայի հայտարարը:
4. Գտնել  $2^{-a_1}, 2^{-a_2}, \dots, 2^{-a_n}, \dots$  երկրաչափական պրոգրեսիայի բոլոր այն անդամների քանակը, որոնք պատկանում են  $\left[ \frac{1}{132}; 15 \right]$  միջակայքին:

20.  $a_1, a_2, \dots, a_n, \dots$  թվաբանական պրոգրեսիայում  $a_1 = 4, a_6 \geq 9, a_{10} \leq 13$ :

1. Գտնել թվաբանական պրոգրեսիայի տարբերությունը:
2. Գտնել  $a_3$ -ը:
3. Գտնել  $4^{\frac{a_1}{2}}, 4^{\frac{a_2}{2}}, \dots, 4^{\frac{a_n}{2}}, \dots$  երկրաչափական պրոգրեսիայի հայտարարը:
4. Գտնել  $4^{\frac{a_1}{2}}, 4^{\frac{a_2}{2}}, \dots, 4^{\frac{a_n}{2}}, \dots$  երկրաչափական պրոգրեսիայի այն անդամի համարը, որի արժեքն է 128:

### 21. Կատարել առաջադրանքները.

1. Գտնել  $(b_n)$  երկրաչափական պրոգրեսիայի 4-րդ անդամը, եթե  $b_1 \cdot b_3 \cdot b_8 = 8$ :
2. Գտնել  $(a_n)$  թվաբանական պրոգրեսիայի այն անդամի համարը, որի արժեքը 0 է, եթե  $a_1 = 24, d = -0,4$ :
3. Գտնել  $(a_n)$  թվաբանական պրոգրեսիայի դրական անդամների գումարը, եթե  $a_1 = 24, d = -0,4$ :
4. Երկրաչափական պրոգրեսիայի առաջին կենտ համարներով 7 անդամների գումարը 4 անգամ փոքր է առաջին գույգ համարներով 7 անդամների գումարից: Գտնել պրոգրեսիայի հայտարարը:

### 22. Տրված են բոլոր այն երկնիշ թվերը, որոնք 6-ի բաժանելիս ստացվում է 1 մնացորդ:

1. Գտնել այդ թվերից ամենամեծը:
2. Գտնել այդ թվերի քանակը:
3. Գտնել այդ թվերի գումարը:
4. Այդ թվերից ամենափոքրի և ամենամեծի միջև ի՞նչ թիվ պետք է տեղադրել, որպեսզի ստացված հաջորդականությունը լինի թվաբանական պրոգրեսիա:

### 23. Կատարել առաջադրանքները.

1.  $(a_n)$  թվաբանական պրոգրեսիայում  $a_1 = 6,8, a_n = 12,2, S_n = 95$ : Գտնել  $n$ -ը:
2. Գտնել  $a_n = 23 - 3n$  ընդհանուր անդամն ունեցող հաջորդականության դրական անդամների քանակը:
3. Գտնել 6-ի բազմապատիկ բոլոր երկնիշ թվերի քանակը:
4. Գտնել այն բնական թիվը, որը հավասար է իրեն նախորդող բոլոր բնական թվերի գումարի  $\frac{1}{8}$ -ին:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ա/Հ	Ենթաառաջադրանքի համարը			
	1	2	3	4
1	9	100	2	127
2	75	610	4	7
3	5	10	5	3
4	4	67	3	3
5	4	8	4	54
6	423	94	4	9
7	10	3	8	4
8	19	74	42	3
9	3	27	9	5
10	12	27	3	6
11	15	108	12	128
12	11	23	55	55
13	2	6	147	5
14	85	1	8	11
15	46	230	17	9
16	11	9	13	13
17	48	3	6	3
18	5	3	24	4
19	2	8	32	3
20	1	6	2	4
21	2	61	732	4
22	97	15	825	55
23	10	7	15	17

## ԲԱԺԻՆ 5. ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐ

### 1. Տրված է $f(x) = 2x^3 - 3x^2 - 7$ ֆունկցիան:

1. Գտնել ֆունկցիայի արժեքը  $x = 3$  կետում:
2. Հաշվել  $f'(1)$ -ը:
3. Գտնել ֆունկցիայի մեծագույն արժեքը  $[-1; 3]$  հատվածում:
4. Գտնել ֆունկցիայի գրաֆիկի  $x_0 = 1$  արսցիսն ունեցող կետում տարված շոշափողի և  $Oy$  առանցքի կազմած անկյան աստիճանային չափը:

### 2. Տրված է $f(x) = \frac{x^3}{3} - \frac{x^2}{2} - 6x + 1$ ֆունկցիան:

1. Գտնել  $f$  ֆունկցիայի որոշման տիրույթին պատկանող ամենափոքր բնական թիվը:
2. Գտնել  $f'(x) = 0$  հավասարման մեծ արմատը:
3. Գտնել  $f$  ֆունկցիայի կրիտիկական կետերի հեռավորությունը:
4. Գտնել  $f$  ֆունկցիայի մեծագույն արժեքը  $[-1; 6]$  միջակայքում:

### 3. Տրված է $f(x) = 2x^3 - 6x + 6$ ֆունկցիան:

1. Գտնել ֆունկցիայի ածանցյալը  $x = 2$  կետում:
2. Գտնել ֆունկցիայի նվազման միջակայքի երկարությունը:
3. Գտնել ֆունկցիայի մեծագույն արժեքը  $[-2; 0]$  միջակայքում:
4. Գտնել ֆունկցիայի գրաֆիկի  $x_0 = 0$  արսցիսն ունեցող կետում տարված շոշափողով և կոորդինատային առանցքներով սահմանափակված պատկերի մակերեսը:

**4. Տրված է  $f(x) = -2x^3 + 9x^2 - 7$  ֆունկցիան:**

1. Գտնել ֆունկցիայի ածանցյալը  $x = 2$  կետում:
2. Գտնել ֆունկցիայի աճման միջակայքի երկարությունը:
3. Գտնել ֆունկցիայի մեծագույն արժեքը  $[2; 4]$  միջակայքում:
4. Գտնել ֆունկցիայի գրաֆիկի  $x_0 = 1$  արագիսն ունեցող կետում տարված շոշափողով և կոորդինատային առանցքներով սահմանափակված պատկերի մակերեսը:

**5. Տրված են  $f(x) = x^3 + 7x + \ln x$  և  $g(x) = 3x^2$  ֆունկցիաները:**

1. Գտնել  $f + g$  ֆունկցիայի որոշման տիրույթին պատկանող ամենափոքր ամբողջ թիվը:
2. Գտնել  $f(1)$ -ը:
3. Գտնել  $g$  ֆունկցիայի գրաֆիկի  $x_0 = 0$  արագիսն ունեցող կետում տարված շոշափողի և օրդինատների առանցքի կազմած անկյան աստիճանային չափը:
4. Գտնել  $f$  ֆունկցիայի փոքրագույն արժեքը  $[1; 8]$  միջակայքում

**6. Տրված է  $f(x) = -x^4 + 4x^2 + 9$  ֆունկցիան:**

1. Գտնել  $f$  ֆունկցիայի մեծագույն արժեքը:
2. Բանի՞ հատման կետ ունի  $f$  ֆունկցիայի գրաֆիկն արագիսների առանցքի հետ:
3. Բանի՞ կրիտիկական կետ ունի  $f$  ֆունկցիան:
4. Բանի՞ մինիմումի կետ ունի  $f$  ֆունկցիան:



7.  $y = 2 + (x - a)^2$  ֆունկցիան  $(0; 1)$  միջակայքում աճող է և այդ ֆունկցիայի գրաֆիկն օրդինատների առանցքը հատում է  $(0; 6)$  կետում:

1. Գտնել ֆունկցիայի արժեքների տիրույթին պատկանող փոքրագույն կենտ թիվը:
2. Գտնել  $|a|$ -ն:
3. Գտնել ֆունկցիայի մեծագույն արժեքը  $[-5; -4]$  հատվածում:
4. Գտնել ֆունկցիայի գրաֆիկի  $x_0 = -\frac{3}{2}$  աբսցիսն ունեցող կետում տարված շոշափողի անկյունային գործակիցը:

8. Տրված է  $f(x) = \sqrt{11-x} + \sqrt{x-3}$  ֆունկցիան:

1.  $f$  ֆունկցիայի որոշման տիրույթը քանի՞ ամբողջ թիվ է պարունակում:
2. Գտնել  $f^2(x)$  արտահայտության փոքրագույն արժեքը:
3. Գտնել  $f$  ֆունկցիայի մեծագույն արժեքը:
4.  $f$  ֆունկցիայի արժեքների տիրույթը քանի՞ ամբողջ թիվ է պարունակում:

9. Կատարել առաջադրանքները.

1. Գտնել  $f(x) = \sqrt{x+13} + \sqrt{15-x}$  ֆունկցիայի որոշման տիրույթին պատկանող բոլոր ամբողջ թվերի գումարը:
2. Գտնել  $f(x) = \frac{10}{2+x^4}$  ֆունկցիայի մեծագույն արժեքը:
3. Գտնել  $f(x) = \sqrt{17-x^2}$  ֆունկցիայի արժեքների տիրույթին պատկանող բոլոր ամբողջ թվերի քանակը:
4. Գտնել  $f(x) = \sin\left(\frac{\pi}{10}x\right)$  ֆունկցիայի հիմնական պարբերությունը:

10. Տրված է  $f(x) = 8\sqrt{x-2} - x$  ֆունկցիան:

1. Գտնել  $f$  ֆունկցիայի որոշման տիրույթի ամենափոքր թիվը:
2. Քանի՞ կրիտիկական կետ ունի  $f$  ֆունկցիան:
3. Գտնել  $f$  ֆունկցիայի մեծագույն արժեքը:
4. Գտնել  $f$  ֆունկցիայի գրաֆիկի  $x_0 = 3$  արսցիսն ունեցող կետում տարված շոշափողի անկյունային գործակիցը:

11. Տրված է  $f(x) = x + \frac{27}{x^3}$  ֆունկցիան:

1. Գտնել  $f$  ֆունկցիայի մինիմումի կետը:
2. Գտնել  $f$  ֆունկցիայի էքստրեմումի արժեքներից մեծագույնը:
3. Գտնել  $f$  ֆունկցիայի գրաֆիկի  $x_0 = -3$  արսցիսն ունեցող կետում տարված շոշափողի անկյունային գործակիցը:
4. Գտնել  $b$ -ի բոլոր ամբողջ արժեքների քանակը, որոնցից յուրաքանչյուրի դեպքում  $y = b$  ուղիղը  $f$  ֆունկցիայի գրաֆիկի հետ ընդհանուր կետ չունի:

12. Տրված է  $f(x) = x^3 - 6x^2 + 9x$  ֆունկցիան:

1. Գտնել  $f$  ֆունկցիայի գրոների քանակը:
2. Գտնել  $f$  ֆունկցիայի կրիտիկական կետերի քանակը:
3. Գտնել  $f$  ֆունկցիայի մինիմումի կետը:
4. Գտնել  $f$  ֆունկցիայի ամենամեծ արժեքը  $[1; 5]$  միջակայքում:

13. Տրված է  $f(x) = \sqrt{30 - 5x^2} + 26$  ֆունկցիան:

1. Գտնել  $f$  ֆունկցիայի մաքսիմումի կետը:
2. Գտնել  $f$  ֆունկցիայի գրաֆիկի  $x_0 = 1,5$  արգսիսն ունեցող կետում տարված շոշափողի և արգսիսների առանցքի կազմած անկյան աստիճանային չափը:
3. Գտնել  $f$  ֆունկցիայի գրաֆիկի  $x_0 = -1$  արգսիսն ունեցող կետով տարված շոշափողի և կոորդինատային առանցքներով սահմանափակված պատկերի մակերեսը:
4. Գտնել  $f$  ֆունկցիայի գրաֆիկի այն կետի արգսիսը, որում տարված շոշափողը զուգահեռ է  $y = -x + \ln 2$  ուղղին:

14. Տրված են  $f(x) = \frac{100}{1+x^2}$  և  $g(x) = x^2 - 4x + 50$  ֆունկցիաները:

1. Գտնել  $f$  ֆունկցիայի մեծագույն արժեքը:
2. Գտնել  $g$  ֆունկցիայի փոքրագույն արժեքը:
3.  $f$  ֆունկցիայի արժեքների տիրույթը քանի՞ ամբողջ թիվ է պարունակում:
4.  $f$  և  $g$  ֆունկցիաների արժեքների տիրույթները քանի՞ ընդհանուր ամբողջ թիվ ունեն:

15. Տրված է  $f(x) = -x^2 + 3x + 4$  ֆունկցիան:

1. Հաշվել  $f'(-3)$ -ը:
2.  $f$  ֆունկցիայի գրաֆիկը քանի՞ հատման կետ ունի կոորդինատների առանցքների հետ:
3. Գտնել  $f$  ֆունկցիայի գրաֆիկի այն կետի արգսիսը, որում նրա գրաֆիկին տարված շոշափողը զուգահեռ է  $y = -9x + 1$  ուղղին:
4. Գտնել  $a$  պարամետրի այն ամենափոքր բնական արժեքը, որի դեպքում  $f$  ֆունկցիայի գրաֆիկն ամբողջովին գտնվում է  $y = a$  ուղղից ներքև:

**16. Տրված է  $f(x) = x|x-4|$  ֆունկցիան:**

1. Հաշվել ֆունկցիայի արժեքը  $x = \sqrt{2} + 2$  կետում:
2. Բանի<sup>o</sup> հատման կետ ունեն  $y = 5$  ուղիղը և  $f$  ֆունկցիայի գրաֆիկը:
3. Գտնել ֆունկցիայի մեծագույն արժեքը  $[1; 2,5]$  միջակայքում:
4. Գտնել  $a$  պարամետրի բոլոր այն ամբողջ արժեքների քանակը, որոնց դեպքում  $y = a$  ուղիղը  $f$  ֆունկցիայի գրաֆիկը հատում է ճիշտ երեք կետում:

**17. Տրված է  $f(x) = |x-3| - x$  ֆունկցիան:**

1. Գտնել ֆունկցիայի արժեքը  $x = 0$  կետում:
2. Գտնել ֆունկցիայի ածանցյալը  $x = 4$  կետում:
3. Գտնել  $f$  ֆունկցիայի գրաֆիկով և կոորդինատական առանցքներով սահմանափակված պատկերի մակերեսի քառապատիկը:
4. Գտնել ֆունկցիայի մեծագույն և փոքրագույն արժեքների գումարը  $[-1; 5]$  միջակայքում:

**18. Տրված է  $f(x) = \frac{x+4}{x+2}$  ֆունկցիան:**

1. Գտնել  $x$ -ի բոլոր այն ամբողջ արժեքների քանակը, որոնց դեպքում  $f$  ֆունկցիայի արժեքները դրական չեն:
2. Գտնել  $f$  ֆունկցիայի կրիտիկական կետերի քանակը:
3. Գտնել բոլոր այն թվերի քանակը, որոնք  $f$  ֆունկցիայի արժեք չեն:
4. Գտնել  $y = f(|x|)$  ֆունկցիայի մեծագույն արժեքը:

19. Տրված է  $f(x) = x + \frac{4}{x}$  ֆունկցիան:

1. Գտնել  $\frac{f(x)}{f(-x)} + 4$  արտահայտության արժեքը:
2. Գտնել տրված ֆունկցիայի գրաֆիկի և  $y = 5$  ուղղի հատման կետերի քանակը:
3. Գտնել ֆունկցիայի փոքրագույն արժեքը  $(0; +\infty)$  միջակայքում:
4. Գտնել ֆունկցիայի մինիմումի կետերի քանակը:

20. Կատարել առաջադրանքները.

1.  $y = 2x - 9$  ուղիղը շոշափում է  $f(x) = x^2 - 4x$  ֆունկցիայի գրաֆիկը: Գտնել շոշափման կետի արսցիսը:
2. Գտնել  $f(x) = e^x - x$  ֆունկցիայի փոքրագույն արժեքը:
3. Գտնել  $f(x) = 3x^2 - 6x + 13$  ֆունկցիայի փոքրագույն արժեքը  $[-3; 0]$  միջակայքում:
4. Գտնել  $a$ -ի ամենափոքր արժեքը, որի դեպքում  $f(x) = \frac{x^3}{3} - 3x^2 + ax + 7$  ֆունկցիան աճող է ամբողջ թվային ուղղի վրա:

21. Տրված է  $f(x) = 1 - 2\sin x \cos x$  ֆունկցիան:

1. Գտնել  $f$  ֆունկցիայի մեծագույն արժեքը:
2. Գտնել  $f$  ֆունկցիայի ածանցյալը  $x = \frac{\pi}{3}$  կետում:
3. Գտնել  $f'(x) = -1$  հավասարման արմատների քանակը  $\left[-\frac{\pi}{2}; \pi\right]$  միջակայքում:
4. Գտնել  $-3 \cdot \cos \frac{T}{2}$  արտահայտության արժեքը, որտեղ  $T$  - ն  $f$  ֆունկցիայի հիմնական պարբերությունն է:

22. Տրված է  $f(x) = 3 \sin \frac{\pi x}{4} + 4 \cos \frac{\pi x}{4}$  ֆունկցիան:

1. Գտնել  $f$  ֆունկցիայի հիմնական պարբերությունը:
2. Գտնել  $f$  ֆունկցիայի մեծագույն արժեքը:
3. Քանի՞ ամբողջ թիվ է պարունակում  $f$  ֆունկցիայի արժեքների բազմությունը:
4. Գտնել  $F(x) = |f(x)|$  ֆունկցիայի փոքրագույն արժեքը:

23. Տրված է  $f(x) = 4\sqrt{2} \cos\left(3x + \frac{\pi}{4}\right)$  ֆունկցիան:

1. Գտնել  $f$  ֆունկցիայի ամենամեծ ամբողջ արժեքը:
2. Գտնել  $f$  ֆունկցիայի ածանցյալը  $x = -\frac{\pi}{6}$  կետում:
3. Գտնել  $4|\cos T|$  արտահայտության արժեքը, որտեղ  $T$ -ն  $f$  ֆունկցիայի հիմնական պարբերությունն է:
4.  $f$  ֆունկցիան քանի՞ զրո ունի  $\left[\frac{\pi}{2}; \frac{3\pi}{2}\right]$  միջակայքում:

24. Տրված է  $f(x) = -8 \sin 2x$  ֆունկցիան:

1. Գտնել  $f$  ֆունկցիայի արժեքը  $x = -\frac{1}{2} \arcsin \frac{3}{4}$  կետում:
2. Գտնել  $f$  ֆունկցիայի փոքրագույն արժեքը  $\left[-\frac{\pi}{2}; 0\right]$  միջակայքում:
3. Գտնել  $f$  ֆունկցիայի ածանցյալը  $x = \frac{\pi}{2}$  կետում:
4. Գտնել  $f$  ֆունկցիայի կրիտիկական կետերի քանակը  $[0; 3]$  միջակայքում:

25. Տրված են  $f(x) = \left| \cos \frac{\pi x}{4} \right|$  և  $g(x) = \frac{10}{1+x^2}$  ֆունկցիաները:

1. Գտնել  $f$  ֆունկցիայի զրոների քանակը  $[2; 14)$  միջակայքում:
2. Գտնել  $g$  ֆունկցիայի մեծագույն արժեքը:
3. Գտնել  $\varphi(x) = g(f(x))$  ֆունկցիայի փոքրագույն արժեքը:
4. Գտնել  $f$  ֆունկցիայի հիմնական պարբերությունը:

26. Տրված են  $f(x) = \frac{4}{|x-6|+2}$  և  $g(x) = 3 - \cos \pi x$  ֆունկցիաները:

1. Գտնել  $f$  ֆունկցիայի մեծագույն արժեքը:
2. Գտնել  $g$  ֆունկցիայի փոքրագույն արժեքը:
3. Գտնել  $g$  ֆունկցիայի հիմնական պարբերությունը:
4. Գտնել  $f$  և  $g$  ֆունկցիաների գրաֆիկների հատման կետի օրդինատը:

27. Տրված են  $f(x) = \cos \pi x + 1$  և  $g(x) = 2^{x^2-8x+17}$  ֆունկցիաները:

1. Գտնել  $f$  ֆունկցիայի ամենամեծ արժեքը:
2. Գտնել  $\varphi(x) = f(g(x))$  ֆունկցիայի փոքրագույն արժեքը:
3. Գտնել  $H(x) = g(f(x))$  ֆունկցիայի փոքրագույն արժեքը:
4. Գտնել  $f$  և  $g$  ֆունկցիաների գրաֆիկների հատման կետի արքսիսը:

**28. Տրված է  $f(x) = \sin x - x$  ֆունկցիան:**

1. Գտնել ֆունկցիայի կրիտիկական կետերի քանակը  $[-3\pi; 6\pi]$  միջակայքում:
2. Գտնել ֆունկցիայի մեծագույն արժեքը  $[0; 5]$  միջակայքում:
3. Գտնել ֆունկցիայի գրաֆիկին նրա  $x_0 = \frac{\pi}{2}$  արսցիտով կետում տարված շոշափողի և  $Ox$  առանցքի կազմած անկյան աստիճանային չափը:
4. Գտնել ամենափոքր ամբողջ թիվը, որ ֆունկցիայի արժեքը այդ կետում չգերազանցի  $-3,8$ -ը:

**29. Տրված են  $f(x) = \cos x - 1$  և  $g(x) = \frac{1}{\pi} \sqrt{(x + 4\pi)(4\pi - x)}$**

**ֆունկցիաները:**

1. Գտնել  $f$  ֆունկցիայի արժեքների տիրույթին պատկանող բոլոր ամբողջ թվերի արտադրյալը:
2. Գտնել  $g$  ֆունկցիայի որոշման տիրույթին պատկանող ամբողջ թվերի գումարը:
3. Գտնել  $g$  ֆունկցիայի մեծագույն արժեքը:
4. Քանի՞ հատման կետ ունեն  $f$  և  $g$  ֆունկցիաների գրաֆիկները:

**30. Տրված են  $f(x) = \frac{3 - x^2}{3 + x^2}$  և  $g(x) = \lg(\sqrt{x} + 10)$  ֆունկցիաները:**

1. Գտնել  $f$  ֆունկցիայի մեծագույն արժեքը:
2. Գտնել  $g$  ֆունկցիայի փոքրագույն արժեքը:
3. Գտնել  $f$  և  $g$  ֆունկցիաների գրաֆիկների հատման կետի արսցիտը:
4. Գտնել բոլոր այն միանիշ թվերի քանակը, որոնց դեպքում  $f$  ֆունկցիայի արժեքը փոքր լինի  $g$  ֆունկցիայի համապատասխան արժեքից:



31. Տրված է  $f(x) = 5^{2-|x|}$  ֆունկցիան:

1. Գտնել ֆունկցիայի մեծագույն արժեքը:
2. Գտնել ֆունկցիայի արժեքը  $\log_5 0,2$  կետում:
3. Գտնել ֆունկցիայի փոքրագույն արժեքը  $[0; \log_5 2,5]$  միջակայքում:
4. Զանի<sup>o</sup> ամբողջ թիվ է պարունակում  $f$  ֆունկցիայի արժեքների բազմությունը:


32. Տրված է  $f(x) = 12 \ln x - 3 \ln^2 x$  ֆունկցիան:

1. Գտնել  $f$  ֆունկցիայի զրոներից ամենափոքրը:
2. Հաշվել ֆունկցիայի ածանցյալը  $x = 1$  կետում:
3. Գտնել ֆունկցիայի մեծագույն արժեքը:
4. Գտնել ֆունկցիայի փոքրագույն արժեքը  $[e; e^4]$  միջակայքում:

33. Տրված է  $f(x) = \frac{ax}{x^2 + 9}$  ֆունկցիան:

1. Գտնել  $f$  ֆունկցիայի մեծագույն արժեքը  $a = 6$  դեպքում:
2. Գտնել ամենափոքր  $a$  բնական թիվը, որի դեպքում 1-ը ֆունկցիայի արժեք է:
3.  $a$ -ի  $n^{\circ}$  բնական արժեքի դեպքում 4-ը կլինի ֆունկցիայի մեծագույն արժեքը:
4. Գտնել  $|a|$ -ն, եթե  $f$  ֆունկցիայի արժեքների տիրույթը  $[-2; 2]$  միջակայքն է:

34. Տրված է  $D(f) = [-7; 3]$  որոշման տիրույթով  $f$  ֆունկցիայի գրաֆիկը:



1. Գտնել  $f(f(2)) + f(f(3))$  արտահայտության արժեքը:
2. Գտնել  $f'(-5) \cdot f(x) \leq f'(-2)$  անհավասարման ամբողջ լուծումների քանակը:
3. Գտնել  $f \circ f$  ֆունկցիայի որոշման տիրույթին պատկանող ամենամեծ և ամենափոքր ամբողջ թվերի տարբերությունը:
4. Գտնել  $f \circ f$  ֆունկցիայի արժեքների տիրույթին պատկանող ամբողջ թվերի գումարը:

35. Տրված է  $f(x) = 3x + 4\sqrt{1-x^2}$  ֆունկցիան:

1. Գտնել ֆունկցիայի որոշման տիրույթին պատկանող ամբողջ թվերի քանակը:
2. Գտնել  $\frac{f(\cos \alpha)}{3 \cos \alpha + 4 \sin \alpha}$  արտահայտության արժեքը, երբ  $\alpha \in \left(0; \frac{\pi}{2}\right)$ :
3. Գտնել ֆունկցիայի մեծագույն արժեքը:
4. Գտնել ֆունկցիայի արժեքների տիրույթին պատկանող ամբողջ թվերի գումարը:

## ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ

Հ/Հ	1	2	3	4
1	20	0	20	90
2	1	3	5	19
3	18	2	10	3
4	12	3	20	6
5	1	8	90	8
6	13	2	3	1
7	3	2	11	1
8	9	8	4	2
9	29	5	5	20
10	2	1	14	3
11	3	4	0	7
12	2	2	3	20
13	0	120	512	1
14	100	46	100	55
15	9	3	6	7
16	2	1	4	3
17	3	0	9	2
18	2	0	1	2
19	3	2	4	1
20	3	1	13	9
21	2	1	3	0
22	8	5	11	0
23	5	12	2	3
24	6	0	16	2
25	3	10	5	4
26	2	2	2	2
27	2	0	32	4
28	5	0	135	4
29	0	0	4	2
30	1	1	0	9
31	25	5	10	25
32	1	12	12	0
33	1	6	24	12
34	3	4	10	15
35	3	1	5	9

**ԲԱԺԻՆ 6. ՀԱՐԹԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ**

1.  $CH$  -ը  $C$  ուղիղ անկյունով  $ABC$  ուղղանկյուն եռանկյան բարձրությունն է,  $AC : BC = 3 : 4$ ,  $AB = 50$ :

1. Գտնել  $AC$  կողմի երկարությունը:
2. Գտնել  $CH$  բարձրության երկարությունը:
3. Գտնել  $BH$  հատվածի երկարությունը:
4. Գտնել եռանկյանը ներգծած շրջանագծի շառավիղի երկարությունը:

2.  $ABC$  ուղղանկյուն եռանկյան  $C$  ուղիղ անկյան գագաթից տարված է  $CH$  բարձրությունը:  $H$  կետի հեռավորությունները եռանկյան էջերից 2 և 4 են:

1. Գտնել  $CH$  բարձրության երկարության քառակուսին:
2. Գտնել  $ABC$  եռանկյան մեծ էջի երկարությունը:
3. Գտնել  $ABC$  եռանկյան մակերեսը:
4. Գտնել  $ABC$  եռանկյանն արտագծած շրջանագծի տրամագծի երկարության քառակուսին:

3.  $O$ -ն  $C$  ուղիղ անկյունով  $ABC$  ուղղանկյուն եռանկյանը ներգծված շրջանագծի կենտրոնն է և  $AC = 6$ ,  $BC = 8$ :

1. Գտնել  $AB$  կողմի երկարությունը:
2. Գտնել  $AOB$  անկյան աստիճանային չափը:
3. Գտնել  $AOB$  եռանկյան մակերեսը:
4. Գտնել  $AM$  և  $MB$  հատվածներից փոքրի երկարությունը, որտեղ  $M$  -ը  $ABC$  եռանկյանը ներգծված շրջանագծի և ներքնաձիգի շոշափման կետն է:

#### 4. Ուղղանկյուն եռանկյան էջերն են՝ 30 և 40:

1. Գտնել եռանկյանը ներգծած շրջանագծի շառավիղի երկարությունը:
2. Գտնել եռանկյանն արտագծած շրջանագծի շառավիղի երկարությունը:
3. Գտնել եռանկյան ուղիղ անկյան գագաթից ներքնաձիգին տարված բարձրության երկարությունը:
4. Գտնել եռանկյանը ներգծած շրջանագծի կենտրոնի հեռավորությունը ուղիղ անկյան գագաթից տարված բարձրությունից:

#### 5. $AC = 6$ և $BC = 8$ էջերով ուղղանկյուն եռանկյանն արտագծված է շրջանագիծ: $E$ -ն և $F$ -ը համապատասխանաբար $AC$ և $CB$ փոքր աղեղների միջնակետերն են, իսկ $G$ -ն՝ $C$ կետը չափարունակող $AB$ աղեղի միջնակետը:

1. Գտնել  $ABC$  եռանկյանը ներգծած շրջանագծի շառավիղի երկարությունը:
2. Գտնել  $EGF$  անկյան աստիճանային չափը:
3. Գտնել  $\sqrt{2}EF$  արտահայտության արժեքը:
4. Գտնել  $EGF$  եռանկյան մակերեսը:

#### 6. Տրված է $BC = 40$ և $AC = 30$ էջերով $ABC$ ուղղանկյուն եռանկյունը: $M$ -ը և $N$ -ը համապատասխանաբար $AB$ ներքնաձիգի և $AC$ էջի միջնակետերն են: $M$ և $N$ կետերով անցնող շրջանագիծը շոշափում է $BC$ էջը $K$ կետում:

1. Գտնել  $NM$  հատվածի երկարությունը:
2. Գտնել  $\frac{BK}{KC}$  հարաբերությունը:
3. Գտնել  $NMK$  եռանկյան մակերեսը:
4. Գտնել շրջանագծի այն լարի երկարությունը, որն ընկած է ներքնաձիգն ընդգրկող ուղղի վրա:

7. Ուղղանկյուն եռանկյանը ներգծած և արտագծած շրջանագծերի շառավիղները համապատասխանաբար հավասար են 2-ի և 5-ի:

1. Գտնել եռանկյան ներքնաձիգի երկարությունը:
2. Գտնել ուղիղ անկյան գագաթից տարված միջնագծի երկարությունը:
3. Գտնել եռանկյան պարագիծը:
4. Գտնել եռանկյան մակերեսը:

8.  $ABC$  ուղղանկյուն եռանկյան  $A$  անկյան կիսորդը  $BC$  էջը հատում է  $D$  կետում:  $D$  կետով տարված է  $AC$  -ին զուգահեռ ուղիղ, որն  $AB$  ներքնաձիգը հատում է  $E$  կետում: Հայտնի է, որ  $AE = 15$ ,  $CD = 12$ :

1. Գտնել  $DE$  հատվածի երկարությունը:
2. Գտնել  $ADE$  եռանկյան մակերեսը:
3. Գտնել  $BD$  հատվածի երկարությունը:
4. Գտնել  $ABC$  եռանկյանն արտագծած և ներգծած շրջանագծերի կենտրոնների հեռավորության քառակուսին:

9.  $O$  -ն  $ABC$  ուղղանկյուն եռանկյանը ներգծված շրջանագծի կենտրոնն է: Հայտնի է, որ  $\angle C = 90^\circ$ ,  $AO = \sqrt{5}$ ,  $OB = \sqrt{10}$ :

1. Գտնել  $AOB$  անկյան աստիճանային չափը:
2. Գտնել  $ABC$  եռանկյան ներքնաձիգի երկարությունը:
3. Գտնել  $ABC$  եռանկյանը ներգծած շրջանագծի շառավիղի երկարությունը:
4. Գտնել եռանկյան մեծ էջի երկարությունը:

10.  $AC = 30$  և  $BC = 40$  էջերով ուղղանկյուն եռանկյանը ներգծված է շրջանագիծ, որը  $AC$ ,  $BC$  և  $AB$  կողմերը շոշափում է համապատասխանաբար  $E$ ,  $F$  և  $K$  կետերում:

1. Գտնել  $AK$  հատվածի երկարությունը:
2. Գտնել  $EFK$  եռանկյանն արտագծած շրջանագծի շառավղի երկարությունը:
3. Գտնել  $EKF$  անկյան աստիճանային չափը:
4. Գտնել  $EFK$  եռանկյան մակերեսը:

11. Հավասարասրուն եռանկյան հիմքը 12 է, իսկ սրունքը՝ 10:

1. Գտնել եռանկյան կիսապարագիծը:
2. Գտնել եռանկյան մեծ կողմին տարված միջնագծի երկարությունը:
3. Գտնել եռանկյանը ներգծած շրջանագծի շառավղի երկարությունը:
4. Գտնել  $5 \cos \alpha$  արտահայտության արժեքը, որտեղ  $\alpha$ -ն եռանկյան հիմքին առընթեր անկյունն է:

12.  $ABC$  հավասարասրուն եռանկյան  $AC$  հիմքի երկարությունը 48 է, իսկ  $AB$  և  $BC$  սրունքների երկարությունները՝ 30:

1. Գտնել  $B$  կետի հեռավորությունը եռանկյան միջնագծերի հատման կետից:
2. Գտնել եռանկյանն արտագծած շրջանագծի շառավղի երկարությունը:
3. Գտնել եռանկյանը ներգծած շրջանագծի շառավղի երկարությունը:
4. Գտնել եռանկյան միջնագծերի հատման կետի հեռավորությունը կիսորդների հատման կետից:

13.  $AA_1$ -ը և  $BB_1$ -ը  $AB = BC = 10$ ,  $AC = 12$  կողմերով  $ABC$  եռանկյան բարձրություններն են:

1. Գտնել  $BB_1$  բարձրության երկարությունը:
2. Գտնել  $ABC$  եռանկյան մակերեսը:
3. Գտնել  $ABC$  եռանկյանը ներգծած շրջանագծի շառավղի երկարությունը:
4. Գտնել  $A_1B_1$  հատվածի երկարությունը:

14.  $ABC$  հավասարասրուն եռանկյանը ներգծած շրջանագծի կենտրոնով տարված է հիմքին զուգահեռ  $EK$  ուղիղը, որն  $AB$  սրունքը հատում է  $E$  կետում, իսկ  $BC$  սրունքը  $K$  կետում: Հայտնի է, որ  $EK = 40$ ,  $ABC$  եռանկյանը ներգծած շրջանագծի շառավիղը 12 է:

1. Գտնել  $ABC$  եռանկյան սրունքի երկարությունը:
2. Գտնել  $ABC$  եռանկյան պարագիծը:
3. Գտնել  $AEKC$  սեղանի մակերեսը:
4. Գտնել  $ABC$  եռանկյանն արտագծած շրջանագծի տրամագծի երկարությունը:

15.  $BD$ -ն  $AC = 16$  հիմքով  $ABC$  հավասարասրուն եռանկյան կիսորդն է:  $O$ -ն  $BD$  կիսորդի այնպիսի կետ է, որ  $BO = 12$ ,  $OD = 6$ :  $AO$  ուղիղը  $BC$  կողմը հատում է  $K$  կետում:

1. Գտնել  $ABC$  եռանկյան մակերեսը:
2. Գտնել  $AOB$  եռանկյան մակերեսը:
3. Գտնել  $AOD$  եռանկյանը ներգծած շրջանագծի շառավղի երկարությունը:
4. Գտնել  $AOB$  և  $BOK$  եռանկյունների արտագծած շրջանագծերի շառավիղների երկարությունների հարաբերությունը:



16.  $ABC$  հավասարասրուն եռանկյան  $B$  գագաթից տարված ուղիղը, որն անցնում է եռանկյանն արտագծած շրջանագծի  $O$  կենտրոնով, հատում է  $AC$  սրունքը  $D$  կետում:  $K$ -ն՝  $BDC$  եռանկյան  $D$  գագաթից տարված բարձրության հիմքն է:

$$\angle A = 30^\circ, AB = AC = 8\sqrt{2}:$$

1. Գտնել  $ABC$  եռանկյան մակերեսը:
2. Գտնել  $DBC$  անկյան աստիճանային չափը:
3. Գտնել  $BD$  հատվածի երկարությունը:
4. Գտնել  $\sqrt{3}S$  մեծության արժեքը, որտեղ  $S$ -ը  $BDK$  եռանկյան մակերեսն է:

17. Եռանկյան կողմերն են՝ 17, 25 և 28:

1. Գտնել եռանկյան կիսապարագիծը:
2. Գտնել եռանկյան մակերեսը:
3. Գտնել եռանկյան մեծ կողմին տարված բարձրության երկարությունը:
4. Գտնել եռանկյանը ներգծած շրջանագծի շառավղի երկարությունը:

18. Եռանկյան մակերեսը 24 է, իսկ նրա երկու բարձրությունները՝ 6 և 8:

1. Գտնել եռանկյան փոքր կողմի երկարությունը:
2. Գտնել եռանկյան մեծ անկյան աստիճանային չափը:
3. Գտնել եռանկյան մեծ կողմին տարված միջնագծի երկարությունը:
4. Գտնել եռանկյանը ներգծած շրջանագծի շառավղի երկարությունը:

19. Տրված է  $AB = 30$ ,  $AC = 20$  և  $BC = 25$  կողմերով  $ABC$  եռանկյունը:  
 $AE$ -ն  $A$  անկյան կիսորդն է:  $E$  կետից  $AC$  կողմին տարված  
 գուգահեռ ուղիղը  $AB$  կողմը հատում է  $K$  կետում:

1. Գտնել  $EB$  հատվածի երկարությունը:
2. Գտնել  $EK$  հատվածի երկարությունը:
3. Գտնել  $BK$  հատվածի երկարությունը:
4. Գտնել  $ACEK$  քառանկյան պարագիծը:

20. 104 պարագծով  $ABC$  եռանկյան  $AD$  կիսորդը  $BC$  կողմը տրոհում  
 է  $BD = 15$  և  $CD = 24$  երկարությամբ հատվածների:

1. Գտնել  $AB$  և  $AC$  կողմերի երկարությունների գումարը:
2. Գտնել  $ABC$  եռանկյան մեծ կողմի երկարությունը:
3. Գտնել  $ABC$  եռանկյան մակերեսը:
4. Գտնել  $ABC$  եռանկյանը ներգծած շրջանագծի շառավիղը:

21.  $ABC$  եռանկյան  $AA_1$  և  $BB_1$  միջնագծերը փոխադրահայաց են և  
 հատվում են  $O$  կետում.  $AA_1 = 9$ ,  $BB_1 = 12$ :

1. Գտնել  $AO$  հատվածի երկարությունը:
2. Գտնել  $AB$  կողմի երկարությունը:
3. Գտնել  $ABC$  եռանկյան մակերեսը:
4. Գտնել  $CO$  հատվածի երկարությունը:

22. Շրջանագիծը, որի կենտրոնը  $ABC$  եռանկյան  $B$  գագաթն է,  
 անցնում է  $A$  կետով և հատում է  $AC$  և  $BC$  կողմերը համա-  
 պատասխանաբար  $M$  և  $N$  կետերում:  $A$  անկյունը  $32^\circ$  է,  
 $C$  անկյունը՝  $24^\circ$ :

1. Գտնել  $ABC$  անկյան աստիճանային չափը:
2. Գտնել  $AMB$  անկյան աստիճանային չափը:
3. Գտնել  $NAM$  անկյան աստիճանային չափը:
4. Գտնել  $M$  կետով անցնող տրամագծի և  $AN$  լարի կազմած սուր  
 անկյան աստիճանային չափը:

23.  $AC = 21$  կողմով  $ABC$  եռանկյանն արտագծված է շրջանագիծ: Եռանկյան միջնագծերի հատման  $O$  կետով տարված է  $AC$  կողմին զուգահեռ  $DE$  լարը, որը  $AB$  կողմը հատում է  $M$ , իսկ  $BC$  կողմը՝  $N$  կետում: Եռանկյունից դուրս գտնվող լարի հատվածների երկարություններն են՝  $DM = 8$ ,  $NE = 11$ :

1. Զանի<sup>o</sup> անգամ է  $AB$  հատվածը մեծ  $AM$  հատվածից:
2. Գտնել  $AB$  կողմի երկարությունը:
3. Գտնել  $MN$  հատվածի երկարությունը:
4. Գտնել  $NO$  հատվածի երկարությունը:

24. Ձուգահեռագծի կից կողմերը հավասար են  $4\sqrt{2}$  և  $7$ , իսկ սուր անկյունը  $45^{\circ}$  է:

1. Գտնել այդ զուգահեռագծի բութ անկյունների գումարի աստիճանային չափը:
2. Գտնել զուգահեռագծի մակերեսը:
3. Գտնել զուգահեռագծի անկյունագծերի հատման կետի հեռավորությունը մեծ կողմից:
4. Գտնել զուգահեռագծի փոքր անկյունագծի երկարությունը:

25. Ձուգահեռագծի սուր անկյունը  $60^{\circ}$  է, իսկ անկյունագծերի հատման կետի հեռավորությունը կողմերից՝  $3$  և  $4\sqrt{3}$ :

1. Գտնել զուգահեռագծի փոքր բարձրության երկարությունը:
2. Գտնել զուգահեռագծի մակերեսը:
3. Գտնել զուգահեռագծի բութ անկյան գագաթից նրա կողմերին տարված բարձրություններով կազմված անկյան աստիճանային չափը:
4. Գտնել զուգահեռագծի անկյունագծերի երկարությունների քառակուսիների գումարը:

26. Տրված է  $ABCD$  զուգահեռագիծը:  $AB = BD = 10$ ,  $AD = 12$ :

1. Գտնել զուգահեռագծի փոքր բարձրության երկարությունը:
2. Գտնել զուգահեռագծի մակերեսը:
3. Գտնել  $ABD$  եռանկյանը ներգծած շրջանագծի շառավղի երկարությունը:
4. Գտնել զուգահեռագծի անկյունագծերի հատման կետի հեռավորությունը  $AD$  հատվածի միջնակետից:

27.  $BD = 6$  և  $AC = 8$  անկյունագծերով  $ABCD$  շեղանկյան երկու կից կողմերի  $M$  և  $N$  միջնակետերը և այդ կողմերին չափատկանող  $C$  զագաթը միացված են իրար:

1. Գտնել շեղանկյան կողմի երկարությունը:
2. Գտնել շեղանկյան մակերեսը:
3. Գտնել  $MNC$  եռանկյան մակերեսը:
4. Գտնել փոքր անկյունագծի այն մասի երկարությունը, որը գտնվում է  $MNC$  եռանկյան մեջ:

28. Տրված է  $A$  սուր անկյունով,  $AB = 5$ ,  $BC = 10$  կողմերով և  $48$  մակերեսով  $ABCD$  զուգահեռագիծը: Չուգահեռագծի  $A$  զագաթը միացված է  $BC$  կողմի  $F$  միջնակետին, իսկ  $C$  զագաթը՝  $AD$  կողմի  $E$  միջնակետին:  $M$ -ը  $AF$  և  $BE$ , իսկ  $N$ -ը՝  $CE$  և  $FD$  հատվածների հատման կետերն են:

1. Գտնել  $BEDF$  քառանկյան մակերեսը:
2. Գտնել  $MFNE$  քառանկյան մակերեսը:
3. Գտնել  $MN$  հատվածի երկարությունը:
4. Գտնել  $MF$  հատվածի երկարությունը:

29.  $N$  -ը և  $M$  -ը  $ABCD$  զուգահեռագծի համապատասխանաբար  $CD$  և  $BC$  կողմերի միջնակետերն են,  $AN = 3$ ,  $AM = 6$ ,  $\angle NAM = 60^\circ$ :

1. Գտնել  $ANM$  անկյան աստիճանային չափը:
2. Գտնել  $BD$  անկյունագծի երկարության քառակուսին:
3. Գտնել  $AD$  -ի երկարությունը:
4. Գտնել  $ANM$  և  $NMC$  եռանկյունների մակերեսների հարաբերությունը:

30. Հավասարասրուն սեղանի հիմքերն են 2 և 14, իսկ բարձրությունը՝ 8:

1. Գտնել սեղանի միջին գծի երկարությունը:
2. Գտնել սեղանի սրունքի երկարությունը:
3. Գտնել սեղանի մակերեսը:
4. Գտնել սեղանին արտագծած շրջանագծի շառավղի քառակուսին:

31. Տրված է  $AD$  և  $BC$  հիմքերով  $ABCD$  հավասարասրուն սեղանը: Հայտնի է, որ  $\angle BCA = 15^\circ$ ,  $\angle CDA = 30^\circ$ ,  $AD = 2\sqrt{2}$ :

1. Գտնել  $AC$  անկյունագծի երկարությունը:
2. Գտնել  $ABC$  եռանկյանը և  $ABCD$  սեղանին արտագծած շրջանագծերի շառավղիների հարաբերությունը:
3. Գտնել սեղանի անկյունագծերով կազմված սուր անկյան աստիճանային չափը:
4. Գտնել սեղանի մակերեսը:

32.  $ABCD$  փոխադրահայաց անկյունագծերով հավասարասրուն սեղանի բարձրությունը  $17\sqrt{2}$  է, իսկ  $BC$  և  $AD$  հիմքերը հարաբերում են ինչպես 5:12:

1. Գտնել սեղանի անկյունագծի և հիմքի կազմած անկյան աստիճանային չափը:
2. Գտնել սեղանի մակերեսը:
3. Գտնել սեղանի անկյունագծի երկարությունը:
4. Գտնել սեղանի սրունքների վրա ծայրակետեր ունեցող և հիմքերին զուգահեռ այն հատվածի երկարությունը, որը սեղանը տրոհում է երկու հավասարամեծ մասերի:

33.  $BC = 7, AD = 15$  հիմքերով  $ABCD$  հավասարասրուն սեղանի սրունքի երկարությունը 8 է:

1. Գտնել սեղանի միջին գծի երկարությունը:
2. Գտնել սեղանի սուր անկյան աստիճանային չափը:
3. Գտնել սեղանի անկյունագծի երկարությունը:
4. Գտնել սեղանի  $AB$  և  $DC$  սրունքները պարունակող ուղիղների հատման կետի և  $B$  կետի հեռավորությունը:

34.  $A$  ուղիղ անկյունով  $ABCD$  սեղանին ներգծած  $O$  կենտրոնով շրջանագիծը սեղանի  $CD$  սրունքը շոշափում է  $E$  կետում և այդ կետով այն տրոհում  $CE = 3$  և  $ED = 12$  երկարությամբ հատվածների:

1. Գտնել  $OBC$  անկյան աստիճանային չափը:
2. Գտնել  $COD$  անկյան աստիճանային չափը:
3. Գտնել շրջանագծի շառավղի երկարությունը:
4. Գտնել սեղանի մակերեսը:

35.  $ABCD$  սեղանի  $AD$  հիմքը երեք անգամ մեծ է  $CB$  հիմքից:  $BOC$  եռանկյան մակերեսը, որտեղ  $O$ -ն սեղանի անկյունագծերի հատման կետն է, հավասար է 12-ի:

1. Գտնել  $AOD$  եռանկյան մակերեսը:
2. Գտնել  $\frac{AC}{CO}$  հարաբերությունը:
3. Գտնել  $AOB$  և  $COD$  եռանկյունների մակերեսների հարաբերությունը:
4. Գտնել  $AOB$  եռանկյան մակերեսը:

36.  $ABCD$  սեղանի  $AD$  և  $BC$  հիմքերը համապատասխանաբար հավասար են 12 և 6, իսկ  $AB = CD = 6$ :  $AD$  հիմքի վրա տրված է  $K$  կետն այնպես, որ  $CK$  -ն սեղանը բաժանում է երկու հավասարամեծ մասերի:

1. Գտնել  $DK$  հատվածի երկարությունը:
2. Գտնել  $ACD$  անկյան աստիճանային չափը:
3. Գտնել  $\sqrt{3}BK$  հատվածի երկարությունը:
4. Գտնել  $ABCD$  սեղանին արտագծած շրջանագծի տրամագծի երկարությունը:

37.  $ABCD$  սեղանը ( $AB \parallel CD$ )  $AC$  անկյունագծով բաժանվում է երկու նման եռանկյունների, ընդ որում՝  $AB = 25$ ,  $BC = 20$ ,  $AC = 15$ :

1. Գտնել  $ACB$  անկյան աստիճանային չափը:
2. Գտնել  $ACB$  եռանկյան  $C$  գագաթից տարված բարձրության երկարությունը:
3. Գտնել  $DC$  կողմի երկարությունը:
4. Գտնել  $ABCD$  սեղանի մակերեսը:

38.  $ABCD$  սեղանի միջին գծի երկարությունը 4 է,  $\angle A = 40^\circ$ ,  $\angle D = 50^\circ$ , իսկ  $AD$  և  $BC$  հիմքերի միջնակետերը միացնող հատվածի երկարությունը՝ 1:

1. Գտնել  $AB$  և  $CD$  ուղիղների կազմած անկյան աստիճանային չափը:
2. Գտնել  $\frac{AD - BC}{2}$  մեծության արժեքը:
3. Գտնել  $AD$  հիմքի երկարությունը:
4. Գտնել  $\frac{AB}{\sin 50^\circ}$  հարաբերությունը:

39.  $BC$ -ն և  $AD$ -ն  $ABCD$  սեղանի հիմքերն են:  $BC = 8$ ,  $AD = 18$ ,  
 $AC = 10$ ,  $BD = 24$ :  $AD$  կողմի վրա  $K$  կետն ընտրված է այնպես,  
 որ  $AK = 13$ :

1. Գտնել սեղանի անկյունագծերը պարունակող ուղիղների կազմած անկյան աստիճանային չափը:
2. Գտնել սեղանի մակերեսը:
3. Գտնել  $CK$  հատվածի երկարությունը:
4. Գտնել  $ABK$  եռանկյան մակերեսը:

40.  $BC$ -ն և  $AD$ -ն  $ABCD$  սեղանի հիմքերն են և  $AD = 30$ ,  $BC = 20$ ,  
 $AB = 6$ ,  $CD = 8$ :

1. Գտնել  $AB$  և  $CD$  ուղիղների կազմած անկյան աստիճանային չափը:
2. Գտնել  $EB$  հատվածի երկարությունը, որտեղ  $E$ -ն  $AB$  և  $CD$  ուղիղների հատման կետն է:
3. Գտնել  $A$  և  $B$  կետերով անցնող և  $CD$  ուղիղը շոշափող շրջանագծի շառավղի երկարությունը:
4. Գտնել  $ABK$  եռանկյան մակերեսը, որտեղ  $K$ -ն  $CD$  սրունքի միջնակետն է:

41. Շրջանագծին ներգծած  $ABCD$  քառանկյան  $BD$  անկյունագիծը կիսում է  $B$  անկյունը և  $AC$  անկյունագիծը հատում  $E$  կետում:  
 $BC = 20$ ,  $CD = 15$ ,  $CE = 12$ :

1. Գտնել  $AD$  կողմի երկարությունը:
2. Գտնել  $ED$  հատվածի երկարությունը:
3. Գտնել  $BCD$  անկյան աստիճանային չափը:
4. Գտնել  $ABCD$  քառանկյան մակերեսը:



42.  $ABCD$  քառանկյունը ներգծված է  $O$  կենտրոնով շրջանագծին:  $OA$  շառավիղն ուղղահայաց է  $OB$  շառավիղին, իսկ  $OC$  շառավիղը՝  $OD$  շառավիղին:  $C$  կետից  $AD$  ուղղին տարված ուղղահայացի երկարությունը 9 է:  $BC$  հատվածի երկարությունը 2 անգամ փոքր է  $AD$  հատվածի երկարությունից:

1. Գտնել քառանկյան  $A$  և  $B$  անկյունների գումարի աստիճանային չափը:
2. Գտնել  $BC$  -ի երկարությունը:
3. Գտնել  $ABCD$  քառանկյան մակերեսը:
4. Գտնել շրջանագծի շառավղի երկարության քառակուսին:

43. Շրջանագծի  $A$  կետից տարված են  $AC = 20$  և  $AB = 24$  երկարությամբ սուր անկյուն կազմող երկու լարեր: Փոքր լարի միջնակետի հեռավորությունը մեծ լարից 8 է:

1. Գտնել  $ABC$  եռանկյան  $C$  գագաթից տարված բարձրության երկարությունը:
2. Գտնել  $A$  կետի հեռավորությունը  $AB$  լարին ուղղահայաց տրամագծից:
3. Գտնել  $CB$  հատվածի երկարությունը:
4. Գտնել շրջանագծի տրամագծի երկարությունը:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ա/Հ	Ենթաառաջադրանքի համարը			
	1	2	3	4
1	30	24	32	10
2	20	10	25	125
3	10	135	10	4
4	10	25	24	2
5	2	45	10	30
6	20	3	150	11
7	10	5	24	24
8	15	90	20	80
9	135	5	1	4
10	20	10	45	120
11	16	8	3	3
12	12	25	8	2
13	8	48	3	6
14	45	162	672	75
15	144	48	2	2
16	32	60	8	24
17	35	210	15	6
18	6	90	5	2
19	15	12	18	54
20	65	40	468	9
21	6	10	72	10
22	124	32	4	36
23	3	30	14	7
24	270	28	2	5

Ա/Հ	Ենթաառաջադրանքի համարը			
	1	2	3	4
25	6	96	60	608
26	8	96	3	5
27	5	24	9	2
28	24	12	5	4
29	90	108	4	3
30	8	10	64	50
31	2	1	30	1
32	45	578	34	26
33	11	60	13	7
34	45	90	6	162
35	108	4	1	36
36	9	90	9	12
37	90	12	9	204
38	90	1	5	2
39	90	120	13	60
40	90	12	15	60
41	15	9	90	300
42	180	6	81	45
43	16	12	20	25

## ԲԱԺԻՆ 7. ՏԱՐԱԾԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ

1. Տրված է  $ABCD A_1 B_1 C_1 D_1$  կանոնավոր քառանկյուն պրիզման, որի հիմքի կողմը 3 է, իսկ բարձրությունը՝ 4 :

1. Գտնել պրիզմայի ծավալը:
2. Գտնել պրիզմայի կողմնային մակերևույթի մակերեսը:
3. Գտնել պրիզմայի անկյունագծի երկարության քառակուսին:
4. Գտնել  $AD$  կողով և  $B_1$  կետով անցնող հարթությամբ պրիզմայի հատույթի մակերեսը:

2.  $ABCD A_1 B_1 C_1 D_1$  կանոնավոր քառանկյուն պրիզմայի հիմքի կողմը  $5\sqrt{3}$  է, իսկ բարձրությունը՝ 5 :  $AD$  կողմի վրա  $E$  կետը վերցված է այնպես, որ  $ED = 5$  :

1. Գտնել պրիզմայի անկյունագծի երկարության քառակուսին:
2. Գտնել պրիզմայի ծավալը:
3. Գտնել  $B_1 ADC$  երկնիստ անկյան աստիճանային չափը:
4. Հաշվել  $C$ ,  $C_1$ ,  $E$  կետերով անցնող հարթությամբ պրիզմայի հատույթի մակերեսը:

3. Ուղղանկյունանիստի անկյունագիծը կողմնային նիստի հարթության հետ կազմում է  $30^\circ$ , իսկ հիմքի հարթության հետ՝  $45^\circ$  անկյուն: Ուղղանկյունանիստի բարձրությունը 6 է:

1. Գտնել ուղղանկյունանիստի անկյունագծի և կողմնային կողի կազմած անկյան աստիճանային չափը:
2. Գտնել ուղղանկյունանիստի հիմքի մակերեսը:
3. Գտնել ուղղանկյունանիստի բոլոր անկյունագծերի երկարությունների քառակուսիների գումարը:
4. Գտնել այն ութանիստի ծավալը, որի գագաթներն են ուղղանկյունանիստի նիստերի անկյունագծերի հատման կետերն են:

4.  $ABCD A_1 B_1 C_1 D_1$  ուղիղ պրիզմայի հիմքը 30 և 40 անկյունագծերով շեղանկյուն է: Պրիզմայի բարձրությունը հավասար է 7-ի:
1. Գտնել պրիզմայի այն անկյունագծային հատույթի մակերեսը, որն անցնում է հիմքի մեծ անկյունագծով:
  2. Գտնել պրիզմայի կողմնային մակերևույթի մակերեսը:
  3. Գտնել պրիզմայի  $B_1$  գագաթի հեռավորությունը  $AD$  կողից:
  4. Գտնել  $AD$  և  $B_1 C_1$  կողերով տարված հարթությամբ պրիզմայի հատույթի մակերեսը:
5.  $ABCD A_1 B_1 C_1 D_1$  ուղիղ պրիզմայի հիմքը 7 և 25 հիմքերով և 12 բարձրությամբ հավասարասրուն սեղան է: Պրիզմայի անկյունագիծը հավասար է 25-ի:
1. Գտնել պրիզմայի հիմքի անկյունագծի երկարությունը:
  2. Գտնել պրիզմայի բարձրության երկարությունը:
  3. Գտնել պրիզմայի անկյունագծային հատույթի մակերեսը:
  4. Գտնել  $A_1 ABCD$  բուրգի ծավալը:
6. Ուղիղ գուգահեռանիստի հիմքի կողմերի երկարությունները 2 և 11 են, իսկ նրանց կազմած անկյունը՝  $60^\circ$ : Չուգահեռանիստի մեծ անկյունագծի երկարությունը  $7\sqrt{6}$  է:
1. Գտնել գուգահեռանիստի հիմքի բութ անկյան աստիճանային չափը:
  2. Գտնել գուգահեռանիստի մեծ անկյունագծի և հիմքի հարթության կազմած անկյան աստիճանային չափը:
  3. Գտնել գուգահեռանիստի մեծ անկյունագծային հատույթի մակերեսը:
  4. Գտնել գուգահեռանիստի ծավալը:

7.  $ABCD A_1 B_1 C_1 D_1$  ուղիղ պրիզմայի բարձրությունը 3 է, հիմքը 6 կողմով շեղանկյուն է, իսկ  $\angle BAD = 60^\circ$ :

1. Գտնել պրիզմայի կողմնային մակերևույթի մակերեսը:
2. Գտնել  $BC_1 CA$  երկնիստ անկյան աստիճանային չափը:
3. Գտնել  $C_1$  գագաթով և հիմքի փոքր անկյունագծով անցնող հարթությամբ առաջացած հատույթի մակերեսը:
4. Գտնել  $A_1 BDC_1$  երկնիստ անկյան աստիճանային չափը:

8. Ուղիղ պրիզմայի կողմնային կողի երկարությունը 10 է, իսկ հիմքը՝ 24 և 32 էջերով ուղղանկյուն եռանկյուն: Ներքնաձիգի միջնակետով տարված է այդ ներքնաձիգին ուղղահայաց հարթություն:

1. Գտնել պրիզմայի ծավալի  $\frac{1}{10}$  մասը:
2. Գտնել պրիզմային արտագծած գնդային մակերևույթի շառավղի քառակուսին:
3. Գտնել առաջացած հատույթի մակերեսը:
4. Գտնել տարված հարթությանը զուգահեռ և կողմնային կողով անցնող հարթությամբ հատույթի մակերեսը:

9.  $ABCA_1 B_1 C_1$  ուղիղ պրիզմայի հիմքը  $AB = 13$ ,  $BC = 15$ ,  $AC = 14$  կողմերով  $ABC$  եռանկյունն է:  $B$  գագաթի հեռավորությունը  $AB_1 C$  հատույթից 9,6 է:

1. Գտնել  $ABC$  եռանկյան մակերեսը:
2. Գտնել  $B_1 ACB$  երկնիստ անկյան սինուսի հնգապատիկը:
3. Գտնել  $BB_1$  կողի երկարությունը:
4. Գտնել պրիզմայի կողմնային նիստերը և հիմքը շոշափող գնդային մակերևույթի շառավիղը:

10.  $ABCD A_1 B_1 C_1 D_1$  ուղիղ գուգահեռանիստի  $AA_1$  կողմնային կողը հավասար է 4 -ի, իսկ հիմքի  $AB = 3$  և  $AD = 5$  կողմերը կազմում են  $60^\circ$  անկյուն:  $BC$  կողմի վրա նշված է  $N$  կետն այնպես, որ  $CN = 2$ :

1. Գտնել  $AN$  և  $D_1 C_1$  ուղիղների հեռավորությունը:
2. Քանի՞ աստիճան է  $B_1 D$  և  $AC_1$  անկյունագծերի կազմած անկյունը:
3. Գտնել  $AN$  ուղղի և  $DD_1 C_1 C$  նիստի կազմած անկյան աստիճանային չափը:
4. Գտնել  $B_1$  գագաթով անցնող և  $AN$  -ին ուղղահայաց հատույթի մակերեսը:

11.  $ABCD A_1 B_1 C_1 D_1$  գուգահեռանիստի բոլոր նիստերը 6 և 8 երկարությամբ անկյունագծերով շեղանկյուններ են, իսկ  $A$  գագաթի հարթ անկյունները սուր են:

1. Գտնել գուգահեռանիստի լրիվ մակերևույթի մակերեսը:
2. Գտնել  $BB_1 D_1 D$  հատույթի մակերեսը:
3. Գտնել  $ABCD$  հիմքի վրա  $AA_1$  կողի պրոյեկցիայի երկարության քառապատիկը:
4. Գտնել  $\frac{V}{39}$  հարաբերության թվային արժեքը, որտեղ  $V$  -ն գուգահեռանիստի ծավալն է:

12.  $ABCD A_1 B_1 C_1 D_1$  գուգահեռանիստի հիմքը  $AB = 3\sqrt{2}$  և  $BC = 2\sqrt{2}$  կողմերով ուղղանկյուն է:  $\sqrt{2}$  երկարությամբ  $AA_1$  կողը հիմքի՝ իրեն կից կողմերից յուրաքանչյուրի հետ կազմում է  $60^\circ$ -ի անկյուն:

1. Գտնել գուգահեռանիստի բարձրության երկարությունը:
2. Գտնել  $AA_1$  կողմնային կողի և հիմքի հարթության կազմած անկյան աստիճանային չափը:
3. Գտնել գուգահեռանիստի ծավալը:
4. Գտնել  $A$  և  $A_1$  կետերով անցնող և հիմքի հարթությանն ուղղահայաց հարթությամբ առաջացած հատույթի մակերեսը:

13. Կանոնավոր քառանկյուն բուրգի բարձրության երկարությունը  $4\sqrt{3}$  է, իսկ կողմնային նիստի և հիմքի հարթության կազմած անկյունը  $60^\circ$ :

1. Գտնել բուրգի բարձրության և հարթագծի կազմած անկյան աստիճանային չափը:
2. Գտնել բուրգի հարթագծի երկարությունը:
3. Գտնել բուրգի հիմքի պարագիծը:
4. Գտնել բուրգի լրիվ մակերևույթի մակերեսը:

14. Կանոնավոր քառանկյուն բուրգի յուրաքանչյուր կողմի երկարությունը  $5\sqrt{2}$  է:

1. Գտնել բուրգի բարձրության երկարությունը:
2. Գտնել հիմքի հարթության հետ կողմնային կողմի կազմած անկյան աստիճանային չափը:
3. Գտնել բուրգի ծավալի եռապատիկը:
4. Գտնել բուրգին արտագծած գնդային մակերևույթի շառավղի երկարությունը:

15. Կանոնավոր եռանկյուն բուրգի հիմքի կողմը  $6\sqrt{3}$  է, իսկ բարձրությունը՝  $3\sqrt{3}$ :

1. Գտնել բուրգի հիմքի բարձրության երկարությունը:
2. Գտնել բուրգի հարթագծի երկարությունը:
3. Գտնել բուրգի հարթագծի և հիմքի հարթության կազմած անկյան աստիճանային չափը:
4. Գտնել բուրգի ծավալը:

16.  $DABC$  եռանկյուն բուրգի հիմքը ուղղանկյուն եռանկյուն է ( $\angle ACB = 90^\circ$ ),  $DA$  կողը բուրգի բարձրությունն է,  $\angle BAC = \angle DBC$ ,  $BC = 3$ ,  $DC = 4$ :

1. Գտնել  $DCB$  անկյան կոսինուսը:
2. Գտնել  $BDCA$  երկնիստ անկյան աստիճանային չափը:
3. Գտնել  $BDAC$  երկնիստ անկյան սինուսի հնգապատիկը:
4. Գտնել բուրգին արտագծած գնդային մակերևույթի տրամագծի երկարությունը:

17. Քառանիստի յուրաքանչյուր կողի երկարությունը  $\sqrt[4]{3}$  է:

1. Քանի՞ գագաթ ունի քառանիստը:
2. Գտնել քառանիստի գագաթներից մեկին առընթեր հարթ անկյունների գումարի աստիճանային չափը:
3. Գտնել քառանիստի լրիվ մակերևույթի մակերեսը:
4. Գտնել քառանիստի հանդիպակաց կողերի կազմած անկյան աստիճանային չափը:

18.  $PABC$  քառանիստի  $PBC$  և  $ABC$  նիստերը փոխադրահայաց են, որոնցից յուրաքանչյուրը  $BC = 2$  ներքնաձիգով հավասարաբարուն ուղղանկյուն եռանկյուն է:

1. Գտնել քառանիստի փոքր կողի երկարության քառակուսին:
2. Գտնել քառանիստի ծավալի եռապատիկը:
3. Գտնել քառանիստին արտագծած գնդային մակերևույթի շառավղի երկարությունը:
4. Գտնել  $PC$  և  $AB$  ուղիղների կազմած անկյան աստիճանային չափը:

19.  $ABCD$  քառանիստի  $BD$  կողի միջնակետով տարված է  $AB$  և  $CD$  կողերին զուգահեռ հարթություն:  $AC = BC$ ,  $AD = BD$ ,  $AB = 10$ ,  $CD = 24$ :

1. Գտնել  $AB$  և  $CD$  ուղիղների կազմած անկյան աստիճանային չափը:
2. Գտնել ստացված հատույթի մեծ կողմի երկարությունը:
3. Գտնել  $AC$  և  $BD$  կողերի միջնակետերի հեռավորությունը:
4. Գտնել ստացված հատույթի մակերեսը:



20.  $SABCD$  կանոնավոր քառանկյուն բուրգի  $SC$  կողմնային կողի  $K$  միջնակետով տարված է բուրգի հիմքին ուղղահայաց և  $AB$  կողին զուգահեռ հարթություն: Բուրգի հիմքի կողմը 20 է, բարձրությունը՝ 16:

1. Գտնել  $K$  կետի հեռավորությունը հիմքի հարթությունից:
2. Գտնել բուրգի այն հատույթի մակերեսը, որն անցնում է  $K$  կետով և զուգահեռ է հիմքի հարթությանը:
3. Գտնել ստացված հատույթի մակերեսը:
4. Գտնել ստացված հատույթի անկյունագծի երկարությունը:

21.  $SABC$  կանոնավոր եռանկյուն բուրգի  $A$  գագաթը  $SC$  կողի  $D$  միջնակետին միացնող հատվածի երկարությունը 25 է, իսկ հիմքի կողմը 28:

1. Գտնել  $DB$  հատվածի երկարությունը:
2. Գտնել  $DAB$  անկյան կոսինուսի հարյուրապատիկը:
3. Գտնել  $D$  կետով անցնող և հիմքին զուգահեռ հարթությամբ ստացված հատույթի պարագիծը:
4. Գտնել  $25 \cdot d$  մեծության թվային արժեքը, որտեղ  $d$ -ն  $SB$  կողի միջնակետի հեռավորությունն է  $AD$  ուղղից:

22. Բուրգի հիմքն ուղղանկյուն է, որի մեծ կողմը 9 է: Երկու կողմնային միստերն ուղղահայաց են հիմքի հարթությանը, իսկ մյուս երկուսը նրա հետ կազմում են  $\arctg \frac{3}{4}$  և  $\arctg \frac{1}{3}$  անկյուններ:

1. Գտնել բուրգի բարձրության երկարությունը:
2. Գտնել բուրգի հիմքի փոքր կողմի երկարությունը:
3. Գտնել բուրգի ծավալը:
4. Գտնել բուրգին արտագծած գնդային մակերևույթի տրամագծի երկարության քառակուսին:

**23. Գլանի բարձրության երկարությունը 10 է, իսկ կողմնային մակերևույթի մակերեսը՝  $100\pi\sqrt{3}$  :**

1. Գտնել գլանի առանցքային հատույթի անկյունագծի և հիմքի հարթության կազմած անկյան աստիճանային չափը:
2. Քանի՞ անգամ կմեծանա գլանի ծավալը, եթե հիմքի շառավիղը մեծացվի 2 անգամ, իսկ բարձրությունը փոքրացվի 2 անգամ:
3. Գտնել գլանի առանցքին զուգահեռ և նրանից  $\frac{5\sqrt{3}}{2}$  հեռավորության վրա գտնվող հատույթի մակերեսը:
4. Գտնել գլանին թեք ներգծված քառակուսու մակերեսը, եթե նրա բոլոր գագաթները գտնվում են գլանի հիմքերի շրջանագծերի վրա:

**24.  $AB$  հատվածը, որի ծայրակետերը գտնվում են գլանի հիմքերի շրջանագծերի վրա, գլանի առանցքից ունի 4 միավոր հեռավորություն և երկու անգամ մեծ է գլանի շառավիղից: Գլանի լրիվ մակերևույթի մակերեսը  $256\pi$  է:**

1. Գտնել գլանի բարձրության երկարությունը:
2. Գտնել գլանի հիմքի շառավիղի երկարությունը:
3. Գտնել  $AB$  հատվածի և գլանի հիմքի հարթության կազմած անկյան աստիճանային չափը:
4. Գտնել գլանի առանցքային հատույթի մակերեսը:

**25. Գլանի հիմքի շառավիղը 5 է, իսկ բարձրությունը 8:**

1. Գտնել գլանի ծավալի  $\frac{1}{\pi}$  մասը:
2. Գտնել գլանի առանցքային հատույթին արտագծած շրջանագծի շառավիղի երկարության քառակուսին:
3. Գտնել գլանին ներգծված կանոնավոր վեցանկյուն պրիզմայի կողմնային մակերևույթի մակերեսը:
4. Գտնել գլանի առանցքից 4 հեռավորություն ունեցող գլանի առանցքին զուգահեռ հատույթի պարագիծը:

26. Կոնի բարձրությունը 3 է, իսկ հիմքի շառավիղը՝  $3\sqrt{3}$  :

1. Գտնել կոնի ծնորդի երկարությունը:
2. Գտնել կոնի ծնորդի և հիմքի հարթության կազմած անկյան աստիճանային չափը:
3. Կոնի հիմքի տրամագիծը քանի՞ անգամ է մեծ հիմքի կենտրոնի և ծնորդի հեռավորությունից:
4. Գտնել կոնի բարձրության միջնակետով և նրա ծնորդին զուգահեռ տարված ուղղի այն հատվածի երկարության կրկնապատիկը, որը գտնվում է կոնի ներսում:

27. Կոնի բարձրությունը հավասար է հիմքի շառավղին և հավասար է 5-ի:

1. Գտնել կոնի ծնորդի և հիմքի հարթության կազմած անկյան աստիճանային չափը:
2. Կոնին արտագծած գնդի շառավղի երկարությունը:
3. Գտնել  $\frac{3}{\pi}V$  մեծության թվային արժեքը, որտեղ  $V$ -ն կոնի ծավալն է:
4. Գտնել  $\frac{S}{\pi}$  մեծության թվային արժեքը, որտեղ  $S$ -ը կոնին արտագծած գնդային մակերևույթի մակերեսն է:

28. Կոնին ներգծած է գունդ: Կոնի ծնորդը  $\sqrt{3}$  անգամ մեծ է կոնի գագաթի և գնդի կենտրոնի հեռավորությունից:

1. Գտնել կոնի հիմքի մակերեսի և գնդի մեծ շրջանի մակերեսի հարաբերությունը:
2. Գտնել կոնի ծնորդի և հիմքի հարթության կազմած անկյան աստիճանային չափը:
3. Գտնել կոնի կողմնային մակերևույթի փռվածքի աղեղի աստիճանային չափը:
4. Քանի՞ անգամ է կոնի հիմքի շրջանագծի երկարությունը մեծ այն գծի երկարությունից, որով գնդային մակերևույթը շոշափում է կոնի կողմնային մակերևույթը:

**29. Կոնի լրիվ մակերևույթի մակերեսը երեք անգամ մեծ է հիմքի մակերեսից և հավասար է  $36\pi$  :**

1. Քանի՞ անգամ է կոնի ծնորդը մեծ կոնի շառավղից:
2. Գտնել կոնի առանցքային հատույթի գագաթի անկյան աստիճանային չափը:
3. Գտնել կոնի  $30^\circ$ -ի անկյուն կազմող երկու ծնորդներով տարված հատույթի մակերեսը:
4. Գտնել կոնի կողմնային մակերևույթի փռվածքի աղեղի աստիճանային չափը:

www.atc.am

## ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ա/Հ	Ենթաառաջադրանքի համարը			
	1	2	3	4
1	36	48	34	15
2	175	375	30	50
3	45	18	288	18
4	280	700	25	625
5	20	15	300	960
6	120	45	147	231
7	72	30	18	120
8	384	425	150	192
9	84	4	16	4
10	4	90	30	12
11	144	30	7	18
12	1	45	12	4
13	30	8	32	192
14	5	45	250	5
15	9	6	60	81
16	0	90	4	5
17	4	180	3	90
18	2	1	1	60
19	90	12	13	60
20	8	100	120	17
21	25	56	42	336
22	3	4	36	106
23	30	2	150	200
24	8	8	30	128
25	200	41	240	28
26	6	30	4	9
27	45	5	125	100
28	3	60	180	2
29	2	60	12	180

**ԲԱԺԻՆ 8. ՄԻԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**1. Տրված են  $A = \{a; b; c; 3; 4\}$  և  $B = \{c; b; d; 4; 5\}$  բազմությունները:**

1. Գտնել  $A \cap B$  բազմության ենթաբազմությունների քանակը:
2. Քանի՞ եղանակով կարելի է  $A \cup B$  բազմության տարրերից կազմել չորս նիշանոց ծածկագիր, որի առաջին և երկրորդ նիշերը լինեն տառեր, իսկ երրորդ և չորրորդ նիշերը՝ թվանշաններ:

**2. Տրված են  $A = \{x; y; z; 1; 2; 3; 4\}$  և  $B = \{x; y; 4; 5\}$  բազմությունները:**

1. Գտնել  $A \cup B$  բազմության տարրերի 2-ական զուգորդությունների թիվը:
2. Գտնել  $A \setminus B$  բազմության 3-ական կարգավորությունների քանակը:

**3. Տրված է  $A = \{1; 3; 5; 7; 9\}$  բազմությունը:**

1. Քանի՞ քառանիշ թիվ կարելի է գրել  $A$  բազմության թվանշաններով, որոնցից յուրաքանչյուրում լինի գոնե մեկ կրկնվող թվանշան:
2. 5-ի բազմապատիկ քանի՞ քառանիշ թիվ կարելի է կազմել  $A$  բազմության տարրերով:

**4. Տրված է  $A = \{0; 2; 4; 5; 7; 9\}$  բազմությունը:**

1. Գտնել բոլոր այն եռանիշ թվերի քանակը, որոնց առաջին և վերջին թվանշանները  $A$ -ից են:
2. Չկրկնվող թվանշաններով և 5-ի բազմապատիկ քանի՞ հնգանիշ թիվ կարելի է կազմել  $A$  բազմության թվանշաններով:

**5. Խանութում կա 5 տեսակի տաքատ և 6 տեսակի վերնաշապիկ, ընդ որում յուրաքանչյուր տեսակից մեկական:**

1. Քանի՞ եղանակով կարելի է ընտրել 2 վերնաշապիկ:
2. Քանի՞ եղանակով կարելի է ընտրել 1 տաքատ և 1 վերնաշապիկ:

**6. Այգեպանը 5 տեսակի խնձորի և 3 տեսակի տանձի տնկիներից պետք է ընտրի 3-ը:**

1. Քանի՞ եղանակով այգեպանը կարող է կատարել այդ ընտրությունը:
2. Քանի՞ եղանակով այգեպանը կարող է կատարել այդ ընտրությունն այնպես, որ ունենա տանձի գոնե մեկ տնկի:

**7. Դասարանում կա 5 գերազանցիկ:**

1. Քանի՞ եղանակով կարելի է ընտրել նրանցից երկուսին՝ մաթեմատիկայի մրցույթին մասնակցելու համար:
2. Քանի՞ եղանակով կարելի է ընտրել նրանցից երկուսին՝ մեկը մաթեմատիկայի, իսկ մյուսը՝ ֆիզիկայի մրցույթներին մասնակցելու համար:

**8. Տրված է  $X = \{3; 5; 7; 9\}$  բազմությունը:**

1. Գտնել 600-ից փոքր և  $X$  բազմության տարրերով գրվող եռանիշ թվերի քանակը (թվանշանները կարող են կրկնվել):
2. Գտնել 8000-ից փոքր և տարբեր թվանշաններից կազմված բոլոր այն քառանիշ թվերի քանակը, որոնք կարելի է գրել  $X$  բազմության տարրերով:

**9.  $B$ -ն միանիշ պարզ թվերի բազմությունն է:**

1. Չկրկնվող թվանշաններով քանի՞ երկնիշ թիվ կարելի է գրել  $B$  բազմության տարրերով:
2. Գտնել  $B$  բազմության տարրերով կազմված բոլոր գույգ քառանիշ թվերի քանակը:

**10. Տրված է  $X = \{a; p; q; r; t\}$  տառերի բազմությունը:**

1. Քանի՞ 4 տառանոց "բառ" կարելի է կազմել  $X$  բազմության տառերով (բառը կարող է իմաստ չունենալ):
2. Քանի՞ 5 տառանոց "բառ" կարելի է կազմել  $X$  բազմության տառերով՝ առանց կրկնելու "բառ" – ի տառերը, որոնց մեջ  $p$  տառը լինի  $a$ -ի հաջորդը (բառը կարող է իմաստ չունենալ):

**11. Մաթեմատիկայի խմբակին մասնակցում է 6 աշակերտ:**

1. Քանի՞ եղանակով կարելի է նրանցից ընտրել երկուսին՝ երկու տարբեր օլիմպիադաների մասնակցելու համար:
2. Քանի՞ եղանակով կարելի է նրանց բաժանել երկու աշխատանքային խմբի՝ յուրաքանչյուրում երեք աշակերտ:

**12. Շախմատի մրցաշարում, որում ամեն մասնակից մյուսներից յուրաքանչյուրի հետ պետք է անցկացնի մեկ խաղ, մասնակցում են 7 գրոսմայստեր և 4 վարպետ:**

1. Քանի՞ խաղ կկայանա, եթե մրցակիցներից մեկը գրոսմայստեր է, մյուսը՝ վարպետ:
2. Քանի՞ եղանակով է հնարավոր մասնակիցներից կազմել թիմ, որում լինեն 3 գրոսմայստեր և 2 վարպետ:

**13. Ընթերցասրահում դրված է հանրագիտարանի հինգ հատոր:**

1. Քանի՞ եղանակով է հնարավոր երեք ընթերցողներից յուրաքանչյուրին տրամադրել մեկական հատոր:
2. Քանի՞ եղանակով է հնարավոր այդ գրքերը դասավորել գրադարակում այնպես, որ 1-ին և 2-րդ հատորները լինեն կողք-կողքի:



**14. Սեղանին դրված է 6 տեսակի միրգ՝ յուրաքանչյուրից մեկ հատ:**

1. Քանի՞ եղանակով է հնարավոր եղած միրգը բաժանել 6 հոգու միջև՝ յուրաքանչյուրին տալով մեկ միրգ:
2. Քանի՞ եղանակով է հնարավոր եղած միրգը տեղավորել 2 տարբեր ասիսեներում (տեղավորման եղանակ է նաև այն դեպքը, երբ բոլոր մրգերը դրված են մեկ ասիսեում):

**15. Դասարանում սովորում են 10 տղա և 15 աղջիկ:**

1. Քանի՞ եղանակով է հնարավոր դասարանի աշակերտներից կազմել խումբ, որում լինեն երկու տղա և մեկ աղջիկ:
2. Քանի՞ եղանակով տղաները կարող են բաժանվել երկու ֆուտբոլային թիմի՝ յուրաքանչյուրում 5 խաղացող:

**16. Մանկապարտեզի խմբում կա 7 տղա և 4 աղջիկ:**

1. Քանի՞ եղանակով է հնարավոր նրանցից ընտրել պարային զույգ՝ մեկ տղա և մեկ աղջիկ:
2. Քանի՞ եղանակով կարելի է նրանցից ընտրել 6-ին, պայմանով, որ նրանցից առնվազն մեկը լինի աղջիկ:

**17. Գրախանութում կա մաթեմատիկայի՝ 5 և ֆիզիկայի՝ 3 գրքեր:**

1. Քանի՞ եղանակով աշակերտը կարող է այդ գրքերից գնել մաթեմատիկայի և ֆիզիկայի մեկական գիրք:
2. Քանի՞ եղանակով կարելի է այդ գրքերը դասավորել մի շարքում այնպես, որ սկզբում լինեն մաթեմատիկայի, այնուհետև՝ ֆիզիկայի գրքերը:

**18. Ջոկում կա 7 զինվոր:**

1. Քանի՞ եղանակով կարելի է նրանց բաժանել երկու խմբի այնպես, որ մի խմբում լինի 3, իսկ մյուսում՝ 4 զինվոր:
2. Քանի՞ եղանակով կարելի է նրանցից շարք կազմել, եթե շարքի սկզբում կանգնում է ջոկի ավագը:

**19. Օ չփռված անկյան մի կողմի վրա նշված է 3 կետ, իսկ մյուսի վրա՝ 4 կետ (Օ-ից տարբեր):**

1. Գտնել Օ գագաթով բոլոր այն եռանկյունների քանակը, որոնց մյուս գագաթները նշված կետերից են:
2. Գտնել բոլոր այն քառանկյունների քանակը, որոնց գագաթները նշված կետերից են:

**20. Ջրոսաշրջիկը նախատեսել է ճամփորդել Հոռն, Մադրիդ, Փարիզ, Լոնդոն և Աթենք քաղաքներով:**

1. Հերթականությունն ընտրելու քանի՞ հնարավորություն ունի զրոսաշրջիկը, եթե նա որոշել է ճամփորդությունն սկսել Հոռնից և ավարտել Մադրիդում:
2. Հերթականությունն ընտրելու քանի՞ հնարավորություն ունի զրոսաշրջիկը, եթե նա որոշել է ճամփորդության ընթացքում Փարիզ մեկնի Մադրիդից:

**21. Կատարել առաջադրանքները.**

1. Գտնել  $n$ -ը, եթե  $C_n^{n-1} + A_n^2 = 25$ :
2. Դասարանը բաղկացած է 12 աշակերտից՝ 8 աղջիկ և 4 տղա: Քանի՞ եղանակով է հնարավոր կազմել խումբ, որում լինեն 5 աղջիկ և 2 տղա:

**22. Կատարել առաջադրանքները.**

1. Չուգահեռ ուղիղներից մեկի վրա նշված է 5, իսկ մյուսի վրա՝ 4 կետ: Քանի՞ եռանկյուն գոյություն ունի, որոնցից յուրաքանչյուրի երեք գագաթներն էլ նշված կետերից են:
2. 0, 1, 2, 3, 4, 5 թվանշաններից կազմվում են բոլոր հնարավոր հնգանիշ թվերը (առանց թվանշանների կրկնության): Դրանցից քանի՞սն են 5-ի բազմապատիկ:

**23. Կատարել առաջադրանքները.**

1. Քանի՞ քառանիշ կենտ թիվ կարելի է կազմել 0, 1, 3, 4, 5 թվանշաններով (առանց թվանշանների կրկնության):
2. Գտնել բազմության տարրերի քանակը, եթե նրա բոլոր ենթաբազմությունների թիվը մեծ է 60-ից և փոքր՝ 90-ից:

**24. Կատարել առաջադրանքները.**

1. Գտնել  $P_5 - 2C_6^4$  արտահայտության արժեքը:
2. Քանի՞ վեցանիշ գույգ թիվ կարելի է կազմել 0, 1, 3, 5, 7, 8 թվանշաններով (առանց թվանշանների կրկնության):

**25. Կատարել առաջադրանքները.**

1. Գտնել  $n$ -ը, եթե  $P_n = 30P_{n-2}$ :
2. Գտնել 5-ի բաժանվող բոլոր այն քառանիշ թվերի քանակը, որոնցից յուրաքանչյուրի գրառումը չի պարունակում 2, 3, 4 թվանշաններից և ո՛չ մեկը:

**26. Կատարել առաջադրանքները.**

1. 5-րդ դասարանում դասավանդվում է ընդամենը յոթ ուսումնական առարկա: Քանի՞ եղանակով կարելի է կազմել օրվա չորս դասաժամանոց դասացուցակ, եթե այդ օրը պետք է դասավանդվի չորս տարբեր առարկա:
2. Գտնել  $n$ -ը, եթե  $5C_n^3 = C_n^4$ :

**27. Կատարել առաջադրանքները.**

1. Քանի՞ եղանակով կարելի է շախմատի դաշտի հորիզոնական շերտի 8 վանդակներում դասավորել արքա և թագուհի խաղաքարերը:
2. Քանի՞ եղանակով կարելի է շախմատի դաշտի հորիզոնական շերտի 8 վանդակներում կողք-կողքի դասավորել արքա և թագուհի խաղաքարերը:

**28. Կատարել առաջադրանքները.**

1. Քանի՞ եղանակով է հնարավոր 4 տղայի և 2 աղջկա շարք կանգնեցնել այնպես, որ աղջիկներից մեկը կանգնած լինի շարքի սկզբում, իսկ մյուսը՝ վերջում:
2. 5 տղաներից և 5 աղջիկներից քանի՞ եղանակով կարելի է ընտրել 5 հոգու այնպես, որ նրանցից գոնե 2-ը աղջիկ լինեն:

**29. Կատարել առաջադրանքները.**

1. Գտնել  $\frac{(3!)!}{P_3}$  արտահայտության արժեքը:
2. Չկրկնվող թվանշաններով քանի՞ եռանիշ կենտ թիվ կարելի է կազմել 1, 2, 3, 4, 5 թվանշաններով:

**30. Կատարել առաջադրանքները.**

1. Գտնել այն բոլոր «բառերի» քանակը, որոնք բաղկացած են 4 հատ Ա և 2 հատ Բ տառերից:
2. Քանի՞ եղանակով կարելի է ջոկի 8 զինվորներին բաժանել երեք խմբի այնպես, որ մի խմբում լինի 2, իսկ մյուս խմբերում՝ 3-ական զինվոր:

**31. Կատարել առաջադրանքները.**

1. 22211 թվի թվանշանների տեղափոխությամբ, նրանից տարբեր քանի՞ թիվ կարելի է ստանալ:
2. Հարթության վրա գույգ առ գույգ հաստվող 12 ուղղիղներից ոչ մի երեքը չեն անցնում միևնույն կետով: Ընդամենը քանի՞ այդպիսի հաստման կետ կա:

**32. Կատարել առաջադրանքները.**

1. Չկրկնվող թվանշաններով քանի՞ բնական գույգ թիվ կարելի է կազմել 1, 2, 3, 4 թվանշաններով:
2. Գտնել ուռուցիկ տասնանկյան անկյունագծերի թիվը:

**33. Ունենք տարբեր գույնի 8 գնդակ:**

1. Քանի՞ եղանակով է հնարավոր այդ գնդակները բաժանել երկու հավասար մասի:
2. Գտնել այդ գնդակներից 2-ը ընտրելու և այդ նույն գնդակներից 6-ը ընտրելու քանակների տարբերությունը:

**34. Դիցուք, A -ն 1-ից մինչև 20 բնական թվերի բազմությունն է:**

1. Քանի՞ եղանակով կարելի է այդ բազմությունից ընտրել երեք թիվ այնպես, որ դրանց գումարը լինի գույգ թիվ:
2. Քանի՞ եղանակով կարելի է այդ բազմությունից ընտրել երկու թիվ այնպես, որ դրանց արտադրյալը լինի 3-ի բազմապատիկ:

**35. 6 տարբեր ուսումնական առարկաներից՝ այդ թվում մաթեմատիկան և ֆիզիկան, պետք է կազմել օրվա 6 ժամանոց դասացուցակ:**

1. Քանի՞ եղանակով կարելի է այն կազմել այնպես, որ մաթեմատիկա և ֆիզիկա առարկաները լինեն կողք-կողքի:
1. Քանի՞ եղանակով կարելի է այն կազմել այնպես, որ մաթեմատիկա և ֆիզիկա առարկաները չլինեն կողք-կողքի:

**36. Ծաղկաթմբում կա 9 սպիտակ և 6 կարմիր ծաղիկ:**

1. Քանի՞ եղանակով է հնարավոր պոկել նույն գույնի 3 ծաղիկ:
2. Քանի՞ եղանակով է հնարավոր այդ թմբի 2 սպիտակ և 3 կարմիր ծաղիկներից կազմել ծաղկեփունջ:

**37. Հայաստանի ֆուտբոլի առաջնությանը մասնակցում է 8 թիմ:**

1. Քանի՞ խաղ կկայանա ամբողջ առաջնության ընթացքում, եթե ամեն թիմ մյուսներից յուրաքանչյուրի հետ անց է կացնում երկու խաղ:
2. Քանի՞ ձևով կարող են որոշվել չեմպիոնը (I տեղ) և աղյուսակի հետնապահը (վերջին տեղ):

**38. Կատարել առաջադրանքները.**

1. Գտնել  $P_9 : (P_8 + P_7)$  արտահայտության արժեքը:
2. Գտնել 1000-ից փոքր բոլոր այն բնական թվերի քանակը, որոնցից յուրաքանչյուրը գրառվում է 0 և 1 թվանշաններով:

**39. Կատարել առաջադրանքները.**

1. Գտնել  $n$ -ը, եթե  $P_n = 720$ :
2. Քանի՞ տասնանիշ թիվ կարելի է կազմել չորս հատ 1 և վեց հատ 2 թվանշաններով:

**40. Կատարել առաջադրանքները.**

1. 1-ից ավելի տարր պարունակող որևէ բազմության 2-ական կարգավորությունների քանակը քանի՞ անգամ է մեծ նրա 2-ական գուգորդությունների քանակից:
2. Գտնել գոնե մեկ կրկնվող թվանշան պարունակող եռանիշ թվերի քանակը:

**41. Կատարել առաջադրանքները.**

1. Գտնել գոնե մեկ կրկնվող թվանշան պարունակող բոլոր այն քառանիշ թվերի քանակը, որոնք գրվում են 1, 2, 3, 4 թվանշաններով:
2. Գտնել բոլոր այն եռանիշ թվերի քանակը, որոնցից յուրաքանչյուրի թվանշաններից գոնե մեկը գույգ է (0-ն գույգ թիվ է):

**42. Կատարել առաջադրանքները.**

1. Չկրկնվող թվանշաններով և 5-ի բազմապատիկ քանի՞ հնգանիշ թիվ կարելի է կազմել 1, 3, 5, 7, 9 թվանշաններով:
2. 4-ի բաժանվող քանի՞ եռանիշ թիվ կարելի է կազմել 2, 3, 4, 8 թվանշաններով:

**43. Կատարել առաջադրանքները.**

1. Քանի՞ քառանիշ թիվ կարելի է կազմել 0, 2, 4, 6, 8 թվանշաններով:
2. Չկրկնվող թվանշաններով քանի՞ եռանիշ թիվ կարելի է կազմել՝ չօգտագործելով 6-ից մեծ թվանշանները:

**44. Կատարել առաջադրանքները.**

1. Գտնել այն բազմության բոլոր ենթաբազմությունների քանակ, որն ունի 9 տարր:
2. Դպրոցն ունի 2 փոխտնօրեն և մաթեմատիկայի 7 ուսուցիչ: Քանի՞ եղանակով է հնարավոր կազմել մաթեմատիկայի քննական հանձնաժողով, որում լինեն մեկ փոխտնօրեն և մաթեմատիկայի երեք ուսուցիչ:

**45. Կատարել առաջադրանքները.**

1. Քանի՞ բաժանարար ունի  $15 \cdot 7$  թիվը:
2. 5-ի բազմապատիկ քանի՞ եռանիշ թիվ կարելի է կազմել 0, 1, 3, 5, 7 թվանշաններով:

**46. Կատարել առաջադրանքները.**

1. Քանի՞ եղանակով է հնարավոր ուսումնական 7 առարկաներից (այդ թվում հանրահաշիվ և երկրաչափություն) կազմել օրվա 7 ժամանոց դասացուցակ այնպես, որ երկրաչափություն առարկան հաջորդի հանրահաշվին:
2. 1, 2, 3, 4, 5, 6 թվանշաններով կազմված քանի՞ վեցանիշ թիվ կա, որոնց գրության մեջ թվանշանները չեն կրկնվում, և 4, 5 թվանշանները կողք-կողքի չեն գտնվում:

**47. Կատարել առաջադրանքները.**

1. Գտնել  $C_n^2$ -ը, եթե  $A_n^2 = 90$ :
2. Չկրկնվող թվանշաններով քանի՞ բնական թիվ կարելի է կազմել 1, 3 5, 7 թվանշաններով:

**48. Կատարել առաջադրանքները.**

1. Քանի՞ երկնիշ թիվ կարելի է կազմել 4-ից փոքր թվանշաններով:
2. 1, 2, 3, 4, 5 թվանշաններով կազմված քանի՞ հնգանիշ թիվ կա, որոնց գրության մեջ թվանշանները չեն կրկնվում, և 1, 2 թվանշանները կողք-կողքի չեն գտնվում:

**49. Կատարել առաջադրանքները.**

1. Քանի՞ տարր է պարունակում բազմությունը, եթե նրա բոլոր ենթաբազմությունների քանակը 512 է:
2. 7 երեխաներից պատահականորեն ընտրվում են 4-ը և շարք կանգնեցվում: Քանի՞ տարբեր շարքեր կարելի է կազմել:

**50. Կատարել առաջադրանքները.**

1. Իրարից տարբեր և հորիզոնական շերտերից կազմված քանի՞ եռագույն դրոշ կարելի է կարել 7 տարբեր գույնի կտորներից:
2. Ավանի ներքին հեռախոսահամարները եռանիշ թվեր են, որոնց առաջին թվանշանը չի կարող լինել փոքր 3-ից: Ամենաշատը քանի՞ հեռախոսահամար կարող է ունենալ ավանը:



ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ա/Հ	1	2
1	8	144
2	28	24
3	505	125
4	300	216
5	15	30
6	56	46
7	10	20
8	32	18
9	12	64
10	625	24
11	30	10
12	28	210
13	60	48
14	720	64
15	675	126
16	28	455
17	15	720
18	35	720
19	12	18
20	6	24
21	5	336
22	70	216
23	54	6
24	90	216
25	6	588
26	840	23
27	56	14
28	48	226
29	120	36
30	15	280

Ա/Հ	1	2
31	9	66
32	32	35
33	35	0
34	570	99
35	240	480
36	104	720
37	56	56
38	8	7
39	6	210
40	2	252
41	232	775
42	24	28
43	500	180
44	512	70
45	8	40
46	720	480
47	45	64
48	12	72
49	9	840
50	210	700

ԳԼՈՒԽ 3

ՊՆԴՈՒՄՆԵՐԻ ՓՈՒՆՁ

Երրորդ գլխի առաջադրանքներն ունեն հետևյալ բովանդակությունը. տրված է որևէ մաթեմատիկական օբյեկտ (օրինակ՝ ֆունկցիա, հավասարում, երկրաչափական պատկեր և այլն), որի վերաբերյալ բերված է 6 պնդում: Յուրաքանչյուրի համար պետք է պարզել՝ այն ճիշտ է, թե՞ սխալ: Հարցին ճիշտ պատասխանելու դեպքում դիմորդը ստանում է մեկ միավոր, իսկ սխալ պատասխանելու դեպքում հանվում է մեկ միավոր: «Չգիտեմ» պատասխանելու դեպքում այդ պնդման համար միավոր չի տրվում: Եթե առաջադրանքի 6 պնդումներից ստացված միավորների գումարը դրական է, այն համարվում է այդ առաջադրանքի գնահատականը: Հակառակ դեպքում, այսինքն՝ երբ միավորների գումարը 0 է կամ բացասական, առաջադրանքի գնահատականը 0 է: Այսպիսով՝ գնահատվում է ոչ թե ամեն մի պնդում առանձին, այլ՝ առաջադրանքն ամբողջությամբ:

Այս տիպի առաջադրանքի պատասխանը գտնելիս «X» նշանը անհրաժեշտ է դնել պնդման ուղղահայաց սյունակի պատասխանների հնարավոր երեք՝ «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պնդումների վանդակներից մեկում: Օրինակ՝ եթե դիմորդը 4-րդ պնդման համար որպես պատասխան ընտրել է «Սխալ է» պատասխանը, ապա այն լրացվում է հետևյալ ձևով՝

<b>45</b>	1	2	3	4	5	6
ճիշտ է	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
սխալ է	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
չգիտեմ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

Պնդման պատասխանը համարվում է ճիշտ, եթե պնդումը ճշմարիտ է և դիմորդը նշել է «Ճիշտ է» պատասխանը, կամ եթե պնդումը ճշմարիտ չէ և դիմորդը նշել է «Սխալ է» պատասխանը:

**ԲԱԺԻՆ 1. ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ****1. Տրված է  $a$  պարամետրով  $f(x) = 5x^2 - 2ax - 9a$  քառակուսային եռանդամը:**

- $a$ -ի ցանկացած բնական արժեքի դեպքում  $f(x) = 0$  հավասարումն ունի արմատ:
- $a = -45$  դեպքում եռանդամը լրիվ քառակուսի է:
- $a \in [-5; 0]$  դեպքում եռանդամն արմատ չունի:
- $a = 5$  դեպքում եռանդամի փոքրագույն արժեքը 1-ն է:
- $a \in (0; +\infty)$  դեպքում եռանդամն ունի տարբեր նշանի արմատներ:
- $a \in (0; +\infty)$  դեպքում եռանդամի արմատները բավարարում են  $x_1 + x_2 > x_1 x_2$  պայմանին:

**2. Տրված է  $a$  պարամետրով  $P(x) = ax^2 - 2x + a$  բազմանդամը:**

- $a = 1$  դեպքում  $P(x)$  բազմանդամը չի կարող ընդունել բացասական արժեք:
- $a \in (-1; 1)$  միջակայքի ցանկացած արժեքի դեպքում  $P(x)$  բազմանդամն ունի երկու արմատ:
- Եթե  $a = 0,5$ , ապա  $P(x)$  բազմանդամի փոքրագույն արժեքը  $-1,5$ -ն է:
- Եթե  $a > 1$ , ապա բազմանդամը ընդունում է միայն դրական արժեքներ:
- Եթե  $a \in (-\infty; -1)$ , ապա  $P(x)$  բազմանդամը ընդունում է միայն բացասական արժեքներ:
- $P(x)$  բազմանդամը չի կարող ունենալ նույն նշանի երկու արմատ:

**3. Տրված է  $a$  պարամետրով  $x^4 + 2x^2 + a = 0$  հավասարումը:**

- $a = 0$  դեպքում հավասարումն արմատ չունի:
- $a > 0$  դեպքում հավասարումն արմատ չունի:
- $a < 0$  դեպքում հավասարումն ունի երկու արմատ:
- Հավասարումը չի կարող ունենալ երեք արմատ:
- Եթե հավասարումն ունի արմատներ, ապա նրանց գումարը հավասար է  $-2$ -ի:
- Հավասարումը կարող է ունենալ չորս արմատ:

**4. Տրված է  $a$  պարամետրով  $|x - 2| = ax$  հավասարումը:**

1. Եթե հավասարումն ունի բացասական արմատ, ապա  $a < -1$ :
2.  $0 < a < 1$  դեպքում հավասարումն ունի երկու արմատ:
3. Գոյություն ունի  $a$ -ի այնպիսի արժեք, որի դեպքում հավասարումն ունի անթիվ բազմությամբ արմատ:
4.  $a$ -ի ցանկացած արժեքի դեպքում հավասարումն ունի արմատ:
5. Եթե հավասարումն ունի միակ արմատ, ապա այն փոքր է 2-ից:
6. Եթե հավասարումն ունի երկու արմատ, ապա երկուսն էլ մեծ են 1-ից:

**5. Տրված է  $a$  պարամետրով  $|x| + |x - a| = 5$  հավասարումը:**

1.  $a = -2$  դեպքում հավասարումն արմատ ունի:
2.  $|a| > 5$  դեպքում հավասարումն արմատ չունի:
3.  $a = 5$  դեպքում հավասարման ամենամեծ ամբողջ արմատը 5-ն է:
4.  $-5 < a < 0$  դեպքում հավասարումն արմատ չունի:
5.  $0 \leq a < 5$  դեպքում հավասարումն ունի երկու արմատ:
6. Եթե հավասարումն ունի երկու արմատ, ապա դրանց գումարը  $\frac{1}{2}a$  է:

**6. Տրված է  $a$  պարամետրով  $||x - 2| - a^2| = x$  հավասարումը:**

1.  $a = 1$  դեպքում հավասարումն ունի միակ արմատ:
2.  $a = \sqrt{2}$  դեպքում հավասարումն ունի ճիշտ երկու արմատ:
3. Եթե  $a > \sqrt{2}$ , ապա հավասարումն ունի 2-ից փոքր արմատ:
4.  $a$ -ի ցանկացած արժեքի դեպքում հավասարումն ունի արմատ:
5. Ցանկացած  $a \neq \sqrt{2}$  դեպքում հավասարումն ունի միակ արմատ:
6. Եթե հավասարումն ունի միակ արմատ, ապա այն փոքր է 2-ից:

**7. Տրված է  $a$  պարամետրով  $\sqrt{ax+1} = x$  հավասարումը:**

1. Երբ  $a = 0$ , հավասարումն արմատ չունի:
2. Երբ  $a = 1$ , հավասարումն ունի ճիշտ երկու արմատ:
3. Հավասարումը համարժեք է  $ax+1 = x^2$  հավասարմանը:
4. Ցանկացած  $a$ -ի դեպքում հավասարումն ունի ճիշտ մեկ արմատ:
5. Ցանկացած  $a$ -ի դեպքում հավասարման արմատն է՝  $x = \frac{a - \sqrt{a^2 + 4}}{2}$ :
6.  $a$ -ի 0-ից տարբեր յուրաքանչյուր արժեքի դեպքում հավասարման ԹՄԲ-ը  $\left[-\frac{1}{a}; +\infty\right)$  միջակայքն է:

**8. Տրված է  $a$  պարամետրով  $\begin{cases} |x| + |y| = 1 \\ x^2 + y^2 = a^2 \end{cases}$  համակարգը:**

1.  $a = 0$  դեպքում համակարգն ունի միակ լուծում:
2. Եթե  $(x_0; y_0)$  թվազույգը համակարգի լուծում է, ապա  $(y_0; -x_0)$ -ն նույնպես այդ համակարգի լուծում է:
3. Համակարգն ունի ճիշտ չորս լուծում միայն  $|a| = 1$  դեպքում:
4.  $|a| > 1$  դեպքում համակարգը լուծում չունի:
5. Համակարգն ունի լուծում այն և միայն այն դեպքում, երբ  $\frac{\sqrt{2}}{2} \leq |a| \leq 1$ :
6. Համակարգը չի կարող ունենալ չորսից ավելի լուծում:

**9. Տրված է  $\sin^2 x = \sin^2 3x$  հավասարումը:**

1. Հավասարումը համարժեք է  $\sin x = \sin 3x$  հավասարմանը:
2. Հավասարման արմատները համաչափ են  $x = 0$  կետի նկատմամբ:
3. Հավասարումը համարժեք է  $\begin{cases} \sin x = \sin 3x \\ \sin x = -\sin 3x \end{cases}$  համախմբին:
4.  $\frac{5\pi}{4}$ -ը հավասարման արմատ չէ:
5. Հավասարումը համարժեք է  $\sin 4x = 0$  հավասարմանը:
6. Հավասարումը  $[0; 10]$  միջակայքում ունի ճիշտ 12 արմատ:

**10. Տրված է  $|\cos x| = |\cos 3x|$  հավասարումը:**

1.  $\frac{17\pi}{4}$ -ը հավասարման արմատ է:
2. Հավասարումը համարժեք է  $\cos x = \cos 3x$  հավասարմանը:
3. Հավասարումը համարժեք է  $\begin{cases} \cos x = \cos 3x \\ \cos x = -\cos 3x \end{cases}$  համակարգին:
4. Հավասարումը համարժեք է  $\sin 4x = 0$  հավասարմանը:
5. Հավասարումը  $[0; 13]$  միջակայքում ունի ճիշտ 17 արմատ:
6. Հավասարման յուրաքանչյուր արմատի համաչափը կոորդինատների սկզբնակետի նկատմամբ այդ հավասարման արմատ է:

**11. Տրված է  $a$  պարամետրով  $|\sin x| + |\cos x| = a$  հավասարումը:**

1. Երբ  $a = 0$  հավասարումն արմատ չունի:
2.  $a = 1,5$  դեպքում հավասարումն արմատ ունի:
3.  $a = 1$  դեպքում հավասարումը համարժեք է  $\begin{cases} \sin x = 0 \\ \cos x = 0 \end{cases}$  համախմբին:
4.  $1 \leq a < \sqrt{2}$  դեպքում հավասարումն արմատ ունի:
5.  $x \in \left[\frac{\pi}{2}; \pi\right)$  դեպքում հավասարումը համարժեք է  $\sin x + \cos x = a$  հավասարմանը:
6. Հավասարման յուրաքանչյուր արմատի համաչափը կոորդինատների սկզբնակետի նկատմամբ այդ հավասարման արմատ է:

**12. Տրված է  $a$  պարամետրով  $\sin x + \sqrt{3} \cos x = a$  հավասարումը:**

- $a = 0$  դեպքում հավասարումը համարժեք է  $\operatorname{tg} x = -\sqrt{3}$  հավասարմանը:
- Հավասարումը համարժեք է  $2 \cos\left(x - \frac{\pi}{6}\right) = a$  հավասարմանը:
- $a > 0$  դեպքում  $\left[\pi; \frac{3}{2}\pi\right]$  միջակայքում հավասարումն արմատ ունի:
- $a = 2$  դեպքում  $\frac{\pi}{6}$  -ը հավասարման արմատ է:
- Ցանկացած  $a \geq -2$  դեպքում հավասարումն արմատ ունի:
- Գոյություն ունեն  $a$ -ի երեք բնական արժեք, որոնցից յուրաքանչյուրի դեպքում հավասարումն ունի արմատ:

**13. Տրված է  $a$  պարամետրով  $|\sin x| - |\cos x| = a$  հավասարումը:**

- Երբ  $a = 1$  հավասարումն արմատ չունի:
- $a = \sqrt{2}$  դեպքում հավասարումն արմատ ունի:
- $a = -1$  դեպքում հավասարումը համարժեք է 
$$\begin{cases} \sin \frac{x}{2} = 0 \\ \cos \frac{x}{2} = 0 \end{cases}$$
 համախմբին:
- $-1 < a < 1$  դեպքում հավասարումն արմատ ունի:
- $x \in \left[\pi; \frac{3}{2}\pi\right)$  դեպքում հավասարումը համարժեք է  $-\sin x - \cos x = a$  հավասարմանը:
- Հավասարման յուրաքանչյուր արմատի համաչափը կոորդինատների սկզբնակետի նկատմամբ այդ հավասարման արմատ է:

**14. Տրված է  $a$  պարամետրով  $4^x - a \cdot 2^x + 3 - a = 0$  հավասարումը:**

1. Երբ  $a = 2$ , հավասարումն ունի միակ արմատ:
2. Երբ  $a \in (-\infty; -6)$  հավասարումն արմատ չունի:
3. Երբ  $a > 3$  հավասարումն ունի ճիշտ մեկ արմատ:
4. Հավասարումն ունի միակ արմատ այն և միայն այն դեպքում, երբ  $a \in \{2\} \cup (3; +\infty)$ :
5. Հավասարումն ունի երկու արմատ այն և միայն այն դեպքում, երբ  $t^2 - at + 3 - a = 0$  քառակուսային հավասարումն ունի երկու դրական արմատ:
6.  $a = \frac{5}{2}$  դեպքում հավասարման արմատների գումարը հավասար է  $-1$ :

**15. Տրված է  $a$  պարամետրով  $6^{1-x^2} = a^2 + a$  հավասարումը:**

1.  $a = -3$  դեպքում հավասարումն ունի միակ արմատ:
2. Եթե  $a \in (-1; 0)$ , ապա հավասարումն արմատ չունի:
3. Ցանկացած  $a > 0$  դեպքում հավասարումն արմատ ունի:
4.  $a < -3$  դեպքում հավասարումն արմատ չունի:
5. Ցանկացած  $a \in (0; 2]$  դեպքում հավասարումն ունի ճիշտ երկու արմատ:
6.  $a \in (-3; -1)$  դեպքում հավասարումն ունի ճիշտ մեկ արմատ:

**16. Տրված է  $a$  պարամետրով  $\log_2(4^{|x|} + a) = |x|$  հավասարումը:**

1. Հավասարումը համարժեք է  $4^{|x|} - 2^{|x|} + a = 0$  հավասարմանը:
2. Եթե  $x_0$ -ն հավասարման արմատ է, ապա  $-x_0$ -ն ևս արմատ է:
3. Գոյություն չունի  $a$ -ի այնպիսի արժեք, որի դեպքում հավասարումն ունենա միակ արմատ:
4. Երբ  $a > 0$ , ապա հավասարումն արմատ չունի:
5. Գոյություն ունի  $a$ -ի արժեք, որի դեպքում հավասարումն ունի ճիշտ չորս արմատ:
6. Հավասարումն ունի ճիշտ երկու արմատ այն և միայն այն դեպքում, երբ  $a < 0$ :



17. Տրված է  $a$  պարամետրով  $\log_3(31 - |x^2 - 6x + 5|) = a$  հավասարումը:

1.  $a$ -ի կամայական արժեքի դեպքում հավասարումը համարժեք է  $|x^2 - 6x + 5| = 31 - 3^a$  հավասարմանը:
2. Հավասարումն արմատ ունի այն և միայն այն դեպքում, երբ  $a \leq \log_3 31$ :
3. Գոյություն ունի  $a$ -ի այնպիսի արժեք, որի դեպքում հավասարումն ունի ճիշտ մեկ արմատ:
4. Գոյություն չունի  $a$ -ի այնպիսի արժեք, որի դեպքում հավասարումն ունենա ճիշտ երկու արմատ:
5. Գոյություն ունի  $a$ -ի արժեք, որի դեպքում հավասարումն ունի ճիշտ չորս արմատ:
6. Գոյություն չունի  $a$ -ի այնպիսի արժեք, որի դեպքում հավասարումն ունենա ճիշտ երեք արմատ:

18. Տրված է  $2^{|x^3 - 7x|} = \cos(\pi\sqrt{x^2 + 9})$  հավասարումը:

1. Հավասարման ձախ մասի արտահայտությունը կարող է ընդունել ցանկացած դրական արժեք:
2. Հավասարման աջ մասի արտահայտությունը չի կարող ընդունել բացասական արժեք:
3. Եթե  $x_0$ -ն հավասարման արմատ է, ապա  $-x_0$ -ն ևս արմատ է:
4. Հավասարումը չունի ռացիոնալ արմատ:
5. Հավասարումը համարժեք է  $\cos(\pi\sqrt{x^2 + 9}) = 1$  հավասարմանը:
6. Հավասարումն ունի ճիշտ երկու արմատ:

**19. Տրված է  $a$  պարամետրով  $\sqrt{x^2 + 1} \geq a$  անհավասարումը:**

1. Անհավասարման ԹԱԲ -ը  $[-1; +\infty)$  միջակայքն է:
2.  $a = 1$  դեպքում անհավասարման լուծումների բազմությունը ամբողջ թվային առանցքն է:
3.  $a = 3$  դեպքում անհավասարման լուծումների բազմությունը  $[2\sqrt{2}; +\infty)$  միջակայքն է:
4.  $a < 0$  դեպքում անհավասարումը լուծում չունի:
5.  $a$ -ի ցանկացած արժեքի դեպքում անհավասարման լուծումների բազմությունը համաչափ է կոորդինատների սկզբնակետի նկատմամբ:
6.  $a = 5\sqrt{2}$  դեպքում անհավասարումը  $[-10; 10]$  միջակայքում ունի ճիշտ վեց ամբողջ լուծում:

**20. Տրված է  $a$  պարամետրով  $(x-a)^2(x+a-2) \leq 0$  անհավասարումը:**

1.  $a = 1$  դեպքում անհավասարումը լուծում չունի:
2.  $a$  պարամետրի ցանկացած արժեքի դեպքում անհավասարման լուծումների բազմությունը  $(-\infty; 2-a]$  միջակայքն է:
3. Ցանկացած  $a > 2$  դեպքում անհավասարումը դրական լուծում չունի:
4.  $a < 1$  դեպքում 0-ն անհավասարման լուծում է:
5.  $-5 < a < -4$  դեպքում անհավասարման լուծումների բազմությունը պարունակում է ճիշտ երեք պարզ թիվ:
6.  $[0; 1)$  միջակայքի ցանկացած  $a$ -ի դեպքում տրված անհավասարմանը բավարարում է ճիշտ մեկ բնական թիվ:

21. Տրված է  $a$  պարամետրով  $\frac{a}{2a-x} > 1$  անհավասարումը:

1.  $a = 0$  դեպքում անհավասարումը լուծում չունի:
2.  $a = -5$  դեպքում անհավասարման ամենամեծ ամբողջ լուծումը  $-5$ -ն է:
3.  $a \neq 0$  դեպքում անհավասարման լուծումների բազմությունը  $(a; +\infty)$  միջակայքն է:
4.  $a \neq 0$  դեպքում  $\frac{3}{2}a$  թիվը անհավասարման լուծում է:
5. Եթե  $a < 0$ , ապա անհավասարման լուծումների բազմությունն է՝  $(-\infty; 2a) \cup (a; +\infty)$ :
6. Եթե  $a > 0$ , ապա  $\left(\frac{3a}{2}; 2a\right)$  միջակայքի յուրաքանչյուր թիվ անհավասարման լուծում է:

22. Տրված է  $a$  պարամետրով  $|x+1| \leq ax$  անհավասարումը:

1. Գոյություն չունի  $a$ -ի այնպիսի արժեք, որի դեպքում անհավասարումն ունենա միակ լուծում:
2.  $a < 0$  դեպքում անհավասարումը դրական լուծում չունի:
3. Ցանկացած  $a > 1$  դեպքում անհավասարումը լուծում ունի:
4.  $0 < a \leq 1$  դեպքում անհավասարումը լուծում չունի:
5. Գոյություն ունի  $a$ -ի այնպիսի արժեք, որի դեպքում  $(-\infty; -0,5]$  միջակայքն անհավասարման լուծումների բազմությունն է:
6.  $-\frac{4}{5} < a < -\frac{3}{4}$  դեպքում անհավասարումն ունի ճիշտ հինգ ամբողջ լուծում:

23. Տրված է  $a$  պարամետրով  $\sqrt{x^2 + 4} \leq a$  անհավասարումը:

1. Անհավասարման ԹԱԲ -ը  $[0; +\infty)$  միջակայքն է:
2.  $a = 2$  դեպքում անհավասարումն ունի միակ լուծում:
3.  $a = 5\sqrt{5}$  դեպքում անհավասարման լուծումը  $(-\infty; 11]$  միջակայքն է:
4.  $a < 2$  դեպքում անհավասարումը լուծում չունի:
5.  $a > 2$  դեպքում անհավասարման լուծումների բազմությունը համաչափ է կոորդինատների սկզբնակետի նկատմամբ:
6.  $a = 2\sqrt{26}$  դեպքում անհավասարման լուծումների բազմությունը պարունակում է ընդամենը 20 ամբողջ թիվ:

24. Տրված է  $a$  պարամետրով  $\sqrt{10x - x^2} \geq a$  անհավասարումը:

1. Անհավասարումը չի կարող ունենալ բացասական լուծում:
2.  $a$ -ի ոչ դրական յուրաքանչյուր արժեքի դեպքում անհավասարման լուծումը համընկնում է անհավասարման ԹԱԲ -ին:
3.  $a = 4$  դեպքում անհավասարման լուծումը 8 երկարությամբ միջակայք է:
4. Գոյություն չունի  $a$ -ի այնպիսի արժեք, որի դեպքում անհավասարումն ունենա միակ լուծում:
5. Ցանկացած  $a$ -ի դեպքում անհավասարումը համարժեք է  $10x - x^2 \geq a^2$  անհավասարմանը:
6. Եթե անհավասարումը լուծում ունենա, ապա լուծումների բազմությունը համաչափ կլինի 5 կետի նկատմամբ:

25. Տրված է  $a$  պարամետրով  $(x-a)^2(\sqrt{x}+a-2)\leq 0$

անհավասարումը:

1.  $a = 2$  դեպքում անհավասարումն ունի միակ լուծում:
2.  $a > 2$  դեպքում անհավասարումն ունի միակ լուծում:
3.  $a$  պարամետրի ցանկացած արժեքի դեպքում անհավասարումն ունի ամբողջ լուծում:
4. Եթե  $a \in (1; 2)$ , ապա անհավասարման լուծումների բազմությունը  $[0; (2-a)^2]$  հատվածն է:
5. Եթե  $a \in (2 - \sqrt{5}; 0)$ , ապա անհավասարումն ունի ճիշտ հինգ ամբողջ լուծում:
6.  $a \in (0; 1)$  դեպքում անհավասարումն ունի առնվազն երկու ամբողջ լուծում:

26. Տրված է  $b$  պարամետրով  $3^{\sqrt{x+1}} \leq b$  անհավասարումը:

1. Անհավասարման ԹԱԲ-ը  $[-1; +\infty)$  միջակայքն է:
2.  $b = \frac{1}{3}$  դեպքում անհավասարումն ունի լուծում:
3.  $b > 1$  դեպքում անհավասարումն ունի լուծում:
4. Գոյություն չունի  $b$ -ի այնպիսի արժեք, որի դեպքում անհավասարումն ունենա ճիշտ մեկ լուծում:
5.  $b = 3^\pi$  դեպքում անհավասարման լուծումների բազմությունը պարունակում է ճիշտ 9 ամբողջ թիվ:
6.  $b = 100$  դեպքում անհավասարման լուծումների բազմությունը պարունակում է  $[-1; 15]$  միջակայքը:

### Պատասխաններ

Հ/Հ	1	2	3	4	5	6
1	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
2	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է
3	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է
4	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	սխալ է	ճիշտ է
5	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է
6	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	սխալ է
7	սխալ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	սխալ է
8	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է
9	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է
10	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է
11	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է
12	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	սխալ է
13	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է
14	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
15	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	սխալ է
16	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է
17	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	սխալ է
18	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է
19	սխալ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	սխալ է
20	սխալ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է
21	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է
22	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է
23	սխալ է	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է	սխալ է
24	ճիշտ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	սխալ է	ճիշտ է
25	սխալ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է	ճիշտ է
26	ճիշտ է	սխալ է	ճիշտ է	սխալ է	սխալ է	ճիշտ է

**ԲԱԺԻՆ 2. ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐ****1. Տրված է  $f(x) = 1 - x^3$  ֆունկցիան:**

1. Ֆունկցիայի որոշման տիրույթը համաչափ է 0 կետի նկատմամբ:
2. Ֆունկցիան իր փոքրագույն արժեքն ընդունում է  $x = 1$  կետում:
3. Ֆունկցիան սահմանափակ է:
4.  $(-\infty; -2]$  միջակայքում ֆունկցիան նվազող է:
5.  $f'(4) > 0$ :
6. Ֆունկցիայի գրաֆիկի  $x_0 = 0$  արսցիսն ունեցող կետում տարված շոշափողն ուղղահայաց է  $Oy$  առանցքին:

**2. Տրված է  $f(x) = |x| - 2$  ֆունկցիան:**

1. Ֆունկցիայի որոշման տիրույթը  $[-2; +\infty)$  միջակայքն է:
2.  $x = -2$  դեպքում ֆունկցիայի արժեքը բացասական է:
3.  $f$  ֆունկցիան ո՛չ զույգ է, ո՛չ էլ կենտ:
4.  $f$  ֆունկցիան ունի մեկ մինիմումի կետ:
5.  $f$  ֆունկցիայի գրաֆիկը և  $y = x$  ուղիղը չեն հատվում:
6.  $f$  ֆունկցիայի գրաֆիկը  $g(x) = -\sqrt{x^2} + 2$  ֆունկցիայի գրաֆիկի համաչափն է արսցիսների առանցքի նկատմամբ:

**3. Տրված է  $f(x) = |x - 2|$  ֆունկցիան:**

1. Ֆունկցիան զույգ է:
2. Ֆունկցիայի գրաֆիկը համաչափ է  $x = 2$  ուղղի նկատմամբ:
3.  $x = 2$ -ը ֆունկցիայի կրիտիկական կետ է:
4.  $[-10; 3]$  հատվածում  $f$  ֆունկցիայի փոքրագույն արժեքը 1 է:
5.  $x = 2$  -ը մինիմումի կետ է:
6. Երբ  $|a| < 1$ , ապա  $y = ax$  ուղիղը և  $f$  ֆունկցիայի գրաֆիկն ունեն ճիշտ երկու ընդհանուր կետ:

4. **Տրված է**  $f(x) = (a^2 - a)x + a$  **ֆունկցիան** ( $a$ -ն պարամետր է):

1.  $a$ -ի կամայական արժեքի դեպքում ֆունկցիայի արժեքների բազմությունը  $(-\infty; +\infty)$  միջակայքն է:
2.  $a = 0$  դեպքում  $f(x) = 0$  հավասարումն արմատ չունի:
3.  $a$ -ի կամայական արժեքի դեպքում  $f(x) = 1$  հավասարումն ունի արմատ:
4. Երբ  $a > 1$ , ապա ֆունկցիան աճող է:
5. Երբ  $a = \frac{1 + \sqrt{5}}{2}$ , ապա  $f$ -ի գրաֆիկն արսցիաների առանցքի հետ կազմում է  $45^\circ$  անկյուն:
6. Երբ  $a = \frac{1}{2}$ , ապա ֆունկցիայի գրաֆիկով և կոորդինատային առանցքներով սահմանափակված պատկերի մակերեսը հավասար է 1:

5. **Տրված է**  $y = kx + b$  **գծային ֆունկցիան**, **որի գրաֆիկն անցնում է**  $(1; 0)$  **կետով:**

1. Ֆունկցիան որոշված է ամբողջ թվային առանցքի վրա:
2.  $y' = k$ :
3.  $k + b = 0$ :
4.  $y = -kx + b$  ֆունկցիայի գրաֆիկը համաչափ է տրված ֆունկցիայի գրաֆիկին՝ օրդինատների առանցքի նկատմամբ:
5.  $b > 0$  դեպքում ֆունկցիան աճող է:
6. Երբ  $k = 0$ , ֆունկցիան պարբերական է:

6. **Տրված են**  $f(x) = \sin^2 x$  **և**  $g(x) = x^2 + 1$  **ֆունկցիաները:**

1.  $g$  ֆունկցիան  $(-1; 1)$  միջակայքում աճող է:
2.  $f$ -ը կենս ֆունկցիա է:
3.  $f$  և  $g$  ֆունկցիաների գրաֆիկներն ունեն մեկ ընդհանուր կետ:
4.  $f$  ֆունկցիան  $\left[ \pi; \frac{3}{2}\pi \right]$  միջակայքում աճող է:
5.  $f$  ֆունկցիայի հիմնական պարբերությունը  $2\pi$ -ն է:
6.  $y = g(f(x))$  ֆունկցիայի արժեքների տիրույթը  $[0; 2]$  միջակայքն է:



7. Տրված է  $f(x) = e^x(x^2 - 3)$  ֆունկցիան:

1. Ֆունկցիան  $(-\sqrt{3}; \sqrt{3})$  միջակայքում բացասական է:
2. Ֆունկցիայի գրաֆիկը կոորդինատային առանցքները հաստում է երեք կետում:
3. Ֆունկցիան ունի մեկ կրիտիկական կետ:
4.  $[-3; 1]$  միջակայքում ֆունկցիան նվազող է:
5. Ֆունկցիան մեծագույն արժեք չունի:
6. Ֆունկցիայի փոքրագույն արժեքը հավասար է  $-3e$ :

8. Տրված է  $f(x) = e^x(-x^2 + x + 1)$  ֆունկցիան:

1. Ֆունկցիայի գրաֆիկն  $Oy$  առանցքը հաստում է  $(1; 0)$  կետում:
2. Ֆունկցիայի գրաֆիկն  $Ox$  առանցքը հաստում է երկու կետում:
3. Ֆունկցիան ունի երկու կրիտիկական կետ:
4. Ֆունկցիայի գրաֆիկի  $x = 0$  արագիստով կետում տարված շոշափողը  $Ox$  առանցքի հետ կազմում է  $45^\circ$  անկյուն:
5. Ֆունկցիան  $[-1; 2]$  միջակայքում նվազող է:
6.  $f\left(\cos \frac{\pi}{10}\right) > f\left(\cos \frac{\pi}{9}\right)$ :

9. Տրված է  $f(x) = e^x - x - 1$  ֆունկցիան:

1.  $f(0) = 0$ :
2.  $f$  ֆունկցիայի որոշման տիրույթը  $[0; +\infty)$  միջակայքն է:
3.  $f$  -ը կենտ ֆունկցիա է:
4.  $f'(x) = e^x - 1$ :
5.  $f$  ֆունկցիան աճող է:
6. Ցանկացած  $x$ -ի դեպքում  $f(x) \geq 0$ :

**10. Տրված է  $f(x) = 2^x + 2^{-x}$  ֆունկցիան:**

1.  $f$  ֆունկցիայի որոշման տիրույթը դրական թվերի բազմությունն է:
2.  $f$  -ը կենտ ֆունկցիա է:
3.  $f$  ֆունկցիայի գրաֆիկը չի հատում արսցիսների առանցքը:
4.  $f$  ֆունկցիայի գրաֆիկն օրդինատների առանցքը հատում է  $(0; 2)$  կետում:
5.  $f$  ֆունկցիայի փոքրագույն արժեքը 2-ն է:
6.  $f$  ֆունկցիան  $R$  -ում աճող է:

**11. Տրված են  $f(x) = 3^x$  և  $g(x) = -\frac{2x+1}{3}$  ֆունկցիաները:**

1.  $f$  ֆունկցիան աճող է:
2.  $g$  ֆունկցիան նվազող է:
3.  $f(x) = g(x)$  հավասարումն ունի դրական արմատ:
4.  $y = f(g(x))$  ֆունկցիան աճող է:
5.  $f(x) = g(x)$  հավասարումն ունի ճիշտ մեկ արմատ:
6.  $f(x) > g(x)$  անհավասարման լուծումների բազմությունը  $[0; +\infty)$  միջակայքն է:

**12. Տրված է  $f(x) = 2^x - 1$  ֆունկցիան:**

1. Ֆունկցիայի գրաֆիկն անցնում է կոորդինատների սկզբնակետով:
2.  $(-\infty; 0)$  միջակայքում  $f$  ֆունկցիան նվազող է:
3. Ֆունկցիայի արժեքների տիրույթը  $(0; +\infty)$  միջակայքն է:
4.  $g(x) = 2^{-x} - 1$  և  $f(x) = 2^x - 1$  ֆունկցիաների գրաֆիկները համաչափ են արսցիսների առանցքի նկատմամբ:
5.  $y = |f(x)|$  ֆունկցիան  $(-\infty; 0]$  միջակայքում աճող է:
6.  $f$  ֆունկցիան սահմանափակ է:

13. Տրված է  $f(x) = (x-1)^{\frac{1}{3}}$  ֆունկցիան:

1. Ֆունկցիայի որոշման տիրույթը  $R$ -ն է:
2.  $\left(\frac{7}{8}; -\frac{1}{2}\right)$  կետը պատկանում է ֆունկցիայի գրաֆիկին:
3.  $y = f(x+1)$  ֆունկցիան կենտ է:
4. Ֆունկցիան չունի փոքրագույն արժեք:
5. Ֆունկցիան աճող է:
6.  $f$  ֆունկցիայի գրաֆիկը  $g(x) = -(x+1)^{\frac{1}{3}}$  ֆունկցիայի գրաֆիկի համաչափն է օրդինատների առանցքի նկատմամբ:

14. Տրված է  $f(x) = x^2 + 2x - 15$  ֆունկցիան:

1.  $f$  ֆունկցիայի գրաֆիկը պարաբոլ է:
2.  $x = -2$  կետը  $f$  ֆունկցիայի կրիտիկական կետ է:
3.  $(-1; -16)$  կետում  $f$  ֆունկցիայի գրաֆիկին տարված շոշափողը զուգահեռ է  $Ox$  առանցքին:
4. Եթե  $x \in (-\infty; 3) \cup (3; +\infty)$ , ապա  $f(x) \neq 0$ :
5.  $y = f(x-1)$  ֆունկցիայի գրաֆիկը համաչափ է  $(0; 0)$  կետի նկատմամբ:
6.  $(-\infty; 0]$  միջակայքում  $g(x) = f(|x|)$  ֆունկցիան նվազող է:

15. Տրված է  $f(x) = ax^2 + 2x + \ln 5$  ֆունկցիան:

1. Ցանկացած  $a$ -ի դեպքում  $D(f) = R$ :
2. Ցանկացած  $a$ -ի դեպքում ֆունկցիայի գրաֆիկը պարաբոլ է:
3.  $f'(x) = 2ax + 2\frac{1}{5}$ :
4. Եթե  $a \neq 0$ , ապա  $x = -\frac{1}{a}$ -ն  $f$  ֆունկցիայի կրիտիկական կետ է:
5. Եթե  $a \geq 1$ , ապա  $f$  ֆունկցիայի գրաֆիկն  $Ox$  առանցքը հատում է ճիշտ երկու կետում:
6. Եթե  $a(a+2+\ln 5) < 0$ , ապա  $f$  ֆունկցիայի գրաֆիկն  $Ox$  առանցքը հատում է ճիշտ երկու կետում:

16. Տրված է  $f(x) = x^2 - 2ax + a^2 - 4$  ֆունկցիան ( $a$ -ն պարամետր է):

1.  $a$ -ի ցանկացած արժեքի դեպքում  $f$  ֆունկցիայի գրաֆիկն արսցիսների առանցքը հատում է երկու կետում:
2.  $a = \frac{1}{2}$  դեպքում ֆունկցիայի ածանցյալը  $\frac{3}{2}$  կետում 3 է:
3.  $a$ -ի ցանկացած արժեքի դեպքում  $f$  ֆունկցիան ունի երկու կրիտիկական կետ:
4.  $a$ -ի բացասական արժեքների դեպքում  $f$  ֆունկցիան  $[1; +\infty)$  միջակայքում աճող է:
5.  $f$  ֆունկցիայի փոքրագույն արժեքը ցանկացած փակ միջակայքում  $-4$  է:
6. Եթե  $f$  ֆունկցիայի գրաֆիկն անցնում է  $(0, 12)$  կետով և ֆունկցիան  $[0; 1]$  հատվածում աճող է, ապա  $a = -4$ :

17. Տրված են  $f(x) = x - 1$  և  $g(x) = x^2 - 3x + 2$  ֆունկցիաները:

1.  $f$  և  $g$  ֆունկցիաների գրաֆիկները հատվում են երեք կետում:
2.  $g$  ֆունկցիան  $(-\infty, -5]$  միջակայքում նվազող է:
3.  $f$  ֆունկցիան էքստրեմումի կետ չունի:
4.  $x = 3$  ուղիղը  $g$  ֆունկցիայի գրաֆիկի համաչափության առանցքն է:
5.  $y = |g(x)|$  ֆունկցիայի փոքրագույն արժեքը դրական է:
6.  $g$  ֆունկցիայի գրաֆիկի  $x_0 = 2$  արսցիսն ունեցող կետում տարված շոշափողը զուգահեռ է  $f$  ֆունկցիայի գրաֆիկին:

18. Տրված է  $f(x) = 2^{-\sqrt{x}} - 1$  ֆունկցիան:

1.  $f(\log_2^2 0, 2) = 4$ :
2.  $f$  ֆունկցիայի գրաֆիկը  $y = 1 - 2^{-\sqrt{x}}$  ֆունկցիայի գրաֆիկի համաչափն է կոորդինատների սկզբնակետի նկատմամբ:
3.  $f$  ֆունկցիան սահմանափակ է:
4.  $f$ -ը նվազող ֆունկցիա է:
5.  $f$  ֆունկցիան մեծագույն արժեք չունի:
6.  $f$  ֆունկցիայի գրաֆիկը առաջին քառորդին պատկանող կետեր չունի:

19. Տրված է  $f(x) = \log_5 |x|$  ֆունկցիան:

1. Ֆունկցիայի որոշման տիրույթն է  $(-\infty; -1) \cup (-1; 0) \cup (0; 1) \cup (1; +\infty)$ :
2.  $f\left(\frac{1}{4}\right) = f\left(-\frac{1}{4}\right)$ :
3.  $f$  ֆունկցիայի գրաֆիկը հատում է արսցիսների առանցքը:
4.  $f$  ֆունկցիան ներքևից սահմանափակ է:
5.  $f'(1) > 0$ :
6.  $f$  ֆունկցիան աճող է:

20. Տրված է  $f(x) = \log_2^3 x^2$  ֆունկցիան:

1.  $f$  ֆունկցիայի որոշման տիրույթը  $R$ -ն է:
2.  $f$  ֆունկցիայի գրաֆիկը համաչափ է օրդինատների առանցքի նկատմամբ:
3.  $f$  ֆունկցիայի որոշման տիրույթը և արժեքների տիրույթը համընկնում են:
4.  $f$  ֆունկցիան  $(0; +\infty)$  միջակայքում աճող է:
5.  $f$  ֆունկցիան կարելի է ներկայացնել  $f(x) = 8 \log_2^3 x$  տեսքով:
6.  $Ox$  առանցքին զուգահեռ ցանկացած ուղիղ  $f$  ֆունկցիայի գրաֆիկը հատում է ճիշտ երկու կետում:

21. Տրված է  $f(x) = \frac{\sqrt{1-x^2}}{x}$  ֆունկցիան:

1.  $f$  ֆունկցիայի որոշման տիրույթը  $[-1; 1]$  միջակայքն է:
2.  $f$  -ը կենտ ֆունկցիա է:
3.  $f$  -ը պարբերական ֆունկցիա է:
4.  $(0; 1)$  միջակայքում  $f$  ֆունկցիան նվազող է:
5.  $f$  ֆունկցիայի արժեքների տիրույթը  $R$ -ն է:
6.  $y = f(x)$  և  $g(x) = \sqrt{\frac{1-x^2}{x^2}}$  ֆունկցիաների արժեքների տիրույթները համընկնում են:

22. Տրված է  $f(x) = \sqrt{5 - x^2 + 4x}$  ֆունկցիան:

1.  $f$  ֆունկցիայի որոշման տիրույթը  $[-1; 5]$  միջակայքն է:
2.  $f$  ֆունկցիայի արժեքների տիրույթը  $[0; 3]$  միջակայքն է:
3.  $f'(x) = -\frac{x-2}{\sqrt{5-x^2+4x}}$ :
4.  $f$  ֆունկցիան  $[-1; 3]$  միջակայքում աճող է:
5.  $y = 3$  ուղիղն  $f$  ֆունկցիայի գրաֆիկին տարված շոշափող է:
6. Եթե  $f(x) = a$  հավասարումն ունի երկու արմատ, ապա  $a \in (0; 3)$ -ին:

23. Տրված է  $f(x) = \frac{x+1}{x-3}$  ֆունկցիան:

1.  $f$  ֆունկցիան զույգ է:
